


Pungit

ՀԻՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌՈՒՇԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌՈՒՇԱՆ

SILPP 1969 09 OUISOII PTH

  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
**Ք Ա Ք Յ Ն**  
**ԱՍՍԱԳԻՐ**  
**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՍԻ ԱՐԹԻՍՏԻ**  
 ՎԱՐՁԻ ԽՐԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՆԻ  
 ԽՐԱԳԻՐ  
 Գ. ՍԱՍՈՆԻ  
 ԽՐԱԳԻՐՈՒԹՅԱՆ  
 ԱՆՊԱՄՆԵՐ  
 Զ. ԳԵՂԱՐԻ  
 Տ. ՈՍԿՈՆԻ  
 Բ. ՓԱՔԱԶՅԱՆ  
 Ն. ՊԱՐԲԵՆԻԱՆ  
 Ժ. ԱՐՔԱՐԵԱՆ  
 ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԸ  
 Գ ԵՒ ՊՅԱՆՅԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Ն. ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
- Ա. ՀԱՅԿԱԶ
- ՍՕՍՆԱՑ ՏՂԱՆ
- Ի. ԳԱՌՕՆԷ
- ...
- Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
- Բ. Փ.
- Ն. Պ.
- .....
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութեամբ հասցէ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռագրային բիւ. 296898

# Բարձր

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

Օ Դ Ա Ս Յ Ա Ս 1969

ՊԷՏՐՈՒՔ

### Ն. ՊԵՏԻԿՈՒՇԵԱՆ

## ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՄԷՁ

### ՄՈՒՏՔ (ԵՂԱՆԱԿՆԵՐ)

Փետրուարի վերջերն էր որ զես փոխադրեցին հիանդանոց:  
Կառավարութեան մէջ, նոր ու անկասկա կառավարութեան մը պատ-  
կանիլ է ըլլալ անկողնակալը հիանդանոցի: Օրէնքները տարբեր, կանոն-  
ները տարբեր, բարձրը տարբեր:

Մտանք մարտի մէջ, մտանալով Մարտ ամսուան, մերձենալով Գար-  
նան, Գուշէ ալ մտանալով Մահուան: Մէկը ըսած էր.

— Ա՛լ ետ չի գտնար...

Պիտի գտնամ, մտաբերով որ ըսողը իր ետեւը միւս կողմը դարձու-  
ցած չըլլայ, որպէսզի կարենայ շիկնիլ, զարմանալ: Գանի անգամ զարմա-  
ցուցած եմ մարդիկը Ատուծմով:

Ե՛րբ կու գայ Մահը... Բարեբախտութիւն է այս ազիտութիւնը:  
Ե՛րբ կու գայ Գարունը... Այդ իսկ ո՛չ որ գիտէ: Եթէ նոյնիսկ գայ, կը  
մեռ՞յ. այդ եւս ո՛չ որ գիտէ: Ձմեռը կեղծ նահանջներ կ'ընէ, ու Գարնան  
վրայ կը յարձակի յանկարծակի: Ձմեռն ու Գարունը երկու գունդեր են,  
որ մեզքէ մեռք կ'առնեն ձրունայի հիւսիսային կէտը: Երբ կը կարծուի թէ  
Գարունը գրաւած է ամէն կոյս, ահա, Ձմեռը, որ մէկ գիշերուան մէջ կը  
վերադարձէ (կամ նոր բառով «կ'ազատարէ»), Գարունէն գրաւեալ գետին-

ները, որոնց բուսաստաններն ու բուրաստանները եւ պարտէզներն ու պլաս-  
 զաստանները կ'աւերէ, նման վանտալի: Գարնան գունդը անշուշտ կը ջա-  
 նայ վերագրուել իր կորսնցուցած հողամասերը, բայց իբր զինուորականները  
 կը բաղկանան նրբների նորավարժներէ: Ժինչդեռ Ձմեռուան լեղէնը կազ-  
 մըած է մարտընտիր ռազմիկներէ: Մարտէն ժինչեւ Յունիսի սկիզբները՝  
 Ձմեռն ու Գարունը ձեռքէ ձեռք կը խլեն վերին կէսը Փրանսայի: Մինչդեռ  
 վարէ կէսը կը ծիծաղի ծաղիկներու մէջ:

Անգամ մը, աշխարհագրութեան դասի մը ընթացքին, մեր շատ սի-  
 բեւի ուսուցիչը, Եւալալ Փանոսեան՝ ըսաւ.

— Եթէ ձմեռնափերջին, մէկը ճամբորդէ Հայաստանի հիւսիսէն դէպի  
 հարաւ, կրնայ տեսնել տարիին չորս եղանակները.— Ձմեռ, Աշուն, Ամառ,  
 Գարուն...

Տղաքս իբրբու նայեցանք: Իրակա՞ն էր: Բայց զեղեցիկ էր, որով  
 պատշաճ Հայաստանի:

Յամենայնդէպս մտանք Մարտի մէջ, որով թօռ է Գարունը: Ապա,  
 Ամառը: Այս երկուքը եղանակներ են շատ սիրելի: Կը զարմանամ անոնց  
 վրայ, որոնք կը նախընտրեն Աշունն ու Ձմեռը: Անոնք մարմնով ու մա-  
 մոնայով հարուստներն են կամ ցնորամարդիկ: Աշունը համակ տիրութիւն  
 է, ըլլալով չըջն ցուրտի, տերեւաթափի, զերեզմանատունի: Այլք. գնդիկ  
 Աշունն կ'անուանեն այդ եղանակը: Թո՛ղ հաւաքեն ոսկիները, տաքնալու  
 համար ձմեռը տունին մէջ կամ զերեզմանատունին: Անշուշտ Ձմեռն ալ  
 ունի իր ձիւնակազմ զեղեցկութիւնը, սակայն, տուած տառապանքները  
 տրտանեան են: Հաւաքոյն է Ձմեռն զեղեցկութիւնը ըմբռնինել նկարներով:  
 Հարցուցէք մահուան հետ առևտրական գործ կամ այլ գործառնութիւն ու-  
 նեցողներուն, եւ անոնք ձեզի պիտի ըսեն որ մարգոց մահերը առաւելա-  
 պէս կը պատահին աշնանավերջէն ձմեռնամուտին, անգամ մըն ալ ձմեռ-  
 նափերջին: Մեռելաբարձներուն չըջնն է ոսկի:

Գարնան մէջ կան Ապրիլն ու Մայիսը, իսկ Ամբան մէջ Յունիս եւ Ս-  
 զոսոսս ամիսները, որոնք զբախտային են ու արքայական:

Ճաշակի, խոսնուածքի, առողջական վիճակի խնդիր է սիրել Աշունն  
 ու Ձմեռը:

Հայրենիքի Աշունն ու Ձմեռը, հաւատացէ՛ք, պիտի տանէի դժուա-  
 րութեամբ, բայց որոշ հաճոյքով: Սակայն, ատելի Աշունն ու Ձմեռը ապ-  
 բել օտար հողի վրայ, եսպատիկ է անտանելի:

Թո՛ղ գալ, արագօրէն դայ Գարունը այս տարի: Թո՛ղ զուարթման  
 հիւանդանոցը, Թո՛ղ ժպտին հիւանդները, Թո՛ղ ըլլան լուսավառութիւն-  
 ներ յոյսի:

Գարո՛ւնը... կուսական երիտասարդութիւնը Բնութեան:

Փրանսայի մէջ հիւսիսէն հարաւ ճամբորդելու պէտք չկայ, տեսնե-  
 լու համար չորս եղանակները: Կը բաւէ Փարիզի կամ մէկ տրուարձանին  
 մէջ ըլլալ, միակ օրուն մը մէջ տեսնելու համար չորս եղանակները, բայց  
 ոչ կարգով, այլ խառնիխառն: Երբեմն օրական երկու անգամ գարուն, ե-  
 րեք անգամ ձմեռ, քանի մը անգամ աշուն, թի՛չ մըն ալ ամառ: Մարդ չի  
 գիտեր, թէ ի՞նչպէս զգեստաւորուի: Առնէ՞ վերարկու, առնէ՞ բրդեղէն,  
 առնէ՞ անձրեւանոց...

Գեղեցիկ է Գարունը... Կ'մ' այն է, որ Գարունը կը մտնէ կոյսերուն  
 մէջ ու գանձը կը զեղեցկացնէ, եւ կամ կոյսերն են որ իրենց զբախտային  
 թարմութեամբ ու զեղեցկութիւնով կը մտնեն Գարնան մէջ, եւ կը զեղեց-

կացնեն զսոյն: Եւ կամ երկուքն ալ ճշմարիտ են, ու ատոր համար Գարունն ալ, Գեղուհիներն ալ թէ՛ զեղեցիկ են, թէ՛ զեղեցկացնող:

Շատոնց է որ կորսնցուցած ենք զտարիւն Գարունը, որ հիմա կը հե-տեւի երիտասարդներու նորածնութեան, որ է վարիւթէ: Մէկ օրուան մէջ մասեր ամէն մէկ եղանակէ, մէկը միւսէն ապաշնորհ:

ԵՐԿՈՒ ՇԵՆՔԵՐ

Բազմաթիւ շէնքերու մէջ, այս հիւանդանոց զողաքին, երկու շէնքեր յատկացուած են թոքազիտութեան: Մեր շէնքը կը նմանի միջնադարեան կառուցութիւն: Այրերը վարն են, կիները՝ վերը:

Մեր մէջէն մէկ սրահներուն մէջ, տիւ եւ գիշեր կայ հազահանդէս կամ համերգ հաղի, ղեկավարութեամբ Մահուան: Համերգը կը սաստկանայ, երբ հիւանդները կը գտնուին վերձակի տակ: Կան պարիթոն կամ պաս հազացողներ: Ես կը պատկանիմ քննադատութեան խումբին: Երբեմն նոյնիսկ կը մե-նեցնեն: Ամէն մէկ երգիչ զժպտի է իր երգիչ ընկերներէն: Արդիւնք չէ նա-խանձի, այլ անտանելի աշմուկի: Հազահանդէսը մերթ ապաւորութիւնը կը թողու քայլերգի մը, որ որոշ անձեր կ'առաջնորդէ տեղ մը տխուր, ան-ցանկալի:

Անկողնիս զովի պատահանէն կ'երևին բազմաթիւ ծառերու կմախ-ները, նաև վարիչիսն երկինք մը (հակառակ մայրաքաղաքէն բաւական հեռացած ըլլալնու), որ սեւի ու դեղինի խայտառակ խառնուրդ մըն է:

Կմախացած ծառերուն վրայ նստած է Մանգաղակիրը, ու կը նուա-զէ, իրեն կանչելով քանի մը կախարչուածներ:

Հիւանդանոց մտած երկրորդ օրս, միջօրէնն տուջ այցելեց կաթո-ղիկէ կրօնատար մը, երիտասարդ, ու յայտնեց իր ինքնութիւնը:

Ապա, հարցուց.

- Ի՞նչ բանի մասին կը մտածէք...

- Մէմանթօ մարի...

- Միայլ: Մոռցէք մահը: Յիշեցէք կեանքը: Ձատիկը մօտ է. ասօր Ս. Յարութեան: Եւ անոր հետ լոյսն ու ջերմութիւնը: Գարնան հանդէս-ները եւ հարսնետոները: Յնժութիւն, վերածնունդ, կեանք... Մի՛ լքէք Հուսաւորը, որ չլքուիք Յոյսէն... Յաջորդ հանդիպումիս ձեզ աւելի զօրա-ւոր պիտի տեսնեմ...

Մօտ էի փղձկելու, մօտ էին աչքերս լեցուելու, մօտ էի կրօնատարը զրկելու եւ համբուրելու:

Մեր շէնքակի զովի շէնքը իր արդիական ճարտարապետութեամբ կը ժպտէր ինձի: Գիտէի որ հոն պիտի երթամ: Ըստած էր: Շէնքը շինուած է շէնութեամբ ու չքեղութիւնով:

Ինձի խոստացուած արքայութիւնն է ի մէջ հիւանդանոցի, իրական արքայութիւն մը, որուն կը տեսնեմ արտաքին մասը, իսկ ներքինը պիտի վայելեմ ի մօտոյ:

ՀԻՒԱՆՈՒՆԵՐԸ

Ամէն տարիքէ, ամէն ազգէ, ամէն ասպարէզէ: Ոմանք կը փորձեն երգել: Իրենց արտաբերածը հազ մըն է այլան-

դակորէն եղանակաորում: Ուրիշներ կը փորձեն խնդալ, եթէ մեռեալ մը կարենար՝ այդպէս պիտի խնդար. աւելի խօսուար հազ, քան թէ խնդուք: Բոլորն ալ կը ծխեն, այսինքն հազը կը հասցնեն հասունութեան:

Կան որ գոհ են՝ գտնուելով մեկուսացած միջնաբերդի մը մէջ, որ կը մաքառի մահուան դէմ: Գոհ են որ հետու են իրենց սենեակէն կամ տունէն, ինչպէս նաեւ հետու են գրասենեակէն կամ գործատունէն: Հանգիստ են: Մախ շունին գրեթէ: Բացի ծխախոտէն: Ատկէ զատ, ընկերային ապահովութեան իրենց կը վճարէ օրական որոշ դումար մը, որ չէ արհամարհելի: Ինծի նման ընկերային ապահովութիւն չունեցող չկայ: Գրողը ազատ արուեստեան է, եւ կը նկատուի ապրուստը մեծապէս շահող նման փառասերի, բժիշկի, ատամնարոյժի, ճարտարապետի, ճարտարագէտի, եւայլն: Գրողը, հայ դրօշն ալ վերոյիշեալ ջոջերուն կարգին մէջ է: Հիւանդանոց մտնելու շնորհ մըն է, զոր կը պարտի ծանրացած վեճակիս, մասնագէտին խղճատութեան եւ ասիսքանք Փրանսուհիի մը անզուսպ աջնուութեան:

Հիւանդներ ալ կան, որոնք զժգոհ են այս մենաստանին մէջ գտնուելուն, քանի որ զրկուած են որոշ ազատութիւններէ, մասնաւորապէս դինիէն, որուն կաթիլը կարելի չէ դտնել հաստատութեան մէջ: Գուրդն բերել տան ալ արդիւում է խոտիւ: Եւ Հիւանդներ կան՝ որոնք ակամայ կը մեղանչեն, բացակայելով բազումս հանապազօրեայ, անվերջ պատարագներէն:

Աշխարհ միշտ զոհերու եւ զժգոհներու խոռոչն է:

Կան տխրանեան հիւանդներ, տկար թոքերով երիտասարդներ ալ պակաս չեն, քանի որ թոքային Հիւանդութիւնները կը նախընտրեն թոքերը դեռատի անձերու:

Մտերմութիւնները, որով խոստովանութիւնները կը հասունանան ծըխարանին մէջ: Հիւանդներ կան՝ որոնք կը վախնան որ կը մեռնին հիւժարտէ: Անոնց թիւը պզտիկ է: Կան ալ որ կը մտածեն քանի մը տարի հանգիստ ապրել, շնորհիւ, այո՛, շնորհիւ հիւժարտին, երթալով Հիւանդանոցէն օսմա կամ տուն հանգիստի: Եւ նոյնիսկ դրամ դիպել: Հիւժարտը անպամ կարելի է օգտագործել, երբ մարդ ունի ընկերային ապահովութիւն, ու կ'ապրի ծրանսա կամ Գերմանիա (անշուշտ Արեւմտեան):

ՃԱՇԱՍԲՈՒՆ

Եթէ դուրսէն մէկը կէտօրին կամ երկրոյեան ժամը վեցին մտնէ մեր ճաշատանը, ուր կը ճայնեն երեսուներկու հիւանդներ, պիտի կարծէ, թէ կը գտնուի դժանոցի մէջ:

Ճաշատանին մէջ կան հրաբուխներ ու երկրաշարժներ, որով թընդիւններ, որոտումներ, կանչեր, կործանումներ: Բայց մահ չկայ, այլ ահաւոր ժխոր, իրարանցում, հարահրոց:

Հեռատեսիլն ալ կը գործէ իր անսպառ տիմարութիւններով:

Կարծէք արգիլուած է ցած կամ սովորական ձայնով խօսիլը: Ամէն ոք կը պտայ, կ'երեւի թէ մռնչելը մարտողութեան կը նպաստէ: Ու կատակներ ձեռքի, նաեւ ոտի: Փորձեր կուփամարտի: Կը հայհոյեն խնդալու համար: Հազերը հազիւ կը լսուին: Հեռատեսիլէն խօսող շատախօսներուն եւ անշոքր երգիչներուն ձայնը խեղդուած են:

Պօսքը, երգը, պարը, մարզանքը ճաշող դիւահարներուն կը պատկանին:

Փրանսական Ակադեմիի անճահապատիւ անդամները եթէ զան ու լսեն այս հիւանդանոցին, մասնաւորապէս ճաշարահին մէջ իրենց նըրանազ Փրանսերէնը, զայն սիրտի գտնեն շատ կարծրացած, կոշտացած ու դարձած անճանաչիլի: Ընչէ թողերուս պէս: Չարմանալին այն է, որ Փրանսերէնը հիւանդանոց մտնելով բրտացած է:

Ամէնէն հանդարտ սեղանը մերն է, ուր կը ճաշեն երեք հիւսիսային արքեիկեցի Արարներ եւ ես: Անոնք կենցաղապէս են, ընկերական, օրինակելի: Տեղացիները դասեր կրնան առնել ասոնցմէ: Տեղացիները տունին մէջն են իրենց, ու անփոյթ հանդէպ ամէն բանի: Իսկ Հիւսիսային Արքեիկեցիներուն վայելուչ վարուելակերպը ինքնածին է: Անոնք զիս կը սիրեն ու կը յարգեն, քանի որ գիտցան որ արարական տառերով կը կարդամ ու կը գրեմ, քանի որ իրենց ըսի արարերէն քանի մը խօսք:

- Ինչալլահ ... էյվալլահ ... Ալլահ էէրիմ ... էլիւստիլլահ ... Սալամ...

Ու դժոխքը կը շարունակուի...

Դիտողութիւն չկայ ո՛չ ներսէն, ո՛չ դուրսէն: Դժոխքը անկախ է:

Ու կը ճաշեն այդ աղբիւղէն աղմուկը եւ կը մարսեն ալ:

Եթէ ազմկարարներու ամէնէն կատաղիին պէտք ըլլայ մրցանակ մը տալ, զայն արդարօրէն յանձնելու է կերակուր բաժնող մեզերային, որ իւրաքանչիւր պնակի հետ կաթնայ մը աղմուկ կը յանձնէ ճաշող հիւանդին:

Օր մը, առաւօտ կանուխ, վէճ մը ունեցած էի այդ օձի կանանչ ալքերով կնակերպին հետ: Նոյն օրը, կէսօրուան ճաշը դեռ չաւարտած, աթոռ մը առաւ, եկաւ քովս նստաւ, աչքը աչքիս մէջ սպասելով խօսքի մը ինձմէ: Ու ես ըսի.

- Աս առտուան մեր վէճէն ի վեր, ամէն մարդ կը կարծէ, թէ կ'ատէք զիս. մինչդեռ, գիտեմ, կը սիրէք զիս:

- Այո՛, կը սիրեմ: Իսկ զուրջ ալ զիս չէ՞ք սիրեր...

- Ո՛չ, ձեզ չեմ սիրեր. ձեզ կը պաշտեմ: Ընչէ ատոր համար հեռացէք ինձմէ, որովհետեւ պաշտելի մը դիցուհի մըն է, որ մնալու է անմերձեանալի:

Ըսելիք չունեցաւ ու հեռացաւ:

Մանաւանդ որ ճաշարահին մէջ նոր ուսմը մը պայթած էր աղմուկի: Հեռատեսիլէն բաղաձայնուհի մը կ'երգէր, ու հիւանդները անոր կ'ընկերանային նուազախումբով, որ կը բաղկանար պնակէ ու պատառաքաղէ:

Ապա, սկսան թիւել խնձորները:

Եթէ հեռատեսիլէն մէկը խօսի, մէկը բառ լսողը կարելի է շնորհաւորել: Պօսողը կ'ենթարկուի աղմուկի համազարկի:

Իսկ քաղաքական լուր մը տրուած ատեն, ճաշարահը պարզած կ'ըլլայ սեւ դրօշ մը անտեսանելի: Անիշխանութիւնը յայտարարուած է:

ՀԻՒԱՆԴԱՆՈՅ, ՅԻՄԱՐԱՆՈՅ

Փարիզ իր շրջակայ մերձաւոր ու հեռաւոր արուարձաններով՝ ունի հարիւրաւոր հիւանդանոցներ, մէկը միւսէն խոշոր, ու միւս ընդարձակ-

ւող նորանոր տաղաւարներով, յար օժտուելու գիտութեան կատարելագործութիւններով: Եւ յաւատ հիւանդներով լի: Այնքան լեցուն, որ երբեմն շարաքներով հարկ է սպասել հերթի: Մինչեւ որ մէկը մեկնի (կամ մեանի) ու ազատ ըլլայ անկողին մը:

Երկիրներ կան՝ շատ աւելի ընդարձակ Ծրանսայէն, որոնք միայն փարիզեան շրջանի հիւանդանոցներուն կէս զառորդին չափ շունին տուներ գծութեան:

Հետու շէ այն օրը, երբ ամբողջ Փարիզը պիտի ըլլայ հիւանդանոց, ու իր բոլոր գուռներուն վրայ պիտի արձանագրուի.

- Փարիզ՝ հիւանդանոց ամենայնի:

Կարծէք արդէն կը տեսնուին պատրաստութիւններ— հազը փոխադրելով ալլուր, շէնքերուն մրտած երեսները քերթելով, օղը մաքրելով, չքացնելով աղմուկը, կառքերուն համար փապուղիներ բանալով, եւ շէնքի Բաղաքը վերածելով արջայութեան նախատօնակի:

Եւ երբ օր մը մաս մը մարդիկ գրաւեն Լուսինը, ու միւս կողմէ ալ հրատարակները գրաւեն մեր Երկիրը, վստահաբար, բոլոր երկիրներու սահմաններուն վրայ մեծատառ պիտի արձանագրեն.

- Իննթանոց:

Կամ նուազագոյնը.

- Յիմարանոց:

ԳԱՐՈՒՆ ՈՒ ՄԻՏՔ ԵՒ ՄԱՐՄԻՆ

Գարունը երթուաբանի մէջ է: Մերթ յաղթական է, մերթ պարտաւ: Վերջնապէս զար Գարունը եւ շուտ զար: Անցնէի սա վտանգաւոր գօտիէն:

Գարունը զար ու վերիներ աղատադէր սա զօրանոցէն կամ սկզբաւորանոցէն:

Եւ ըմպէի արեւ, պսպակով անապատականի, Ըմբռնէի լոյսը լատեսութեան, որուն կարօտ են նոյնիսկ մշտագարուն հոգիները:

Վայելի ծառերուն ծափերն ու ծիծաղները, շնչի բուրումնաւէտութիւնը ողջ բնութեան, որ վերածուած ըլլայ անհուն ծաղկատանի:

Ոչինչ այնքան գեղեցիկ է՝ որքան օր մը արեւշատեան գտնուիլ պրտապատանի մը մէջ, ու լսել ծնծղաները ծառերուն, ճռուղիներէն թռչուններուն, խոխոլը ստուակի մը, իբրեւ նուագարաններ, ընկերակցող Հայրուհի մը խոսիլ ձայնի, որ ունկնդիրին աչքերը լեցնելով կ'ըսէ սա փիլիսոփայական խօսքերը.

- Եսր, արի, տուն արի, խոսի մի մնայ,  
Էս աշխարհի բաները ինձի, Էնզի չի մնայ...

Ո՛չ ոքի չի մնար. չի մնար ո՛չ ոքի  
Ո՛չ ոքի պիտի չմնայ. պիտի չմնայ ո՛չ ոքի...

Ամէնքս ալ պիտի անցնինք ու կորսուինք:

❖

Վերադառնայի բնակարանս, որուն կարօտախաղ ունիմ, նուիրուելու համար մորթիւններուս— կարգալ ու գրել: Հայերէնագործել: Մինչդեռ հիմա, պաշարուած, յորդած, ողորուած եմ Փրանսերէնով:



Կինս ու քննիս պէտք է այցելեն, իրենց Հետ բերելով Հայերէնը :  
Ա՛յ ոք կայ, հետը բառ մը խօսելու համար : Սով կայ Հայերէնի : Ու  
կը մենախօսեմ, եւ մարդիկ ինծի կը նային զարմացած եւ որոշ կասկածով :

••

Նայի՛ի Հիւանդանոցին թոքազիտական նախադատրաստական տաղա-  
ւարը մտնելուս երկրորդ կամ երրորդ օրը կը փափաքէի գրիչը ձեռք առ-  
նել : Սակայն, չկրցայ : Նոյնիսկ նամակներու պատասխանելու կարողու-  
թիւնը կը պահսէր : Եարթներէ ի վեր որեւէ փոքրիկ շարժումի զարձած  
էի անընդունակ : Վտուած լուցիչ մը մարելու շափ իսկ շունչ շունէի :  
Բաւական նամակներ մնացին անպատասխանի, նամակագիրները թո՛ղ ըլ-  
լան ներողամիտ : Միտքս չէր որ անկարող էր. տկարը մարմինս էր : Մտքի  
կարողութիւնը անբաւական է գործելու համար . անհրաժեշտ է մարմնա-  
կանն ալ : Մարմինը միշտ մտքին օժանդակն է, եւ այնպէս մը շինուած է  
որ կարենայ շաւապէս ծառայել մտքին, որ մենաստէրն է հուժեան : Գրե-  
լիքներս ու նամակներս խմբազրած էի ու յանձնած յիշողութեանս, . սա-  
կայն, դանուկ թուղթին յանձնելը գործ էր, իսկ ես զարձած էի անընդու-  
նակ նոյնիսկ որեւէ փոքրիկ շարժումի : Մարդկային մարմինը, մասնաւոր-  
ապէս մասնեքը շինուած են՝ համաձայն մտքին կարողութիւններուն :  
Մատները մէյ մէկ վարպետ արհեստագործներ կամ արուեստագէտներ են,  
որոնց ամէն մէկէն ճարտարութիւն կամ հանճար կը հոսի :

Հիւանդութիւնը կ'անգամայուծէ ոչ միայն մարմինը, միաքն անգամ :  
Հիւանդութիւնը մահուան շուքն է մեր մէջ :

••

Մարդկութիւնը բազմատեսակ հիւանդներ ունի : Ամէնէն վտանգա-  
ւորները, վարակիչները քաղաքագէտներն են : Ամէն շարիք կարելի է սպա-  
սել անոնցմէ : Թէ՛ իրենց երկրին, թէ՛ մարդկութեան համար : Քաղաքա-  
գէտները (հաղուազիւտ բացառութիւններէ զատ) փառամուլ են, այսինքն  
ոճայնամիտ, այսինքն գուրկ առողջ խելքէ ու մանաւանդ խիղճէ : Եւ աշ-  
խարհը այս վտանգաւոր հիւանդները կը կառավարեն, փոխանակ շղթայա-  
կապ նետուելու նկուղներու մէջ :

Կ'արժէ, փորձի համար, բոլոր երկիրներու կառավարութիւնները  
վստահիլ բանաստեղծներուն : Անտարակոյս վերացական չեղողներուն : Վի-  
րացականները եթէ կարենան կառավարել իրենց գրիչը՝ արդէն կը համար-  
ւին յաղթական : (Մասն չի պատկանիր բանաստեղծներու, այլ կը պատկա-  
նի բանասպաններու խումբին) :

**ԿԱՐԾՐԱՅՈՒՄՆԵՐ**

Քոքաղէտ մասնագէտ բժիշկը, Տոքթ. Ա., այնիւ անձնուորութիւն  
մը, բնակած արուարձանիս տիւրանսէրին մէջ, քննելով թոքերուս քաւիտ  
լուսանկարները եւ տեսնելով վիճակս՝ այլալլած վճռեց .

— Զեք անմիջապէս պէտք է փոխադրել Նայի՛ի թոքազիտական հիւ-  
անդանոցը, ուր կը գործեմ : Դժբախտաբար, պիտի սպասէք քանի մը օր :  
Զեր թոքերը կորսնցուցած են իրենց առաձգականութիւնը : Զափազանց  
կարծրացած են :

- Տոբթէօր,- ըսի,- ես չէ, բայց թոքերս հետեւած են նորաձեւութեան: Ինչպէս գիտէք, կարծրացումը պետական անձերու, ինչպէս նաև սենտլիքաներու եւ ուսանողներու նորութիւնն է:
- Անոնք կը մնան մարդկութեան, մանաւանդ իրենց երկրին: Իսկ դուք կը մնասուիք ձեզմէ:
- Ուրեմն հիւանդանոց:
- Զներ տեղը հոն է հիմա: Իտէալ վայրը թոքային խնդիր ունեցողին:

••

Երբ դուրս ելայ, յիշեցի բժիշկ բարեկամի մը խօսքերը, ըսուած առաջին աշխարհամարտի ընթացքին, թրքական զինուորական հանգստավայրի մը մէջ:

- Աս անիծեալ պատերազմէն ետքը, անպատճառ պիտի տիրանանք Հայաստանի: Միտքս դիւշ մը հիմնել ու պիտի պետ եւ բժիշկ ըլլալ է: Կարգ մը ծանօթներ պիտի հրաւիրեմ որ հաստատուն նորաշէն գիւղը: Առաջին պետական-ազգային հաստատութիւնը պիտի ըլլայ ո՛չ դպրոց, ո՛չ ալ եկեղեցի: Հիւանդանոց մը, որ իր մէջ պիտի ունենայ մատուռ ու դըպրոց: Երբ գիւղը մեծնայ, պիտի շինուի դպրոց մը: Երբ աւելի մեծնայ՝ եկեղեցի մը: Իսկ երբ պիտի աւան ըլլայ, պիտի շինուի թատրոն մը, քանի մը սրահներով, ժողովի, դասախօսութեան ու հաւաքովի:

Գծրախոտարար, հայոց բախտը կարծրացաւ, ու Հայաստանէն նահանջ մը տուին մեզի, եւ կէս դար է որ կը սպասենք ճաշին, որ չի դար: Եւ որքան դժուար է ճաշի սպասելը: Բայց հայութիւնը համբերութեան հանճարը ունի:

Փա՛ռք Աստուծոյ, իր հանճարը կարծրացած չէ:

ՆՆԻՔԻՆ ԲԺԻՇԿԻՆ ԼԵՏ

Հիւանդանոցի ներքին բժիշկը իր ձեռքով քաշեց թոքերու ետեւի կողմի լուսանկարը: Առջևի մասը քանիցս լուսանկարուած էր: Լուսնին մէկ երեսին պէս անձանօթ էր թոքերու միւս կողմը:

Ապա, քննեց զիս մանրամասնօրէն ու ըսաւ հարցումներ, տեղեկահարու համար հիւանդութիւններու կենսագրականներուն:

Ես ալ իրեն ուղղեցի հարցումներ: (Յայտնապէս կ'երեւէր, թէ ժամանակ ու տրամադրութիւն ունէր զրոյցի):

- Տոբթ. Ա. ձեզի համար ըսաւ թէ դրագէտ էք: Թէ ծնած էք Իսթանպուլ:

- Ներողութիւն, Իսթանպուլ ծնած չեմ: Ծնած եմ Կոստանդնուպոլիս: Իմ ծնած ու այնտեղ սպրած ատենս, քաղաքը կը կոչուէր Constantinople, ամբողջ աշխարհի կողմէ: Եւ պոլսեցին ու իսթանպուլեցին տարբեր տիպարներ են: Քաղաք մը երբ կը փոխէ անուն, կը փոխէ նաև ազգայնակերպ, մտայնութիւն, կարծիք, ճաշակ եւ այլ բաներ: Ռուսիոյ նախկին մայրաքաղաքը կը կոչուէր Սէն Բէթէրսպուրկ, ապա կոչուեցաւ Բէթերսկրատ, ու վերջապէս, անուանուեցաւ Լենինկրատ: Քաղաքը նոյնն է, սակայն, ունի երեք տեսակ տիպարներ, որոնք բոլորովին տարբեր են իրարմէ:

- Ուրեմն ծնած էք Constantinople, եւ աղպութեամբ...

– Հայ եմ: Միայն ու միշտ Հայ: Բայց Հայ մը, որ, դժբախտաբար, չէ տեսած Հայաստանը: Բացառութիւն մը չեմ ես: Միլիոնէ շատ անելի Հայեր կան՝ որոնք չեն արժանացած Հայաստանը տեսնելու բախտին:

– Հայերը զբիստոնեա՞յ են...

– Հայաստան եղաւ առաջին պետութիւնը, որ պաշտօնապէս պետական կրօն հռչակեց զբիստոնէութիւնը: Հայերը զբիստոնեայ եղան Յոյներէն ու Հռոմէականցիներէն առաջ: Ետ անելի ճիշդը ըսելով՝ Հայերը արդէն զբիստոնեայ էին, աշխարհ պաշտ առաջ Յիսուսի:

– Այդ ի՞նչպէս եղած է...

– Գրիստոնէութիւնը սկիզբ է, եղբայրութիւն է, բարութիւն է, աշխատութիւն, ազնուութիւն, շինարարութիւն, օգնութիւն է: Հայերը այդ բոլոր առաքինութիւնները ունէին վարդապետին ծնունդէն դարեւ առաջ: Իսկ զբիստոնէութիւնը ընդունելէ ետքը, Հայերը իրենց ուրիշներէն առաջ, անկեղծանոցներով ու հիւանդանոցներով (հովանաւորուած թագաւորներու, թագաւորներու, իշխաններու եւ իշխանուհիներու կողմէ) ցոյց տուին, թէ զբիստոնէութիւնը միայն աղօթելի չէ, այլ բժշկելի: Այո՛, բժշկել մարմինն ալ, միտքն ալ, հոգին ալ: Հայերը միշտ ու միշտ զբիստոնեայ եղած են, քանի որ ուրիշին հացը չեն խլած, ուրիշին տունը չեն քանդած, յարիւր չեն ըրած ո՛ր ոքի: Իրենց պատերազմները եղած են ինքնապաշտպանութեան կռիւներ, դոյաւարտներ, եւ իրենց բռնած զերիները, վերջնապէս հաստատուած են Հայաստան, հիանալով Հայերուն եւ անոնց Հայրենիքին գեղեցկութիւններուն:

– Ո՞ւր է Հայաստանը...

– Ետեւեր տեղար են աշխարհադրութեան մէջ: Սակայն, քաջ եղողներէն շատեր ալ չեն գիտեր, թէ ո՛ւր կը գտնուի Հայաստանը երկրագունտիս վրայ: Այնտեղ, ուր, դրախտն էր, ըստ Հին Կտակարանի: Այն դրախտը, որ վերածեցին դժոխքի կարգ մը մարդակերպ գայլեր: Հայաստանը երկիրն է Արարատ լեռան, ու կը դառնուի Հարաւային Կովկասի ու Արեւելեան Փոքր-Ասիոյ մէջ: Ներկայիս մանրանկար երկիր մըն է, եւ Արարատը անպամ իր սահմաններուն մէջ չէ: Բայց հակառակ բոլոր միջոցներու, շնորհիւ լեռնային օդին, սակաւակերութեան եւ անընդհատ աշխատասիրութեան, մեր լեռնականները կ'ապրին հարիւր տարի: Եթէ զիրենք քննարկեն վիճակի մէջ թողուն, պիտի ապրին շատ անելի: Վերջապէս, Հայաստանը ճանչնալու համար, հարցուցէք երկիրները ու ժողովուրդները ճանչցող աշխարհագրագետ մը, թէ ո՞րն է այն աշխարհամասը, որ վնասօրէն գնդեցիկ է, որ լիճերու եւ լեռներու, գետերու եւ դաշտաններու գլուխ-գործոցն է, որ, վերջապէս վայր է վայելքի: Ու միաժամանակ զժողովուրդը ու պատերազմը գործ է այնտեղ ապրելը: Միթէ ոչխարներու հօտը հանդիստ կըրնա՞յ ընել, երբ պաշարուած է դայիերով: Հիմակ ալ ես ձեզի բան մը պիտի հարցնեմ, խնդրելով որ պատասխանէք անկեղծօրէն:

– Ի՞նչ է տեսնենք...

– Իննեցիք զիս, ծանօթացաք Ֆիլիքսիան կենսադրութեանս, անցեալին ենթարկուած գործողութիւններուս, թոքերուս հին ու նոր լուսանկարներուն: Կուզէի գիտնալ, թէ վերիվերոյ դէռ քանի՞ տարի կրնամ ապրիլ նուազագոյն կամ առաւելագոյն շափով...

– Յիսուն տարի:

– Յիսուն տարի: Ի՞նչ է, սոքքէօր:

... - Գի՞նչ է... Ես կատակելով խոշոր թիւ մը նետեցի, դրեթէ չըլլա-  
ւիք բան մը, ու դուք զի՞նչ կը գտնէք...

- Մարդու մը բուն իրաւունքը ճիշդ հարիւր յիսուն տարի է: Այս  
մէկը հաստատուած է ջախջախիչ փաստերով՝ գիտութեան կողմէ: Եթէ  
այդքան չենք ապրիք, պատասխանատուները մարդիկն են, իրենց ստեղծած  
փոթորիկներով յուզումի, կործանարար մոլութիւններով, պատերազմե-  
րով:

- Բայց հիմա, երբ լրջօրէն հիւանդ էք, ի՞նչ կ'ըլլայ ձեր վիճակը,  
եթէ այսքան մըն ալ ապրիք...

- Գիտէք որ գիտութեան եւ անլիտութեան աննախընթաց դարու մը  
մէջ կ'ապրինք: Մեր ժամանակաշրջանը զգայացունց անակնկալներով է լի:  
Կրնայ յայտնուիլ մեծահանձար բժիշկ մը, ու կատարել սքանչելագործու-  
թիւններ: Կրնայ նաեւ գերբնական զօրքով մէկը, նման բոլոր ժամանակ-  
ներու մեծագոյն Բժիշկին, Յիսուսի, կատարել հրաշքեր: Հիւանդները  
բժշկել անմիջապէս, բայց ո՛չ զեղերով, այլ զպելով, ո՛չ թէ գործողու-  
թիւններով, այլ խօսքով մը: Եւ պարզեւել ոչ միայն սոսոցութիւն, այլ  
երիտասարդութիւն ալ: Ո՛չ կրօնքին, ոչ ալ գիտութեան համար ոչինչ կայ  
անկարելի: Միակ անկարելին՝ մարդոց իրարու հանդէպ ունեցած Սէրն է:  
Նոյնիսկ մարդու ինքզինքին հանդէպ ունեցած բարեբար Սէրն է: Վար-  
դապետը ըսաւ. «Սիրեցէք զիրար»: Բայց ամէնէն աւելի զիրար ատողնե-  
րը քրիստոնեաներն են, որոնք ատելութիւնը կատարելագործած են:

- Ծիշք է: Իրաւունք ունիք:  
- Դառնալով բժշկութեան, խոստովանինք որ հակառակ իր բազմա-  
թիւ, իր անուրանալի յոռաջրիմութիւններուն, քսան դար է որ դեռ յետա-  
դիմութեան մէջ է: Յիսուս հպումով կամ երկու-երեք բառով հիմնապէս  
կը բուժէր հիւանդը, շնորհիւ աստուածատուր իր հոգեկան զօրքին: Ահա  
այդօրինակ բժշկութեամբ մը կրնանք թէ՛ առողջանալ, թէ՛ երիտասարդա-  
նալ, եթէ գիտութիւնը չմոլորի ու կողմնակի ճամբով մը չընթանայ դէպի  
պատերազմ ջերմիորիզային: Մերեր կան, որոնք ի շահ մարդկութեան պէտք  
է երիտասարդանան:

- Իրապէս ձերեր կան՝ որոնք արժանի են երիտասարդութեան, մինչ-  
դեռ այնքան երիտասարդներ կան, որոնց գոյութիւնը անօգուտ է, նոյնիսկ  
փնասակար է:

ԱՊԱՍՈՒՄ

Կեանքը ինքնին համբերութեան համալսարան մըն է, յաճախ անհան-  
դուրժելի:

Հիւանդանոցը մասնագիտութիւն մըն է սպասումներու:  
Նախ օրերով, երբեմն շաբաթներով պէտք է սպասել ներս կարենալ  
մտնելու համար:

Պէտք է մէկը մեկին (կամ մեռնի) որպէսզի անկողին մը ազատ ըլ-  
լայ: Մտնելէ ետքը պէտք է սպասել ելքին, որուն ե՛րբ ըլլալը ո՛չ մէկ մար-  
դաբէ՛ զիտէ: Ապասողներ կան տարիէն աւելի: Հիւանդանոցին մէջ հազար  
տեսակ սպասումներ կան: Նեղացուցիչ, շղայնացնող, նաեւ տապնապեցնող  
սպասումներ: Պէտք է սպասել լաւ լուրերու, լոյսերո՛ւ, լոյսերո՛ւ:

Միայն մէկ բանի սպասել չկայ՝ ներարկում կատարող օրիորդնե-

յու, որոնք մասնաւոր հաճոյքով մը կը փութան ստեղ կոխելու ձեր մարմնին մէջ, կը նմանին խայթող մեղուններու: Այո՛, անոնց սպասել չկայ: Կեանքի մէջ ալ այդպէս չէ՞: Յաճախ հրեշտակի զիմակով անձեր կը փորձեն խայթել, խոցել ձեզ, եւ հելտանալ իրենց տխմարութեամբ:

Գիտի

Նայի՛ր հռչակաւոր հիւանդանոցը այն միակ բացառիկ վայրն է Ձեր բանսայի տարածութեան միջայ, ուր կարելի չէ կաթիլ մը դոնել զինի:

Հանրապետական Ցրանսան ունի բազմաթիւ դահլիճներ: Անոնց զլխաւորը կը կոչուի Գիտի:

Այս հաստատութիւնը կոխը յայտարարած է Գիտիին դէմ ու հռչակած է յաղթանակ: Չարաշար պարտուած է Գիտիին: Ո՛չ չէթ մը կը տրուի, ո՛չ ալ չէշ մը կը բերուի դուրսէն: Անաստողը կ'արտաքուի: Թ՛մ ընցուցիչի մաքանենդութեան շափ դժուար է ներածուձը գինիի:

Արգիլուած դեռ շատ բաներ կան, սակայն, կարելի է այդ արդէլքներուն միջայէն ցատկել կաղտնորէն եւ անխիտանարար:

Ամէն օր, ճաշի կամ ընթրիքի ատեն, դուաթ մը դարեջուր կը տրուի: Ես գոնէ դարեջուրով հարուստ եմ, որովհետեւ երեք սեղանակիցներս ալ մահմեկասկան ըլլալով՝ դարեջուր իսկ չեն ըմպեր, իբրեւ ալքով պարունակող ըմպելի: Իրենց բաժինը ինծի կու տան սիրայոժար:

Հինդարթի օր մը, հիւանդապահուհի մը յայտարարեց.

- Վաղը, Ուրբաթ կէսօր, պիտի տրուի, իբրեւ կեդրոնական կերակուր, ձուկ՝ ճերմակ գինիով պատրաստուած: Չսիրողներուն պիտի տրուի պիւֆքէկ:

Երբ կարգը ինծի եկաւ արձանագրութեան, յայտարարեցի.

- Ձուկ՝ ճերմակ գինիով, բայց մէկ պայմանով. ճերմակ գինին այնքան շատ ըլլալու է, որ ձուկը կարենայ լողալ մէջը...

Անգամ մըն ալ Տոքթ. Ա. իր այցելութեան ընթացքին, երբ կարգը ինծի եկաւ, հարցուց որպիսութիւնս:

Եւ ես պատասխանեցի.

- Ունիմ քանի մը անհանպատութիւններ, որոնց զլխաւորն է անքնութիւնս: Թէեւ դեղը աւելցուցին, սակայն, դարձեալ քիչ է անքնութեանս դէմ պայքարելու եւ յաղթելու համար:

- Այստե՞ղ այդպէս եղաք, թէ տունն ալ այդպէս էիք:

(Բժիշկը սասանորէն կուսած էր պատճառը ու կը ժպտէր դաղտնի):

- Տունն ալ այդպէս էի, բայց այնտեղ միջոց ունէի քնանալու...

Հիւանդապահուհիներուն զլխաւորը հետաքրքրուած հարցուց.

- Ի՞նչ էր արդեօք այդ միջոցը...

Ա՛լ բերանս բանալու ատենը եկած էր.

- Գիտի, տիկին, դուաթ մը Գիտի: Բայց հոս չկայ Գիտի: Եւ այդ մեղանչում է անբուժելի: Վարդապետին աշակերտները երբ կ'որոսային թարմաթարմ ձուկ, ու կը խորովէին, զայն խմբովին կը ճաշակէին գինիով: Իսկ մենք Ուրբաթ օրերը ձուկ կ'ուտենք առանց գինիի: Յետոս երբեք պիտի չներէ այս մեղքը...

Տոքթ. Ա. ըսաւ.

- Յիսուս այնքան բարի է որ այդ մեղքն ալ կը ներէ...

– Հաւատացէ՛ք, ո՛չ այդ մէկը: Յիսուս Հեթանոս Գինին քրիստոնէացուց: Իբր առաջին հրաշքը պործեց Կանայի հարսանիքին, ջուրը փոխելով գինիի: Միշտ ըմպեց գինի: Վերջին ընթրիքին ալ ըսաւ, մատուցանելով Գինի.– «Արբէք ի սմանէ ամենեքեան...»: Աներեւակայելի մեղք է ձուկ ուտել եւ գինի չխմել: Այդ մէկը պործ է անճաշակի, անխիղճի: Ճաշակել ձուկ, առանց բարեշնորհ (եւ բազոսաշնորհ) ընկերակցութեան Գինիին, մեղք մըն է, որ Հեթանոսները անգամ պործած չեն: Եթէ Յոյները լսեն, մեզ զբարբարոս» կ'անուանեն: Սիրելու է Գինին, բայց չափաւոր սիրով: Չափազանցութիւնը հեռանալ է քրիստոնէութենէ, որ չափ է, այսինքն իմաստութիւն, որ կը բանի խիղճին մէջ:

**ՄեԱնՈՏ**

Միելը ծանրակշիւ հարց մըն է թոքային որեւէ հիւանդութիւն ունեցողներուն համար:

Միելը արդիւնաւոր է, բայց բացարձակօպէս չէ, քանի որ բժիշկները քաջ գիտեն, որ այդ ամէն տեսակ ծխամոլի համար կարելի չէ: Կը յանձնարարեն որքան կարելի է նուազեցնել այդ սատանի ըուրվառին դործածութիւնը: Բան մը, պոր ըրած հմ տարիներէ ի վեր:

Նալիի հիւանդանոցին թոքազիտական բաժանմունքները ունին ծխաբաններ, աթոռներով, սեղաններով ու ծխամաններով:

Բժիշկները յաճախ ամէն բան կը հարցնեն հիւանդին, բացի ծխելու խնդիրէն: Մինչդեռ ծխելու հարցը կարեւորներէն մէկն է:

Կը կարծեմ, թէ չեն հարցնէր, մտաւ ըլլալով որ հիւանդը պիտի ստէ: Անշուշտ չեմ ծխեր» ըսելու չափ՝ փեղի պէս խոշոր սուս մը պիտի չխօսի, սակայն նուազագոյնի պիտի իջեցնէ իր ծխելու չափը: Ինչո՞ւ հիւանդը ստիպել որ ստէ, ինչո՞ւ ստախօսութիւնը ունկնդրել կամաւոր յիմարութեամբ:

Զծխուած ժամերուն, ծուխը ծխամոլին գլուխէն կ'ելլէ:

**ՄՈՒՏՔ՝ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Քաւարանէն փոխադրուեցայ արքայութիւն:

Կէս օր մը, ճաշի պահուն, հիւանդապահուհի մը մօտեցաւ ինծի ու յայտնեց.

– Ճաշէն ետքը, մէկուկէսին, պիտի փոխադրուիք մեծ շէնքը: Պատրաստ եղէք:

Այս որոշումը տիրեցուց պիս: Սեղանակիցներս միխթարեցին ու աւելցուցին.

– Այնտեղ պահ ըլլալու պատճառներ պիտի ունենաք:

Այս նոր շէնքն ալ թոքազիտական է, բայց կարգ մը բաներով հակապատկերն է միւսին: Նախ նոր ու չքեղաչուք է շէնքը, ամէն ինչով արդիական:

Սակայն երբեք սպաւորութիւնը չի պործեր հիւանդանոցի: Մեծալըքեղ տուն մըն է հանգստեան, բնակարան բազմամիլիոնատէրներու, դրախ-

տի մէջ դղեակ: Արքայական դրօսանաւ մըն է, խարսխած կանայորակ ծո-  
վու մը ծոցին մէջ:

Ամբողջ Հիւանդանոցը պարսպուպատ քաղաք մըն է, բարձրաբիւ տա-  
ղաւարներով, որոնցմէ սմանք կը նմանին դօրանոցի, ուրիշներ պետական  
չէնքերու, այլք առաջաստանաւերու: Մերը նաւապալատն է:

Ափսո՛ս, Բազոսը միշտ է բացակայ:

Բայց լրջօրէն խօսելով՝ էական բան մը կը պակսի բոլոր այս սքան-  
չելադործութեան — կարգը կանոնը, կազմակերպութիւնը:

Այս բարեփոխութեան իր սիրաշօժար մասնակցութիւնը բերու բնու-  
թիւնը, կրօնի դառնալու աստիճան ջերմութեամբ մը, որ բարձրացաւ յան-  
կարծակի: Հակառակ Մարտի սկիզբը ըլլալուս, ունեցանք կրկնակապոյտ  
երկինք, արեւ արեւալ:

Կարծէք մեր դրօսանաւով փոխադրուած էինք մէկ սիրաբոյն ծոցը  
Միջերկրականի:

Բայց չկարծուի որ Հիւանդանոցին կեանքը համակ հանդէս է հի-  
ւանդներուն համար:

Անսխորտութիւնները անվերջ են:

Ձո՛րն ասե՛մ...

Այս շքեղ դրօսանաւուն մէջ, Հիւանդներս դրօսալրջիկներ չենք, այլ  
ձուկեր խաչուելու եւ խորովուելու համար:

Կը ներկայացնենք մէկ հատը միայն:

Կը դրկուիք ռատիոյի մը, որ կը տեւէ ժողաւորապէս ժամ մը եւ ձեզ  
կ'ընէ ուժաքամ: Հետեւեալ օր կրկին կը կանչուիք, այն առարկութեամբ,  
որ քաչուածները ձախողած են, ու վերստին պիտի լուսանկարուիք եր-  
կարօրէն:

Եւ յանձնարարութիւն մը.

— Ե՛րևա, շա՛տ ըրէ՛ք, ձեզի կը սպասեն:

Կ'երթաք. եւ երկու ժամէն աւելի դո՛ւք է որ կը սպասէք, որ պոր-  
ծողութիւնը կատարուի: Կը գանդատիք, կը բողոքէք, կ'ընդվզիք: Վերջա-  
պէս, մետասաներորդ ժամուն կը կատարուի:

Ատիկա տակաւին յաջողութիւն մըն է:

Ուրիշ օր մը, այլ տեղ մը կը դրկուիք, ուր մէկուկէս ժամ կը սպա-  
սէք ու ձեզմով հետաքրքրուող չկայ: Կէսօր կ'ըլլայ: Ժամ է ճաշի: Կ'եր-  
թաք, կը յայտարարէք, որ ա՛լ չէք կրնար սպասել: Որո՛ւն հոգը ... Կը  
վերադառնաք մեր տաղաւարը ու կը պատմէք եղածը: Յանցաւոր էք, ու-  
րովհետեւ եղածը նկարագրած չէք պաղարկւնութեամբ...

Հիւանդանոց... Աւողջներն անգամ մերթ կրնան Հիւանդանալ հի-  
ւանդանոցներու մէջ:

Փա՛րք ծրկնաւորին, որ բոլոր Հիւանդանոցները Հիւանդացնող չեն:

Հ Ա Ջ Ա Ա Ս Մ Ե Ր Գ

Կը հազան, կը հազան, կը հազան...

Հազահամերգ խժալուր, խառնակ, խայտառակ:

Ձկայ դեկավար, չկայ ոչ մէկ կորգ ու կանոն:

Հազը հառաչանքի տեսակ մըն է, հեծկտուքի տեսակ մը, տեսակ մը

բարկութեան ու բողոքի, մանաւանդ ձայն քայքայման եւ փլուզումի: Կ'ելլի՜ կլոր-կլոր, կտոր-կտոր, մերթ ժայթքում է, մերթ լաւա, մուխ, հրարուխ: Հողը համաձայնութիւն է, միաժամանակ զժգոհութիւն: Հաղերը հազար իմաստ ունին, հազարան հազագ, հազարան հող:

Ամէն մէկ հազ, յաճախ իրերայաջորդ, արտայայտութիւն մըն է, խօսք մըն է: Ունի գոյն, ու ձայն աւրուած նուազարանի:

Հաղեր ալ կան, որոնք քայլերդ են, բայց ոչ յառաջանալու, ոչ ալ նահանջելու համար, այլ խորանալու խաւարին մէջ յաւիտեան:

Մեր հիւժարտաւոր բանաստեղծները իրենց հազերը հրաշափոխեցին հողելտով երգերու: Ահաւասիկ նմոյշներ.

Մկրտիչ Պէշիկիթաւեան յետ մահու կը հովուերդէ իր սիրուհի Սըրբուհիին.

- «Տե՛ս, զի այդ գեղեցկացոյց զիս մահ,  
Արար զիս ասրփելի,  
Միթէ դարձեա՞լ ատիցես, եւ անդրագոյն  
Քան զԻրիմ...»

Պէտրոս Դուբեան իր բարեկամներուն կը պատասխանէ.

- «Ինձի կ'ըսեն — «Ինչո՞ւ լուռ ես...»  
Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞  
Արշալօյսը որ կը բաղնկի...  
Ձի անեւն է այն ալ ինձ պէս»:

Միսաք Մեծարեանց կը զրուցէ «Վայրի Մաղիկ»ին հետ.

- «Ըսէ՛, ծաղիկ, ամուսն ի՞նչ է  
Հովիմ, որ քեզ տըլաւ դողիկ,  
Ու ձայնի՞մ՝ որ զիս կը կանչէ...»

Վահան Տէրեան հազարով կը հեւայ.

- «Հեռումա՛լ, մոռումա՛լ ամէն բան,  
Ձըլիշիլ, չըխօսիս յաւիտեան...»

Կեանքը եւ Մահը մեր թեւերը մտած՝ մեզ կը տանին... Սէրն ալ կ'ընկերանայ մեզի...

Կեանքը, Սէրը ու մենք կը հազանք... Միայն Մահն է անհազ, քաջարի:

ՏԻՊԱՐՆԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Հիւանդները իրարու կը ծանօթանան ծխարանին մէջ, որ չքեղ սրահակ մըն է, վեց պատուհաններով, միշտ զոց գրեթէ:

Անդամ մը քոզս նստած ու իր ճաղատութեամբ ու երեք ծխիկ իրերայաջորդ կերպով մոխրացնելով փայլող եւ փայլատակող ծերունիի՝ մը հարցուցի.

- Չափազանց կը ծխէք: Արդեօք ծուխը կը կլէ՞ք...  
Ձարմացած նայեցաւ ու պատասխանեց.

- Ամբողջութեամբ կը կլէմ ծուխը: Եթէ ծուխը չկլլեմ, ի՞նչ կ'մաստ կ'անենայ ծխելու...»



Իրաւունք ունի. իմաստը միշտ կլինուան մէջ է:

● Չափազանց ծխող ուրիշ ծերունիի մը, որ իննսուներ մերձ է, ըսի:

- Օրական քանի՞ ծրար կը ծխէք...
- Դեռ մինչեւ երկու տարի առաջ, օրական հինգ ծրար կը ծխէի. ապա, ամբողջ տարի մը, օրական չորս ծրար ծխեցի: Հիմա կը ծխեմ օրական երեք ծրար:
- Ուրեմն երկու-երեք տարեկէն ա՛լ ամբողջովին պիտի դադարէք ծըխելէ:

Երեսու նայեցաւ ապշած:  
Իսկ ես շէի կրնար ըսել որ կարելի չէ ծխել գերեզմանին մէջ:

● Հսկայ մը կայ թոքերով դոճէլի, Հսկայ մը պատկառելի, որ յանկարծ կը սկսի երգել, կործանելով կերպարանքին յարգանք պարտադրող ապաւորութիւնը, եւ դառնալով խոշոր խրտուիլակ մը եղկելի:

Ներկայիս որքան բազմացած են իրենց սեփական ձայնով՝ իրենք գերենք խայտառակողները:

● Կայ տակաւին թոնթոշիկ, անուշիկ, ազնուական ծերունի մը, որ թոքերէն Հիւանդ ըլլալէ դատ, աջ թեւն ալ կաթուածահաչ է: Զաւաթանին մէջ իր տեղը զօլօ է: Իր ուտելիք մտղէնները պատառներու կը վերածեն, որպէսզի դիւրութեամբ կարենայ ճաշակել, նման մանուկի: Հսկանակ տխուր մանկութիւն մը վերապրելուն՝ մշտաժպիտ է: Եւ երբ բարեկամի մը կը ժպտի՝ կրկնապէս ժպտած կ'ըլլայ: Համակ բարութիւն է դէմքը կամ քաղցրութիւն: Հետաքրքիր է: Ամէն բան դիտեալ, հասկնալ կ'ուզէ, ձայնով մը, որ աւելի քան բաղամայն է: Երբ նոր սեղանակէց եղած էի իրեն, երկրորդ թէ երրորդ օրը, սա ձեւով հարցում մը ըրաւ ինծի-  
« Դուք ամերիկացի՞ էք թէ անգլիացի... »

- Ո՛չ մէկը, ոչ ալ միւսը: Եւ բարեբախտաբար: Արմէնիկէն եմ:
- Արմէնիկէ՛ն...
- Ըպաւ ու մնաց երազուն...
- Ապա աւելցուց:
- Աղուսք անուն է...

Անունը աղուսք է, բայց անծանօթ, անորոշ...  
Այս ոտմանթիք ծերունին երբ չի ժպտիր, ուրեմն նստած տեղը մրափած է, ու հրեշտակներն են, որոնք կը ժպտին իրեն:

● Ահնեակները առհասարակ ընդարձակ են, եւ ունին վեց լուսամուտ եւ չորս մահճակալ: Ուրիշ Հիւանդանոցներու այսքան խոշոր մէկ սենեակին մէջ կը դեռնուին ութէն-տասը անկողին: Մահճակալս կը գտնուի աջակողմը, մօտ լուսամուտներուն: Ի՞մ ետիս դանուոյր ամէնէն տխուր Հիւանդն էր Հիւանդանոցին: Օրը կ'անցընէր աթոռի մը վրայ, Հակած. դէպի անկողինը: Կարծէք զլիսուն շօւրջը փաթթած էր ծխաչէն ապարօշ մը: Ինչմըք մուխի, մութի, մռայլի մէջ էր: Ձէր խօսեր ո՛չ ոքի-հետ: Օրուան ընթացքին հազիւ քանի մը բառ կը փոխանակէր ինծի հետ, ըսելու համար որ Հիւանդներէն ոմանք զինքը կը նեղեն, իրենց շատախօսութիւններով: Այսքան: Այնուհետեւ իր սեւ ամպեղէն հազուատներուն մէջ, տխրութեան զօղերը վրան՝ կը խորհէր ու կը խոկար:

Եւ օր մը, պաշտօնական համազօգեստով անձ մը ներկայացաւ այս տրամաթախիծ մարդուն, ու հաղորդեց աւետիս մը:

Մեր մարդուն դէմքէն չքայրան բոլոր սեւութիւնները, ճերմկցաւ, նոյնիսկ վարդերանդ դարձաւ, եւ սկսաւ ճառագայթել:

Երկուքը բոլորուեցան սենեակի սեղանին շուրջը: Եկողը բացաւ փաթոյթ մը փաստաթուղթերու եւ մանաւանդ ծանրակշիռ ծրարներ հինգ-հարիւրնոց թղթազրամներու:

Կամացուկ մը դուրս սահեցայ, շնեղելու ներկայութիւնովօ:

Երբ ժամ մը ետք սենեակ մտայ, մարդը տեսայ հոգեփոխուած, մտափոխուած ու մարմնափոխուած:

Չքացած էր նախկին մարդը, որ ներսով դուրսով սեւազգեստ էր: Արդ, մարդ մը կար նոր, լուսեղէն, ճառագայթարձակ:

Ոչ եւ բան մը հարցուցի, ոչ ալ ինք բացատրութիւն մը տուաւ:

Յայտնի էր որ կնճոտս խնդիրէ մը դուրս ելած էր յաղթական, ու զանձած էր հարստութիւն մը:

Այնուհետեւ իր շախորժած մարդոց հետ ինք սկսաւ շատախօսել, զանոնք լուրթեան մասնելով:

Եղաւ ծխարանին ճառախօսը:

Նոյնիսկ սկսաւ երգել իր ձայնով շիկահաւու, մինչեւ անգամ պարել, նման կապկամարդու:

Ու խորհեցայ.

- Նիւթը որքան կ'ազդէ հոգիին: Ո՛րքան սիրուած է նիւթը հոգիին: Առանց հոգիի արդեօք չկա՞յ նիւթ... Առանց նիւթի արդեօք չկա՞յ հոգի: Անոնք իրարմօ՞վ ամրող են: Իրարմօ՞վ կը լիանան, կը լրանան: Մենք ենք որ զանոնք կը կարծենք իրարու թշնամի: Ատուուած մեզ շինած է նիւթով ու հօգուով: Եւ սակայն, մեղք ըլլալէ չի կրնար դադրել նիւթապաշտութիւնը:

Մեր մարդուն մէջ ամէն ինչ բարեփոխուեցաւ, բացի հազէն, որ արդ կը նմանի երկարատեւ ահազանգի: Հետզհետէ հազն ալ փոխուեցաւ, բայց չարափոխուեցաւ, որովհետեւ սաստկացաւ, քանի որ մարդը սկսաւ ծխարան յաճախել ու ծխել յաճախակի:

Մարդը կիտովին խենթեցաւ: Ուրախութիւններ կը պոռթկան իր ըստ ըստ ծակ ու նոյնիսկ անծակ մասերէն — բերնէն, աչքերէն, կոկորդէն, ձեռքերէն, ոտքերէն, եւայլն:

Նիւթական երկրորդ յաջողութիւն մը հաւանաբար այս մարդը կըրնայ ամրողլովին դարձնել խելագար:

Ո՛չ Բախտին տալիք դրամը ուղիւու էք, ոչ ալ Անբախտութեան կողմէ կողոպտուիլը ձեր վերնատունին:

Սա ալ ըսենք, որ մեր մարդը թէեւ խելքին կէսը կորսնցուց, բայց զանձած դրամը այդ կորսնցուցած խելքին տեղը բռնեց, նոյնիսկ բան մը աւելի:

Հարստանալէն ի վեր, իրեն համար կ'ըսեն.  
- Իմացականութեան տէր մարդ է:

● Կայ նաեւ մասամբ ապուշիկ, ջիւղ մըն ալ անուշիկ ծերունի մը, առաջին աշխարհամարտի մարտիկներէն մնացած, որ առաջելութիւնը ունի առաւօտները հիւանդանոցէն դուրս ելլելու եւ հիւանդներուն համար գնելու օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսաթերթեր, շաքար, մանաւանդ ծխախոտ ու ծխիկ եւ լուցկի: Այդ գործին մենաշնորհը ունի: Կը հագուի միշտ նման քաղաքացիի (կապոյտ զգեստ, սեւ կօշիկ, քառճէք գլխարկ):

Հպարտ է իր կատարած գնումներով:  
Իր հպարտութիւնը խոցելու համար, անկամ մը հիւանդին մէկը ար-  
ձակեց նետ մը.

- Ի՞նչ են բերածներդ. միշտ միեւնոյն բաները: Դրոշմաթուղթ,  
թերթ, ծխիկ, շաքար, լուցիկ... Աս չէ՞ եղածը...

Նախկին մարտիկը նկուն ձայնով ըսաւ.

- Ըսէք ինչ որ կ'ուզէք ու ես բերեմ, բացի ըմպելիքէ ու կնիկէ...

Ուրիշ մը արձակեց նոր նետ մը.

- Ըմպելիք ու կնիկ չըլլալէ ետքը, ի՞նչ կը մնայ որ բերես, տպուշ...

- Մախու կապիկ մը կայ, գնեմ ու ձեզի ընկեր բերեմ...

Երրորդ մը արձակեց իր նետը.

- Մենք արջով մը գոհացած ենք. պէտք չունինք կապիկի:

● Մեր յարկարածինն քանի մը վաստակաւոր հաղացողներ մեկ-  
նեցան, եւ անոնց տեղ եկան վաստակաբեկ հաղացողներ:

Նոր եկողներէն մէկը եթէ ոչ կատաղի, բայց կանոնաւոր ծխող մըն  
է: Միայն թէ չի գործածեր ո՛չ հրահան, ո՛չ լուցիկ: Գալուստէն ի վեր,  
անցան օրեր, սակայն, չտեսանք իր ծխիկները իր միջոցով վառելը:  
Միշտ կը դիմէ ծխողի մը, կրակէ համբոյր մը մուրալով՝ վառուած ծխիկէ:

Կարծէք մարաթոնի ջանն է իր ծխիկը, որ կը վառէ. սա տարբերու-  
թեամբ, որ վազելու փոխարէն կը նստի, սպասելով որ Յաղթութիւնը ինք  
վազէ ու իրեն գայ, ձեռքը բռնած պսակ մը ծուխէ:

● Նորերէն մէկը կարծէք իր կողորդէն կարաւաններ կը հանէ  
հաղի: Աւագակներէ վախ չունի: Ինք է որ կը բաշխէ իր ազբանքները,  
այսինքն մանրէները:

● Գողիթ մը կայ, որ թնդանօթ կ'արձակէ կողորդէն, ինքզինքը  
քանդելով կամայ ակամայ:

Երբ պահ մը զաղբի հազահամերգը՝ տիրող լուսթիւնն անգամ խժա-  
լուր է:

● Քանի մը տողով ալ ներկայացնենք մեր ասեղանորհ հիւանդա-  
պահուհիները:

Մին սեւուլիկ է ու կը խօսի մերթ ճնճողովի, մերթ ալ ձայնով ճը-  
պուռի: Երբեմն ալ երկուքը իրար խոռոնուած: Գերին է կանոններուն, ու-  
րոնք գոյութիւն չունին:

● Կայ մանկունակ դէմքով ու մեծ աչքերով հիւանդապահուհի մը,  
դեռ դեռատի: Խոստմանից է ու խելացի: Ենորհալի է իրբեւ ասեղ միտղ  
մարմնի մէջ: Դիւրութեամբ պիտի կրնայ իր սիրածին սրտին սրակել չի-  
ճուկը սիրոյ:

● Երրորդը գեղեցիկ չէ արտաքինապէս, որովհետեւ գեղեցկութիւ-  
նը ամբողջութեամբ իր մէջը պահած է: Մերթ ժպտուն է, եւ իր ժպիտը  
անկեղծ է:

● Չորրորդը միակ ու բացարձակ գեղեցիկն է, թէ՛ մարմնով, թէ՛  
դէմքով, թէ՛ մանուանդ աչքերով: Ունի կանացիութեան պակաս, որով-  
հետեւ քալուածքը զինուորական է ու ձայնը հրամայական, նման բարձ-  
րատիճան գինուորականի: Հաւանաբար այդպէս է, տիրապետելու տենչով  
Իք աւազ թերութիւնը իր գեղեցիկ ըլլալը երբեք չմոռնալի է:

● Կայ նաեւ հիւանդապահուհիներու օրիորդ կամ տիկին պետը,  
որ թէեւ անպէտ մէկը չէ:

Կան տակաւին աշխատաւոր բազմաթիւ կիներ եւ օրիորդներ, դեռա-  
տի կամ տարիքոս, որոնք ընդհանրապէս ազնիւ են, բարի եւ գործունեայ:

ԾեԱՐԱՆԸ

Ինչ որ էր Թոքադիտական քաւարան տաղաւարին նաշտօրաւ, իր-  
բեւ խենթերու հաւաքովայր, նոյնն է այս շքեղաշուք տաղաւարին ծխա-  
րանը, իրբեւ ակումբ գիւհահարներու, եւ շատ աւելի սպառնական, վնա-  
սակար:

Շնտիր, ընդարձակ ծխարան մըն է եւ ունի վեց պատուհան, տասը  
սպիտակ բազկաթոս, երկու սեղան ու երկուքական ծխաման անոնց վրայ:

Տասը ծերակուտականներ կը ծխեն անդադար, նստած վիճակով, նը-  
ման բարձրաստիճան քուրմերու, նոյնքան ծերակուտականներ ալ կը ծխեն  
յոտնկայս:

Ծերակուտականներէն ծխամուլ մը, որ օրն ի բուն ծխարանն է, ինք-  
զինքը յայտարարած է տնօրէն կամ տիկտաքար:

Կը նմանի գրեթէ դաճածի: Դէմքով ու ժարմնով՝ ժուկի: Սակայն  
ժուկ մը մոնչող, իր հայհուչներով յորդող հրահանդները, նոյնիսկ իր հայ-  
հոյսից հրամանները կը սաստեն, կը սարսափեցնեն ծխամոյնները:

Իր աւագ պատգամն է պատուհանները գոց պահել: Վա՛յ անոր, որ  
կը ժպրհի լուսամուտի մը դպիլ, մասամբ բանալ, յանուն մաքուր օդի:  
Հայհոյութեան հրարուիս մը կը ժայթքի եւ լուսանքի լուսանք կը վազեն  
ու կ'աւերեն ամէն ինչ:

Պատուհանը բացողը կ'ընդունի նաեւ շանթահարող նայուածք մը:  
Ապա, անօրէնը կ'իլլէ ոտքի ու մեծաշունդ կը փակէ լուսամուտը, պոթ-  
կալով հայհոյութեան հուսկ բանքը:

Ու կը տիրէ լուսթիւն: Զարմանալի է որ չեն ծափահարեր, քանի  
որ ժարդուկը տիկտաքար է:

Մերունի մը ինծի պատմեց, թէ իմ գալէս առաջ, իմ անկողնին մէջ  
կը դտնուէր ափրիկեցի մը, կատարեալ տիպար մը Օթիլլոյի, որ, օր մը,  
ընդզղելով մենատիրոջ հայհուչներուն դէմ, նուապատիկ հրարութով կը  
փոխադարձէ, ու վերջապէս մէջքէն բռնելով կը շարտէ գետին:

Մենատէրը կ'ըլլայ դահընկէց:  
Քանի մը օր ետք, սակայն, Օթիլլոն իրբեւ հիւանդ ազատ արձակ-  
ւելով՝ մենատէրը կը գրաւէ իր աթոռը տնօրէնի:

Օրուն ընթացքին ծխարանը կը վերածուի ամպերու ամբարանոցի,  
մուխի մթերանոցի, ինչպէս նաեւ մանրէներու եւ Թոյներու ժողովատեղիի:

Ու հազացողները կը շնչեն այդ մթնոլորտին մէջ: Երբեմն՝ չծխող  
կիներ ալ կու գան ծխարան, իրենց ձանձրոյթը փարատելու համար: Անոնք  
ալ կը ծխեն առանց ծխելու, շնչելով ծխալից օդը:

Կարծէք հիւանդանոցին կողմէ լքեալ վայր մըն է ծխարանը, ուր  
ամէնէն առողջ Թոքեր ունեցողն անգամ կրնայ շարքի մը վարակուել  
հիւժարտէ:

Ոչ ոք կրցաւ դուրս ելլել միևնույնիսկ հետ, որուն համոզումն է հիւ-  
ծախարը բժշկել ծխախոտի ծուխով, եւ որուն կոչումն է մոնչել, իսկ առա-  
քելութիւնն է պատուհանները գոց պահել:

Եթէ պատասխանատու պաշտօնեաները եւ ծխող ծերակուտականները չկրցան ծունկի բերել տնօրէնը, սակայն Մուխը ինքը խերը անիծեց տնօրէնին ու զայն կռակի վրայ տապալեց եւ նետեց անկողին:

Մկնառիւծը եղաւ ծանրապէս ծխահար: Իր հագը վերածուեցաւ հեծկըլտուքի:

Մօտ է, աւա՛ղ, ցնդելու նման ծուխի: Կամ խեղդուելու ծուխի ծովուն մէջ:

**ԳՐՇԵՐԱՅԻՆ... ԽՈՂԵՐ... ՀՈՒՍԿ ԲԱՆՔ...**

Գրեթէ գիշերները, կէսէն ետք կ'արթննամ ու ժամերով կը մնամ անքուն: Կը հազուիմ թեթեւակի եւ կը մեկուսանամ ծխարանին մէջ: Առաջին դործս կ'ըլլայ պատուհան մը բանալ սամրողովին, օդը մաքրելու համար: Ապա, կը մոխրացնեմ կէս ծխիկ:

Այնուհետեւ յիշատակներ, երազանք, երեւակայութիւն, մտածումներ:

Երեք կիներ կան դիշերապահ, որոնք կը ճանչնան դիս իրրեւ առաջին անքունը հիւանդներուն մէջ, որ հակառակ հինգ անակ դեղի ու ներարկումի, չեմ կրնար քնանալ ցլոյս:

Բժիշկէն սկսեալ մինչեւ գիշերապահները հետաքրքրուած են, թէ քնակարանիս մէջ ալ անքուն էի:

Անոնց ըսած եմ որ կէս գիշերէն ետքը, երբ կ'արթնայի, արգէն կ'ըլլայի անօթի, ընթրիքին քիչ մը բան կերած ըլլալով: Կ'ըմպէի դաւաթ մը գինի: Կը ճաշակէի պատառ մը հաց, կտոր մը պանիրով կամ երկու ձիթապտուղով: Ապա, կէս ծխիկ: Եւ անկողին մտնելով՝ քունը կը գրկէր դիս:

Բայց ո՞ւր է գինին հիւանդանոցին մէջ: Գինին, որ հրաշարար դեղ է, եթէ չափը պահուի: Ի՞նչ հիանայի է հայերէն ասացուածքը. «Մէկը լաւ, երկուքը բաւ, երեքը ցաւ»:



Մթութիւնը մակընթացութիւնն է տիրութեան, երբ էութիւնները կը մխրճուին սեւութեան մէջ գիշերին, ու կ'ունենան խարկոնքը խեղդուելու:

Առաւօտեան արիւուն լոյսը կրնայ փրկել հոգիները մեյամաղձոտութեան մակընթացութենէն:

Սեւ ամպերը կը սարքեն եղերական նկարներ: Ականջը կը հնչէ նման հեռախօսի... Ո՞վ է, ի՞նչ կ'ուզէ, ի՞նչ կ'ըսէ... Լոտութիւն... Կ'ընկզմի մարդուս միտքը մինչեւ թունաւոր թանձրութիւններու մէջ:

Աղօթքը, միայն աղօթքը մեզ կրնայ ազատագրել ճահալին ճակատադիտէ: Աղօթքով կը թեթեւանք, թօթափելով վիշտի ու ցաւի բեռներ: Աղօթք, այլոց համար, որոնք հակառակ քնացած ըլլալուն՝ սաղնապի մէջ են, մենէ աւելի դուցէ: Աղօթք, միշտ անոնց համար, որոնք աղօթելու սովորութիւնը չունենալու չափ դժբախտ են, եղկելի:

Գիշերին մէջ, աղօթքով լուացուիլ, աղօթքով լուսաւորուիլ, ուրիշ ներու հետ:

Ճ

Չար ժամերը դանդաղաշարժ են ու ամէն վայրկեան կը վարկարկեն մեր մարմինն ու միտքը, եւ կ'ալեկոծեն ու կը պղտորեն: Մինչդեռ հաճոյալի բարի ժամերը սակաւ են, հազուադէպ ու արագընթաց: Հանդիսա չկայ ո՛չ աստ, ո՛չ անոյ, ո՛չ մըրիկի, ոչ ալ միջոցի մէջ:

Երանի՛ անոնց, որոնք հանդարտ են խղճով: Այդ ամէնէն բաղձալին է անպորութեան, ո՛ւր ալ ըլլանք, ի՛նչ վիճակի ալ մէջ:

Խորութիւնը մեզ կը քաշէ, մինչդեռ մենք կը ձգտինք բարձունքի:

Պայքարը պորտադրուած է, եւ ամէն ոք պարտուած մըն է, ի վերջոյ:

Որքան ալ պաշտպանուած ըլլանք հովերէն, որքան ալ անցնինք փոթորիկներէ, վախճանն է անխուսափելի:

Չար ժամերը կը կատարեն իրենց գործը, նման վանտաշներու:

Երբ հասած է չարագոյն վայրկեանը, ամէն ինչ անօգուտ է: Պիտի կատարուի չարիքը կամ բարիքը, պիտի կատարուի չարչարանքով կամ անդիտակցութեամբ:

Մանդաղակիրը մեզի կու գայ կանոնաւորաբար, մենք ալ իրեն կ'ընթանք կանոնաւորութեամբ մը ակամայ: Հանդիպման պահը որոշուած է, թէեւ մեզի համար անորոշ է, բարեբախտաբար:

Ճ

Ամիսուկէս եղաւ, ու ես հիւանդանոցն եմ: Եանախ կը թուի, թէ բանտի մէջ եմ, թէեւ բանտս կը նմանի պայտատանման պանդոկի. բայց զրկուած եմ ազատութենէ: Թէեւ բարեգործ բանտ մըն է ու բարութեամբ կը շարժուի զիս, ու կը ջանայ հիւանդութեանս հրէշը մասամբ մեղմացընել, բայց զրկած է զիս ազատութենէ: Երբեմն կը նախընտրեմ ազատութիւնս այս բարեբար բանտէն: Այստեղ գալէ առաջ, թէեւ որեւէ կերպով չէի կրնար օգտագործել ազատութիւնս, սակայն, ազատ ըլլալուս մտածումը զիս կը գոհացնէր: Կրնայի հարկ եղած պարագային երթալ մինչեւ հացափաճարին, մինչեւ ծխափաճարին, մինչեւ գուլպայափաճար բարեկամիս, մինչեւ շուկայ: Կրնայի բնակարանիս մէջ ըմպել կէս գաւաթ զիւնի: Ամէն ժամ կանչուելի գերծ էի. կանչուել՝ յանուն անվերջ գործողութիւններու, անվերջ քնութիւններու, հարցումներու, ուստիօններու, ներարկումներու, գեղերու, եւայլն: Ազատութիւնը եթէ չէր ծառայեր զարմանմի, գոնէ չէր շարժարեք զիս:

Ազատութիւն՝ աստուածային ընծայ:

Եփեղագոյն դղեակէն շատ աւելի կ'արժէ ոյն հիւզակը, ուր ազնուագոյն Ազատութիւնը կայ, հոգ չէ թէ համեստ հացով: Բայց զերծ կանոններէ եւ անկանոնութիւններէ:

Գոնէ հայ մը ըլլար հոս, որպէսզի օրական քանի մը պահ կարելի ըլլար համեստի, հոտոտի ու համբուրելի հայերէնը:

Ինչպէս միշտ, մանաւանդ Հիմա, մենութեանս ու նեղութեանս մէջ, երեք երգեցիկ բառեր կը թռչին հոգիէս դուրս, ու լսողները զարմացած երեսս կը նային:

Այդ երեք բառերն են.

- Աստուած... Մայրիկ... Եաքէ...

(Յանունն բուժման թոքերու, յողերու, Հայերէնարազնութեանն եւ այլ կարիքներու...):  
 Երեք բառ միայն...  
 Եւ երեքէն ալ լսուած եմ:



Այս Հիւանդանոցին մէջ, օժտուած արդիական բոլոր յարմարութիւններով, կը պահուին այլ բաներ ալ, այնքան էական:  
 Հիւանդներու մէջ ընկերականութիւնը, իսկ առհասարակ ժպիտը: Հոգեբուի, բարբարի, բուժարար ժպիտը:  
 Մէկուկէս ամսուան ընթացքին ժպիտ շտեմայ գրեթէ: (Բացի վարդերես ծերուկէն, որուն ժպիտները քաղցր պատմութիւններ են):  
 Հիւանդներուն մէջ ո՛չ միայն Հիւանդութեան, այլ ամէն բանի համար հաւատք չկայ, յոյս չկայ, սէր չկայ:  
 Կաթողիկէ կրօնաւորն է միայն ժպտողը, ու կը ճգնի լաւատեսութեան լոյսը զետեղել հոգիներու խորը:  
 Ախո՛ս չէնքին, ափսո՛ս չքեղութեան, ափսո՛ս բժշկութեան:



Երէկ գիշեր անկողնէս վար ինկայ՝ քնացած վիճակով:  
 Բարեբախտաբար, գլուխս չեմ դարկած դետնի ջարին, մահճակալիս երկաթին ու մօտս դտնուող կարասիին: Ի՞նչալէ ետք, ամէն անգամուան պէս անկարող եղած եմ վերականգնելու, ծունկերուս անզօրութեան պատճառով:  
 Ձայնս լսելով՝ երկու Հիւանդապահուհիներ հասան ու գիտ վերցուցին եւ դրին անկողին:  
 Ի՞նչալուս պատճառը արեւոծութիւնն է ջուներս, նինջիս շարժն է, հոգեկան անհանդարտութիւնս:  
 Փամանակին, երբ դեռ սոգայ էի, մայրս կ'ըսէր.  
 - Խորունկ ու խաղաղ քուն՝ նշանիս քունը: Ետք քնացած ատեն, եթէ սեւ մատիտով գիծ քաշեմ իր մարմինին շուրջը, առաուն ատ գիծին մէջ կը գտնեմ գինջը:  
 Մայրս տեսնելու էր հիմակուան քունս, որ դուրս ելած է գիծերէ ու սահմաններէ:  
 Մարդը չի փոխուիր, կ'ըսեն:  
 Ա՛խր է. իր նկարագրով հազիւ թէ կը փոխուի:  
 Բայց բոլորովին կը շարափոխուի իր Փիղիքական նկարագրով, գառնալով անճանաչելի:



Մարդիկ այնպէս մը կ'ապրին որ կարծէք աստեղացի են յաւիտեան:  
 Այսպէս ապրելը իր լաւ ու գէշ կողմերը ունի:



Մարդ երբ շատ կապուած կ'ստ կլանուած է աշխարհային գործերով, կը նշանակէ որ ունի որոշ ունայնատութիւն: Իսկ երբ անտարբեր է աշ-

խարհային գործերու հանդէպ, ու կը զբաղի վերին գործերով միայն, ուր հմն իր մէջ պակաս է պարտականութեան գիտակցութիւնը:



Մեռնիլը աշխարհէն հեռանալ է, մնալով աշխարհի մէջ, ու վերածուելով տի մը տիզմի: Աս մեր գիտցածն է: Մեր չգիտցածը պիտի չգիտնանք:



Հիւանդանոցը գտնուիլ ու մահուան մասին շտամել... Գրեթէ անկարելի. մանաւանդ տարիքոտ տկարներուն համար: Կեանքը լի է անարդարութիւններով. անոնցմէ մեծագոյնը մահն է: Բայց միթէ կեանքը կրնա՞ր ըլլալ առանց մահուան: Ձէր կրնար ըլլալ անտարակոյս: Ուրեմն այդ մեծագոյն անարդարութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Եթէ լըլլար մահը անկար ծերունիներ «մա՛հ...» պիտի աղերտէին Աստուծմէ:

Միւս կողմէ, մարդիկ այնքան պիտի բազմանային ցամաքներուն եւ ջուրերուն վրայ, որ նոյնիսկ տեղ պիտի չունենային կենալու քով-քովի: Ձիրար պիտի նգմէին, խեղդէին, կոխտէին, հարուածէին, նաեւ պիտի ուտէին: Սիրազործելը պիտի դառնար անկարելի:

Մեծագոյն անարդարութիւնը՝ արդար անարդարութիւն մըն է: Մեռնելու է, քանի որ դատապարտուած ենք: Աստուծոյ գին անգամ մեռաւ: Երեք օր ետքը յարեաւ, քառասուն օր ետքը համբարձաւ: Բայց նախ մեռաւ...



Հայը իրաւամբ կրնայ պարծենալ իր «Մեծաքանչիւղով, իր մարդկեան տառերով, սեփական ոճերով, մասնաւորապէս իր բանաստեղծութեամբ, ճարտարապետութիւնով, մանրանկարչութեամբ, գեղջուկ երգերով, ինչպէս նաեւ արհեստներով, որոնք հասցուցած է արուեստի:

Հայը կրնայ պարծենալ նաեւ իր հիմնած ուրկանոցներով, անկերանոցներով, հիւանդանոցներով, որոնց հիմնադիրները հանդիսացան վեհափառներ, վեհապետներ, թագուհիներ, նաեւ իշխաններ ու իշխանուհիներ օրինակելի: Եւ այդ իշխանաւորները անժառանգներուն ծառայեցին իբրեւ հայ սամարացի:

Հայը թող շտոնայ պարծիլ այդ անցեալով, որովհետեւ Սէրը եւ Գթութիւնը եղան հայուն հողեկան հրեղէն ծղիւնները, քրիստոնէութեամբ զօրացեալ: Անոնց իտւարումը... Աստուած մի՛ արասցէ:



Գիշերային ժամերը չար են ընդհանրապէս, մանաւանդ հազ, ցաւեր, տազնապներ ու անքնութիւն ունեցողներուն համար:

Սակայն, ինծի կը թուի, թէ մեր պերճանաւուն վրայ, գիշերները մինչեւ արեւածագ կը թելէ ու կը թրթռայ հրեշտակ մը հսկայ: Հեռու կը





վանէ Մահը, մուտքը արգիւելլով: Կը հսկէ հրեշտակը, որ ձեռքին մէջ ունի հրեշէն սուր մը, որ կ'երկարէ ուղածին շափ, ու յաճախ հորիզոնական կը դառնայ, նման անիւր:

Յերեկը մերթ կաթողիկէ կրօնաւորն է, որ կ'անցնէ սենեակէ սենեակ, ամէնուն քաշխիւրով նշխար մը լաւատեսութեան, որտեքու մէջ իբրեւ ծաղիկ գետեղելով ժպիտներ եւ խօսքեր քաղցրութեան:

Նրխասարդ այդ կրօնաւորը կը բարձրացնէ բարոյական կորովը հիւանդներուն:

Տիւ եւ գիշեր գերբնական զօրքով օժտուած պահպաններ ունինք:



Ամէն ոք դանդաւտ մը ունի. ամէն ոք կ'ըսէ.

- Յողմած եմ, յողմած... Հանդէի...

Նաւով կամ առանց նաւու, պիտի հասնինք հոն ու շատերու տապա- նաքարին վրայ պիտի արձանագրուի.

- «Աստ Հանդի...», եւայլն...

Սակայն, հանգի'ստ է այդ, երբ չէ զգալի: Միթէ քայքայումը հան- դի'ստ է:

«Աստ Հանդի...»ն վերջին սուտն է: Մեռելային չէ որ կը ստեն: Ող- ջերը իրարու կը ստեն...

Պէտք է սապէս արձանագրուի.

Աստ հանգչի ճշմարտութիւնք՝

Սուտին հետ գիրկ գրկի...

Ճշմարտութեան եւ սուտին դաւակներն ու թոռները ողջ ըլլան:

Ն. Գ.

Մարտ - Ապրիլ  
Նալի կեդրոնական հիւանդանոց

## ՄԱՀԱՔԱՆԴԱԿ

Խոյ մը՝ որում լուսածայիտ կը հետեւի  
Տըզայ մը մերկ որաներով գիրկը լիցում,  
Ուրախութեան պայծառ տեսիլ խումկով օծում,  
Ուր խմբուած ազգիկներ կան մեղեդիի:

Նմբողը մէկն է անոնցմէ որ ունեցան  
Ծիծաղ իրենց վարդանման շրթունքներում.  
Երբ աշխարհն էր անոնց համար ազամենտում՝  
Նոր կը հնչէր սիրոյ հրաւէրը ոսկեծայն:

Տըզուն գիրկէն ինկած որայ մըն է կիսով  
Կուժ մը ծածկած, ծոցն անդորրիկ այն ազբիւրիմ՝  
Ուր խօլաբէս ծիծեռնակները կ'իջնէին:

Եւ սիրամարգ մը քեւերում ծիածանով  
Կը գարգարէ այս լուսփունք շիրմակոծ՝  
Ուր կը վառի կեանքի արեւն յաւերժութեան:

## ԱՓՍՈՍԱՆՔ

Թերեւս որք վարդը միայն գտնէի,  
Խորշակէն ետք՝ որ խամրեց յոյսն ալ վերջին.  
Բայց իմ նամբէս մըռայլանած, ամայի,  
Մէկը շանցաւ որ տար ինձ կրակն իր շունչին:

Թերեւս լուսեղ հանգրուանէ հանգրուան  
Ողջունէի երազիս հարսն արփենի.  
Բայց այս նամբան սեւ անդունդն էր գիշերուան՝  
Ուր մահացող գրագ մը տակաւ կ'արիւնի:

Ո՛րք էք կեանքի հրաւէրը սուրբ, մեծածայն,  
Երբ իր ծառէն ամբան մէջ իսկ թափեցան  
Ոսկին եւ խումկն աշուններէն խոստացուած...

Տեսիլքն դէմ կոյր են աչքերու հիմա.  
Անմատչելի բաժակին դէմ բիւրեղեայ  
Չեղբերու մէջ անխօս ազօթքը մընաց...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

# ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԵՀԵՆԻ ԳՈՒՌՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Բ.

Յաջորդ առտու, Հրամանատարը կրկին յայտնուեցաւ գերիներու ամբոխին առջեւ, եւ անոնց խօսեցաւ մեղմ ու թունաւոր ձայնով մը.

- Մտէնք ալ դիտէք, թէ վաղը Մեծ Պայրամն է, Ղուրպան Պայրամը: Իրերկունք, ձեր վերադարձին, պիտի ունենաք դեղեցիկ անակնկալ մը. աներևակայելի ընթրիք մը, առաս մսեղէն: Այդպէսով ձեր ուժերը կը կրկնապատկուին եւ պալիք օրերուն աւելի արդիւնաւոր աշխատանք կը կատարէք: Եւ որպէսզի ձեր ամբողջ ախորժակը պահէք իրերկուն խնճոցքին, այսօր ձեզի ա'չ մէկ ուսելիք պիտի արուի...

Նորեկներէն շատերը ուրախացան այս անակնկալ լուրը լսելով: Այնքան խրուած էին թշուառութեան գիրկը, որ արտաբաններու կարողութիւն չունէին այլեւս եւ ամէնէն շնչին դիպուածը իրենց մէջ կը հրահրէր գալիք լաւ օրերու յոյսը: Եւ անմիջապէս իրենց յոյսերու շղթան կը քակուէր եւ փոխադրուած կը կարծէին անցեալի լաւ օրերուն: Բայց հիները, որոնք լաւ կը ճանչնային հրամանատարը, իրենք զիրենք քունուած կը զգային սաղաթէլական թակարդի մը սանձին մէջ, կարելի չէր երեւակայել որ

այս երէկուան քարսիրտ հրէշը, մէկ օրէն միւսը, մարդ էակի մը վերածուած ըլլար: Գալով իրենց կացութեան բարեւուումին, կը մնար անկարելիութիւններու սահմանին մէջ:

Հրամանատարը լարունակեց.

- Այս տօնին առթիւ, ինչպէ՛ս գիտէք, հարուստ թէ աղքատ օսմանցին, իր տան առջեւ ոչխար մը կը մորթէ եւ կը հրաւիրէ իր դրացիները եւ նոյնիսկ անծանօթ անցորդները ճաշակելու անոր միտէն: ... Դժբախտաբար, մեր բարեխնամ կառավարութիւնը, այս նեղ օրերուն, ա'չ մէկ ոչխար կրցած է հայթայթել իր հաւատարիմ ծառաններուն, զոնէ ձեզի համար: Բարեբախտաբար, ունինք ձեր մասին մտածող մը, ձեր չափուլը՝ Հասանը: Ծնորհիւ իր հնարամտութեան, պատյ ձեզ զոհացնելու միջոցը: Եւ զէ՛մքին վրայ զծաղրուեցաւ երկդիմի ժպիտ մը: Բանի մը քայլ նահանջեց, եւ պահանջներուն կողմը դառնալով, պոռայց.

- Հիմա գործի՛, ընտրեցէք անոնք որ անատակ են աշխատանքի:

Վահան՝ ամբողջովին կոյր, կանդնած էր Միքայէլին եւ Թորգոմին մէջտեղը: Երբ Հասան եւ իր օգնականները նետուեցան գոհերուն վրայ, հրելով եւ հրմշակելով, Վահան շարժում մը ըրաւ, թեւ թորգոմին սևին վրայ դնելու հա-

մար, բայց ձեռքը պարսպութեան միայն  
 Հանդիպեցաւ: Ուզեց քայլ մը առնել դէ-  
 պի առաջ՝ ընկերոջ մօտենալու համար,  
 եւ գործուեցաւ մարդու մը: Երկու բա-  
 րեկամները որ քիչ մը հեռացած էին ի-  
 րարանցումի ատեն, նկատեցին վտանգը,  
 նետուեցան իրենց ընկերոջ կողմը, բայց  
 պահանջներէն մէկը գտան իրենց դէմ:  
 Հարուածներ ստացան, եւ չկրցան փրո-  
 կել վահանը:

Երկու պահանջներ անոր մէկական  
 թեւէն բռնելով, իրենց ետեւէն քաշեցին  
 մինչեւ դասապարտուածներուն խումբը,  
 որոնք իրարու կը սեղմուէին անհոյժ  
 շօտի մը պէս: Անոնք առկաւին կ'անդի-  
 տանային իրենց ճակատագրերը:

- Կանչեցէ՛ք մագործները, - բղա-  
 ւեց հրամանատարը:

Եւ քսանի չափ մարդիկ, որոնք կը  
 սպասէին, զօրանցին կողմը վազեցին,  
 լսելով իրենց տերոջ ձայնը: Իւրաքան-  
 չիւրի գօտիին անցած էր երկար ու սուր  
 դանակ մը:

- Ասոնք մորթեցէ՛ք, - հրամայեց  
 հրէշը, - յետոյ միսերը ջարդեցէ՛ք եւ  
 պատրասեցէ՛ք իրիկուան խնճոյքին հա-  
 մար:

Այս քսան մարդիկը, հայ գերիներ  
 էին եւ կը ծառայէին սպաներուն եւ պա-  
 հակներուն: Նախ չհասկցան, թէ ի՞նչ էր  
 իրենցմէ պահանջուածը: Ետարած մտա-  
 ցին իրենց տեղը: Անոնց վարանումը  
 կատրեցուց սպան:

- Եթէ տասը վայրկեանէն հրամանս  
 չկատարուի, ձեզ ողջ-ողջ թաղել կու  
 տամ: Այս խոզերը պիտի մորթէ՛ք, որ-  
 պէսպէս անոնց միսերը հրամցուին իրենց  
 ընկերներուն. հասկցա՞ք:

Քսան սպասուորները հասկցան,  
 բայց անշարժ մնացին իրենց տեղը: Հա-  
 սան ատրճանակի հարուածով մը գետին  
 փռեց անոնցմէ մէկը, միւսները սկսան  
 կամաց-կամաց յառաջանալ զոհերուն  
 կողմը. պահակներէն մէկը կրկին կրա-  
 կեց: Հրամանատարը փամփուշտով մը  
 պանկը փշրեց ետեւէն քալողին: Միւսները

սարսափած՝ հանեցին իրենց դանակները  
 ու ջարդը սկսաւ:

Հաւ սորված էին իրենց արհեստը,  
 ժամանակին մագործութիւն ըրած էին:  
 Ձախ ձեռքով կը բռնէին զոհին մազերը  
 եւ զայն գետին նետելէ ետք, դանակի  
 մէկ հարուածով զլուխը կը բաժնէին  
 մարմնէն: Արիւնը կը հոսէր իրենց հա-  
 դուստներուն վրայ, կը ժայթքէր, եւ ա-  
 նոր զաղլ հոտը կը գրգռէր իրենց ուռն-  
 ւերը, նողկանք եւ արբեցութիւն պատ-  
 ճառելով միանգամայն: Եւ շուտ փրո-  
 կուէլու համար այս կռիւմը, կ'աճա-  
 պարէին. կը տապալէին զոհերը, կը  
 հարուածէին: Մարմինները կ'արիւնէին  
 տիկերու պէս, եւ ծարաւ հողը իր անտե-  
 սանելի շրթունքները բացած՝ անյազա-  
 բար կը կլկեր կարծիք հեղուկը: Գլուխ-  
 անքը կը նետուէին մէկ կողմ, եւ մար-  
 մինները կը զիղուէին, կարծիք ու սեւ  
 կոյտ մը կազմելով, ուրկէ տակաւին կը  
 լսուէին հանդիւններ, անմարդկային ա-  
 ւայներ: Անգլուխ մարմինները ատեն մը  
 կը ցնցուէին, կը թփրտային, կը սարսը-  
 ուային. ոտքերը կը գարնուէին գետին,  
 ծուկերը կը ծալուէին ու կը բացուէին.  
 Թեւերը կը թափահարէին օդը, մատնե-  
 րը կը փրկուէին ու կը թուլանային եւ ի-  
 րաքանչիւր շարժումի կտորուած վիզէն  
 արիւնը կը ժայթքէր, եւ կամաց-կամաց  
 անդամները կ'անշարժանային այլանդակ  
 դերձերու մէջ:

Եւ քսան հազար սարուկները, որոնք կը  
 դիտէին այս սպանողը, այնպիսի աղաղակ  
 մը արձակեցին միաբերան, որ հորիզո-  
 նին վրայ կախուած արեւը կարմրեցաւ.  
 յանկարծ, կարծես այս հարիւրաւոր ձեռ-  
 քերը, արեան լիճերու մէջ թաթխուելով,  
 դոյն կը քսէին անամօթ աստղին երեսին,  
 որ հարսած սրիկայի մը պէս սկսաւ դան-  
 դայել եւ պահուրտեցաւ քլուրներուն հ-  
 տեւը եւ երկինքը դարձաւ մուսլ ու  
 մութ, մինչ աստղերը սկսան պլպլալ ցե-  
 րեկ աչքով: Հրամանատարին աչքերը  
 սառած մնացին եւ դէմքը նմանեցաւ  
 դիակի մը դէմքին: Բայց մեկնելէ առաջ  
 ինքզինքը գտաւ, խնդաց բարձրաձայն  
 եւ ըսաւ.

— Ահա ձեր իրիկուան ուտելիք մի—  
 ուր. ո՛չ մէկ տահն եւ ո՛չ մէկ տեղ այս—  
 պիտի Ղուրպան Պայրամը չէ սարքուած :  
 Կատարի վայրոյթ մը կը բռնկեցնէր  
 քսան հազար սորուկներուն կուրծքերը,  
 եթէ զեկամար մը ունենային, եթէ վար—  
 ժըւած ըլլային պայքարելու, անպայ—  
 ման կը խոյանային այս անպիտաննե—  
 րուն վրայ, կը մեռնէին ու կը մեռցնէին.  
 սակայն անտեսանիլի ձեռք մը զիրենք  
 դամած էր իրենց տեղը :

Միքայէլ ուզեց վերջին անգամ տես—  
 նել իր նահատակ ընկերոջ մարմինը : Ան  
 պտուկած էր կոնակին վրայ, ուրիշ մար—  
 միկներով չըջապատուած : Գլուխը կը  
 գտնուէր բաւական անդին, զէպի ոջ :  
 Դէմքը վարձած իր ընկերներուն կողմը,  
 կոյր աչքերը բաց : Միքայէլ շունչ մը  
 զլաց իր քովը, ձեռք մը, որ կը փնտէր  
 իր ձեռքը եւ լսեց Թորգոմին ձայնը, որ  
 կը մռնչէր, պրկուած շրթունքներուն  
 մէջէն .

— Մի վախճար, վահան, վրէժդ  
 պիտի լուծեմ : Կրկին կ'երգնում քու  
 ինզն ու անդամատուած մարմնիդ վրայ,  
 որ չմեռած պիտի լուծեմ քու վրէժդ :

Պահպանուէր սուլեց, եւ հսկիչները  
 անմիջապէս բիրերը վերցուցին ու ին—  
 կան գերիներուն վրայ եւ զանոնք քշե—  
 ցին Նամբարէն գուրս զէպի աւաղի ու  
 քարի հանքերը :

Իրիկունը, զիրենք կանուխ վերա—  
 գարձուցին : Այս անգամ հանապազօրեայ  
 իրթեւեղ տեղի շունեցաւ, նախ՝ որով—  
 հետեւ Պայրամ էր, եւ յետոյ՝ ճամբան  
 շատ՝ երկար տեւած էր, որովհետեւ  
 սորուկները կարելին ըրած էին հսկիչ—  
 ներուն գործը զժուարացնելու համար,  
 եւ կը ցրուէին աջ ու ձախ : Այդ օր զիտկ—  
 ներուն թիւը միւս օրերուն կրկինը եղաւ :

Արեւը մարը մտած էր, երբ հասան  
 Նամբար : Անմիջապէս սկսաւ կերակուրի  
 բաշխումը : Ամանները կը լեցուէին ա—  
 ուսորէն : Իւրաքանչիւրին բաժին կ'էյ—  
 նար խոշոր մսի կտոր մը, ձեռք մը, ստք  
 մը, սիրտ մը : Պահպանները շարքերու մէջ  
 մտած, զէնքերու եւ բիրերու սպասնա—

լիքին տակ կը ստիպէին որ ուտեն : Բայց  
 ո՛վ կրնար մասնակցիլ այս զժոխային  
 կերուխումին : Կը նախընտրէին մեռնիլ,  
 քան ձեռք երկարել այս յօշոտուած մա—  
 սունքներուն : Եւ շատեր մեռան հար—  
 ւածներու տակ, ուրիշներ պատասնիբը  
 պահեցին իրենց ցնցոտիներուն մէջ,  
 կարծել տալու համար որ կերած էին ի—  
 րենց բաժինը . . .

Եւ զիչերը տեղի ունեցաւ խորհրդա—  
 ւոր ու հոգեպարար արարողութիւն մը :  
 Մինչ ամէն կեանք թաղուած էր լուռ—  
 օտան երգիլ «Հայր Մերք», մինչ հապա—  
 բաւոր եղունգներ փոսեր կը փոքէին,  
 Նամբարին մէկ անկիւնը : Երբ առաջին—  
 ներուն եղունգները կը կտրուէին կամ կը  
 մաշէին, ուրիշ հազար մը կ'անցնէր ի—  
 րենց տեղը եւ կը շարունակէր փոքել :  
 Քարերուն զէմ կը մաքառէին, եւ քա—  
 նոնք փոշիի կը վերածէին : Իրենց կամօք  
 աւելի կարծր էր, քան անապատին ժար—  
 ուրը : Այսպէս, փշաթելերու երկայնքին  
 փորուեցան քանի չափ խորունկ փոսեր,  
 եւ հարիւր մարտիրոսներուն կտորները,  
 մասունքները, ձեռքէ ձեռք անցնելով  
 թաղուեցան մայր հողին մէջ, հոն ննջե—  
 լու համար յախտանա : Մէկուն ձեռքը  
 կը դրուէր ուրիշի մը սրտին հետ, մէ—  
 կուն ոտքը ուրիշի մը ուտին հետ : Եւ զի—  
 շերուան մնացած մասը, այս քսան հա—  
 զար զերիները, որոնց համար բունը  
 կեանք կը նշանակէր, հսկեցին եւ ողո—  
 թեցին իրենց պատուհասուած ընկերնե—  
 րուն հոգիներուն փրկութեան համար :

Օրեր շարունակ արեան հետքերը  
 մնացին գետին երեսը եւ կոխկրտուե—  
 ցան պիղծ դահիճներու ներքաններուն  
 տակ : Պէտք էր դարձանուէր այս սքը—  
 րապոծութիւնն ալ : Ամէն իրիկուն, զե—  
 րիները, կամուրջն վերադարձին, հա—  
 զար ճարպիկութեամբ, ափ մը հող կը  
 պահէին իրենց ցնցոտիներուն ծալքե—  
 րուն մէջ եւ զայն կը նետէին երկրա—  
 դունտի այս յանցաւոր ու սեւցած մասին  
 վրայ : Ասկայն անկարելի եղաւ փրկել  
 զլուսինները : Անոնք նետուած էին փշա—  
 թելերէն անդին եւ անթիւ զիչերնիս կե—

ըը դարձան շնագայլերու, ազոտաներու եւ աշուէաներու:

Եւ կամաց-կամաց, յոյսը, որ երբեմն մոռացութեան պահերուն կը կայծակնա՛ւարէր իրենց թմբած ուղեղները, շողիացաւ մահաբոյր վերջալոյսներու պատանջին մէջ, թռչունի մը պէս, որ ինկած է պօսօ օձի մը երակը:

Իւրաքանչիւրի սրտին մէջ թափանցած էր մահուան կարօտը: Կը նախանձէին անոնց, որոնք դանդաղօրէն կը մեռնէին դիմացի մահուան փայտերուն կապուած, կամ անոնց՝ որոնք ուժասպառ կ'իյնային տաք հողին վրայ ու կը մերժէին կրկին մտնել զեննական կեանքին գունդին ներս, անոնց՝ որոնք զետը կը նետէին աղբով լեցուն պարկերու պէս, անոնց՝ որոնք կը սուիմահարէին ժամացի համար:

Մահուան կարօտը այնքան ուժեղ էր, որ ոչ սքի միտքը կ'իյնար անձնասպան ըլլալ:

Ճ

Քանի մը օր ետք, առաւօտ մը, զերիներուն հաւաքումը սովորականէն ուշ տեղի ունեցաւ: Հրամանատարը, սպանները, զինուորները եւ հսկիչները յայտնուեցան մաքրուած համազգեստներով եւ ներկուած կօշիկներով: Առաջին անգամ ըլլալով, պահակները չմտան շարքերու մէջ, չգործածեցին իրենց ըրերը, չբռնելու համար աղտոտ ցնցոտիներուն:

Եւ սպասումը սկսաւ արեւին ճարձատող խորոյկին տակ:

Ինչ կը պատահէր արդեօք: Ինչո՞ւ այս անսպասելի բարեացակամութիւնը: Արդեօք գողգոթան վերջնալոյս՞ն վրայ էր: Եւ իւրաքանչիւրը ուղեղին մէջ առասպել մը կը հիւսէր: Կը յուսային տեսնել կեանքին միւս երեսը, ժպտուն երեսը:

Բոլորին գէմքը դարձած էր դէպի հիւսիս: Եւ վերջապէս, հեռուն, Թասուլ-Այն տանող ճամբուն վրայ երեւցաւ փոշիի փոքրիկ ամպ մը, որ երթալով կը խոշորարար: Ատեն մը ամպը անհետացաւ: Բլրակի մը հոտը, կրկին երեւցաւ եր-

կար ժամանակ ու կանգ առաւ Եփրատի ափին, ճի՛շդ այն տեղը, ուր կը գտնուէր զինուորական խոշոր լասաքը, որ կը ծառայէր ծանր բռններ փոխադրելու մէկ ափէն միւսը: Կէս ժամ չանցած՝ փոշիի ամպը, աւելի ճի՛շդը ամպերը կրկին երեւցան զետի աջ ափին: Սպայ մը հրաման արձակեց եւ քսանի չափ զինուորներ ենթաստղայի մը զլիսաւորութեամբ մաղկցին մինչեւ ջամբարին մտաքը ու վէճ գլխաց շարուեցան, բարեկերպատրաստ: Եւ կամուրջ տանող ճամբուն վրայ, փոշիի ամպերով շրջապատուած երեւցան երեք ինքնաշարժներ, ու եկան կանգ առին փշաթելերուն քով: Ենթասպան նշան ըրաւ որ յառաջանան: Զինուորները անմիջապէս բարեւի կեցան եւ մեքենաները դանդաղօրէն անցան մարդկային ցանկապատին առջեւէն, ուղղուեցան զօբանոցին կողմը, ուր սպաները իրենց կը սպասէին:

Միջայէլ, միւս բոլոր գերիններուն պէս, աչքերը չէր հեռացուցած ինքնաշարժներէն: Նորեկները բարձրատիճան սպաներ էին, չորսը գերմանացի, մնացեալները՝ թուրք: Հրամանատարն ու սպայակոյտը արագ քայլերով մօտեցան նորեկներուն եւ բարեւի կեցան, յետոյ ձեռքեր սեղմուեցան եւ բոլորը միասին քալեցին գէպի գերիններուն խիտ շարքերը: Գերմանացիները, անմիջապէս ստիճիէն օգտուելով, լարեցին իրենց լուսանկարչական մեքենաները եւ սկսան նկարել, ճոխացնելու համար իրենց անձնական հաւաքածոները այս անգտանելի տեսարաններով, որոնք կը փաստէին խրկեց զինուորական ուժը և թուրք զաշնակցին վայրագութիւնը: Քանի մը գերիներ, որոնք գերմանական որբանոցներուն մէջ ուսում առած էին, փորձեցին շարժերէն ելլել, մօտենալ նորեկ սպաններուն և անոնց բողոք ներկայացնել, որպէսզի տեղեակ ըլլան իրենց կրած տառապանքներուն: Բայց ո՛չ ոք ազանջ զբաւ իրենց բողոքներուն: Գերմանացի սպաններուն խտրաւ արգելուած էր միջամտիլ ըլլալ իրենց դաշնակցին ներքին խնդիրներուն: Եւ զարմանալին հոն էր, որ հսկիչները

չմխլամտեցին, ո՛չ թէ որովհետեւ կը վախնային հիւրերէն, այլ չէին ուզեր խանդարել շարքերուն կանոնաւորութիւնը:

Արդէն ոչ ոք ականջ կախեց այս խրեակներու խօսքերուն: Գերմանացիները կը հիանային թուրքերու այս հնարամտութեան, աղք մը փճացնելու յարատեւ ու արդիւնաւոր ջանքերուն վրայ:

Երբ գործողութիւնը վերջացաւ, հրամանատարը իր հիւրերը առաջնորդեց դէպի իր բաժինը, ուր պատրաստել տուած էր խմիչքներ եւ ուտելիքներ: Հարկ անհետացած էին շէնքի մը ետեւը, երբ Հակիչները իրենք գիրենք դտնելով, սկսան եռանդով հարուածել եւ ժարդկային կարաւանին հակայ կծիկը քակուեցաւ նեղ ու փոշոտ արահետին վրան, որ կը տանէր դէպի կամուրջ, դէպի այդ ճիւղաղը, այդ եօթղլխանի դէպը, որ ամէն օր կը լափէր հարիւրաւոր հայերու կեանքը:

Գերիները մըջիւններու պէս կ'երթեւեկէին, կրեւով հակայ քարեր եւ աւաղով լեցուն ծանր կողովներ: Երբեմն կը կէտէին, կը ծալուէին անգութ ծանրութեան տակ ու դեռին կը փռուէին: Անոնք որ կը հետեւէին, աւելորդ ճիւղ մը չընելու համար, կը կոխկուտէին իրենց ընկերով դիտապառտ ու շարշարած ժարմինը: Կրնար ան ըլլալ իրենց աղապանը, եղբայրը նոյնիսկ, միայն կը խուսափէին նայելէ անոր աղաչող աչքերուն:

Միջայէլ կը հսկէր աշխատանքին վրայ, կ'երթար-կու զար, կ'օգնէր նեղի մնացածներուն: Երբեմն, կանդնած կամ ուրջին ծայրը՝ կը դիտէր տակէն հոտոց մուրերը: Գիտակներ կը ծփային հոտանքնի վար, երբեմն առանձին, երբեմն խումբ խումբ, իրարու կապուած: Անոնք որքան թէ մօրէ մերկ էին, որովհետեւ զանոնք չսպաննած կը զրաւէին անոնց հապուստները, իր վարձք իրենց յոգնութեան: Բոլորը կը կռէին վերքեր, դանակի կամ կացինի հարուած, բրիչի խորունկ փոս: Մարդոց դիակները ընդհանրապէս ծակծղկուած էին փամփուշտներով:

Երբեմն երկուսարդ աղջկան մը դիակը, երկար մազերը փռուած ջուրին մակերեսին վրայ, ծառի մը ճիւղին պէս, կը հասնէր կամուրջին տակ ու հոն կը դառնար ինքն իր վրայ: Այնքան թարմ էր տակաւին, որ դէմքը կը պահէր իր գիծերուն գեղեցկութիւնը, ողջ էր կարծես: Մեղմ ժպիտ մը կը սաւառնէր շրթերուն շրթերուն վրայ, ուղղուած մահուան, որ վերջապէս օգնութեան հասած էր իրեն:

Միջայէլ ուշի ուշով կը դիտէր, վախնալով որ այս անձեղ դիակը կրնայ յանկարծ սեւ դիւ մը քաշել իր անցեալին վրայ: Թէ՛ կրնայ յանկարծ փլիլ այն միակ կըտղը, որուն տակաւին կը հասատար: Եթէ յանկարծ ճանչնար այդ խաղաղ ու կորսուած դէմքը, եթէ ան ըլլար իր ջորը՝ Արփին, Շուշանը կամ Չապէլը:

Երբեմն հոտանքը, անհասկնալի ճամհաճոյքի մը հնազանդելով, ժարմինը կը բերէր միջին դետափ: Այն ատեն օարտուռ մը կ'անցնէր բոլորին ուղեղէն: Եթէ պահակները տեսնէին զայն, անմիջապէս կը քաշէին անկիւն մը, ժայռի մը ետեւ, ինքնութիւնը քննելու պատրաստուելով, սակայն ջստն հազար հայ գերիները դիտէին, թէ այդ ճիւղները չէին ամբողջաբար դիակները պղծել: Եւ հայ դարաւոր պատուախնդրութիւնը կ'արթննար յանկարծ այս խրեակներու սրտին մէջ: Քանի մը գերիներ, մահը արհամարհելով, դիակը կը հեռացնէին ափէն եւ կը յանձնէին հոտանքին, որպէսզի զայն տանի Հեռու, մինչեւ ծով, մինչեւ ովկիանոս: Իսկ երբ պատահէր որ ան իյնար հրէշներուն ձեռքը եւ բռնաբարուէր, այն ատեն զայն կը պետեղէին փոսի մը մէջ, իրենց ճամբուն մօտ, եւ իւրաքանչիւրը իր կողովէն աւաղի ափ մը կը նետէր, մինչեւ որ մարմինը անհետանար դաղջ հողի սաւանին տակ:

Միջայէլ չէր կրնար համբել դիակներու թիւը, որ դեռը՝ սպաւոր մօր մը պէս՝ կը շարկէր ու կը տանէր ակունքէն մինչեւ քերանը: Հարիւրներով, հազարներով կ'անցնէին քղկտուած կիներ, ան-

զամատուած մարդեր, յօշոտուած կոյս աղջիկներ, որոնք իրենք զիրենք վար նստած էին ժայռերու զառաթէն, աղատուելու համար խուժաններու մոլուցքէն:

Արեւը հասած էր երկինքին կեդրոնը: Հսկիչներուն ճաշի պահն էր, գերիները կրնային միայն ջուր խմել, ո՛չ թէ գետէն, այլ այն փոսէն, որ կը զտնուէր շաղախ պատրաստելու տեղը: Անմիջապէս որ սուլիլը հնչեց, բոլորը մէկ կանգ առին: Անոնք որ աւազ կը փոխադրէին, կողովը դրին գետին, անոնք որ քար կը փոխադրէին, քարը դրին գետին, որպէսզի գլուխներն հանդէսեցնեն...:

Հապիւ կը փորձէին աչքերին զոցել, երբ յանկարծ հսկիչներէն մէկը ձայն տուաւ, միւսները ճաշերնին շաւարտած՝ սոքի ելան եւ խոյսացան անշարժացած մարմիններուն վրայ, որպէսզի գործի լծուին անմիջապէս: Երկվայրկեանի մը մէջ, բոլորը սոքի էին, իրենց բռնները շարկած եւ պատրաստ վերսկսելու յաւիտենական երթեւեկը:

Ձամբարի կողմէն փոշիի ամպ մը լարձրացած էր: Եարժակի մը աղմուկը կը լսուէր եւ ինքնալարժ մը կը մօտենար իրենց կողմը, որ քանի մը վայրկեան ետք, եկաւ ու կանգ առաւ կամուրջին մօտերը: Ձորս սպաներ, երկու թուրք եւ երկու գերմանացիներ վար իջան: Միքայէլ, որ կը գտնուէր կամուրջին ծայրը, դարձաւ այցելուներուն կողմը եւ յանկարծ սիրտը սկսաւ բարբախել վանդակուած թռչունի մը պէս: Ձորս սպաներէն մէկը իր կողմը կը նայէր: Ժանչցաւ Օրհանը, հարիւրապետի համազղեւտով: Յանցանքի վրայ բռնուած մանուկի մը պէս գէժքը անմիջապէս դարձուց ուրիշ կողմ:

Ի՞նչ ճամբայ կտրած էին երկու ընկերները Համիտիէ կայարանէն իրենց թափանուսէն ետք: Մէկը բարձրացած էր ու կը վայելէր փառքն ու ապահովութիւնը, որովհետեւ թուրք էր, միւսը զահաւիթի մը ահաւոր անդունդի մը մէջ, կորսնցուցած մարդկային ամէն իրատունք, որովհետեւ հայ էր:

– Թո՛ղ երկրաշարժները եւ վարպետները ընկերանան էֆէնտիներուն եւ անոնց տան պէտք եղած բացատրութիւնները, – Հրամայեց Հասան:

Տառնակ մը խլիակներ վազեցին սպաներուն կողմը, անոնց կամքը կատարելու համար: Բարձրացան կամուրջին շինուած մասին վրայ: Միքայէլ արագարագ հեռացաւ եւ հասաւ շինութեան ծայրը, գէժքը ուղղած գէպի միւս կողմ: Վարը, Եփրատը կը հոսէր հուսկու եւ պայրացած: Յորձանքները կը զարնուէին կամարին հիմերուն՝ կատաղած ցուլերու պէս, զանոնք քանդելու համար: Երբեմն կը նետուէր ափերուն վրայ, կը փորձէր հունէն դուրս ելլել եւ օդնութեան հասնել իր գուռակներուն, զորս կը շարժարէին ու կը ջարդէին անխնայ:

Խուճըրը կը մօտենար: Միքայէլ կը լսէր անոնց խօսակցութիւնը մերթ թրոքերէն, մերթ գերմաներէն: Ինչ որ կ'ըսէին ո՛չ մէկ կարեւորութիւն ունէր իրեն համար: Այդ մարդկային աղմուկին մէջ գոյութիւն ունէր միայն ձայն մը, Օրհանին ձայնը: Անոր խօսքերուն իւրաքանչիւր վանկը կը ցնցէր իր էութեան հիմերը եւ կը կառուցանէր անցեալի քաղցր օրերը, խաղաղ եւ յոյսերով յղի վայրկեանները: Օրհանին ձայնը չէր փոխուած երբեք, նոյն ընտանի շեշտը ունէր: Ան չէր նմաներ միւս սպաներու ձայնին, սրտնք իրեն օտար ու խորթ կը թուէին, անմարդկային ու շար շեշտով մը բռնաւարտուած:

– Դուն, – պրտաց յանկարծ Հասան, – ի՞նչու չես մօտենար էֆէնտիներուն, անոնց ուղած բացատրութիւնները տալու:

Հասանին ձայնը զուսպ էր, բայց սպառնալիքներով ուժանակուած: Սպանները դադարեցուցին իրենց խօսակցութիւնը եւ Հասանին կողմը դարձան: Միքայէլ գլուխը վեր առաւ եւ աչքերը հանդիպեցան Օրհանի աչքերուն: Միասին տրժգունեցան եւ իրենց նայուածքները իրարու հիւսուեցան խիտ խեղճ մը թելերուն պէս: Օրհան անմիջապէս ըմբռնեց կոցութեան ծանրութիւնը: Պահ մը հետ-



զանդելով ներքին մղումին՝ պիտի պարու բազուկներուն մէջ առնէր իր սիրելի ընկերը, բայց Միքայէլին կեցուածքէն հասկցաւ, որ ո՛չ ոք պէտք էր տեղնակ ըլլաք իրենց նախկին բարեկամութեան: Օրհան շատ շուտ վերադառաւ իր պաղարիւնութիւնը եւ ձգելով իր երեք ընկերները, որոնք կը քննէին հողէն հանուած արժանիքի մը կտորը, քանի մը քայլ առաւ Միքայէլին կողմը եւ բարձրաձայն ըսաւ Հասանին.

- Ո՞վ է այդ պինդ գլուխ կեամբուրը:
- Այս կամուրջին շինութեան վրայ հակող միտնտիպներն մէկն է:
- Շատ լաւ, ես հետը խօսելիք ունիմ: Կ'ուզեմ հասկնալ, թէ ի՞նչու այս կամարը տկար հիմերու վրայ շինուած է: Երկու ընկերները քաղցրին մինչեւ կամուրջին միւս ծայրը, հեռու զտնուելու համար քեզանքներէ: Զուրը կը խուսէր կամարին տակ եւ իրենց ձայները ստնելով՝ կը տանէր մինչեւ ունայնութեան ափերը:
- Միքայէ՛լ, - ըսաւ Օրհան կտորըտըւած ձայնով մը, - Միքայէ՛լ, այս դո՛ւն ես:

Միքայէլ գլուխը խոնարհեցուց եւ չկրցաւ պատասխանել: Եւ հին օրերու յիշատակները, որոնք կորուսած էին ուղիղին վարի խաւերուն մէջ, դարձնակալ լաւաներու պէս դուրս պտուխկացին յանկարծ: Բարեկամին ձայնը ունէր նոյն սիրալից շեշտը, երբ միասին ճեմելով համալսարանի կանաչ պարտէզներուն մէջ, կը խօսակցէին, կը կատակէին: Կծու բան մը բարձրացաւ Միքայէլին կուրծքէն եւ հասաւ մինչեւ աչքին կողերը եւ աղի արցունքի կաթիլներ եկան հաւաքուիլ շրթունքներուն ծայրը: Օրհանին աչքերն ալ սկսան խոնուանալ եւ թաշկենակը հանելով արթնց կոպերը:

- Ամիսներէ ի վեր, հանդիպած տեղը, քեզ կը հարցնեմ: Քանի նամակներ չըկեցի տունդ եւ պատասխան չառի: Եւ քեզ կը դռնեմ հոս: Ըսէ՛, ի՞նչ պատահեցաւ մեր բաժանումէն հետք:

- Ի՞նչ պիտի պատահի, ահա կը տեսնես վիճակս: Ստորակ մըն եմ հազարս-

տր ստրուկներու մէջ. կենդանի խամանիկ մը, անուս եւ անգութ պահակներուն ձեռքը:

- Մի՛ չափազանցեր, Միքայէլ: Մենք բոլորս ալ ստրուկներն ենք մեր պարտականութեան: Պատերազմ է եւ հայրենիքը իրաւունք ունի մեզմէ շատ պահանջելու, նոյնիսկ մեր կեանքերը:

- Այնքան կ'ուզէի՞նք ծառայել այս հայրենիքին, նոյն իսկ մեր կեանքը տալով, բայց ան միշտ խորթ մայր մը եղած է մեզի հանդէպ: Մենք՝ հայերս, զայն երբեք չուրացանք, միայն ուղեցինք որ մեզի հետ վարուի հարազատ ծնողքի մը պէս, հասկնայ մեր ցաւերը:

- Շատ լաւ գիտես որ պատերազմը անբնական վիճակ մըն է եւ կառավարութիւնը սահպտած է ձեռք առնել արտակարգ միջոցներ, երկրին պաշտպանութիւնը ապահովելու համար: Ամէն երկիր նախ եւ առաջ կ'ուզէ ապահովել իր թիկունքը, կը պարզէ սահմանամերձ շրջանները, որպէսզի ժողովուրդը չվնասուի ճակատամարտներու ատեն, կը ձեռքաւարտէ կասկածելիները: Բոլոր երկիրները անխտիր, արդելափակման կայաններ հաստատած են:

- Բայց մենք միթէ Օսմանեան կայսրութեան հպատակները չե՞նք: Ամբողջ ազգ մը չի կրնար կասկածելի դռնալ եւ վտարուիլ իր օճախէն ու նետուիլ մահուան ճամբաներուն վրայ: Հայերը բաժնուած են իրենց զուակներէն, եղբայրներ իրենց քոյրերէն: Զինուորներ՝ ճակատներէն հեռացուած են եւ վերածուած զբրտաստներու, որովհետեւ հայ են: Այս ջամբարին մէջ կան մարդիկ, որոնք քաշարար կտուած են ամէնէն վտանգաւոր գիրքերուն վրայ, վիրաւորուած են եւ հիմա հոս ծաղրը դարձած են անուս եւ ստորին գաւթիլներու: Եթէ մարդիկը, կիները կասկածելի են, ինչո՞ւ ուրեմն կը ջարդեն անմեղ մանուկներ եւ ծծկեր նորածիններ:

- Օրհան չպատասխանեց:
- Սեպենք թէ, ըստ կառավարութեան, հայերու մէջ կասկածելիներ կային: Պէտք չէ՞ր զանոնք մէկիկ-մէկիկ

դատէին, որոշէին իրենց յանցանքները եւ հանգիտ ձգէին անգէն ու խեղճ ժողովուրդի: Կառավարութեան նպատակը յանցաւորները մեկուսացնել չէ եղած, այլ միայն ու միայն ջնջել հայ անունը, հայ ազգը:

Օրհան գլուխը վեր առաւ ու կրկին շրտեցաւ:

- Հոս, այս ջամբարին մէջ տեղի կ'ունենան այնպիսի բաներ, այնքան անհելի, որ ոչ ոք պիտի հաւատար որ կը գտնուին մարդէակներ, որոնք այնքան վայրագօրէն, այնքան դառնօրէն կը վարուին իրենց նմաններուն հետ: Հոն լարձուեցնելուն վրայ զոհեր կան՝ կապուած ցիցերու, արեւի կրակին տակ: Կը մնան անօթի ու ծարաւ, մինչեւ որ մահը բարեհաճի վերջ դնել իրենց շարժարաններուն: Եթէ մէկը մտնի, անմիջապէս ուրիշ մը կը կապեն տնոր տեղը:

- Զամբարին հրամանատարը մեզի յուցատեց, որ անոնք ըմբոսաներ եւ աւուղաներ են, ե կը պատժուին, օրինակ ծառայելու համար միւսներուն:

- Եւ զուք հաւատացիք անոր սուտերուն եւ իրաւունք տուիք իրեն: Ընտարտութիւնը սակայն բոլորովին տարբեր է: Ամէն իրիկուն հարիւրի չափ դիակներ կ'իյնան ճամբաներու վրայ, սկարութիւննէն եւ հարուածներէն, եւ գտնուի թաղելու համար հրամանատարը կ'ընտրէ ըստ բախտի հարիւր հատ գերի, որոնք դիակները շարձած կ'երթան գիմացի բլուրներուն կողմը եւ այլեւ չեն վերադառնար: Ո՞վ կրնայ բողոքել, ո՞վ կըրնայ հաշիւ պահանջել իրմէ:

- Կրկին կը շափազանցես, Միքայէլ: Կառավարութիւնը պէտք ունի աշխատող բազմակներու եւ երբեք չ'արտօնի, որ այդպիսի բաներ պատահի:

- Կառավարութիւնը: Որքան միամիտ ու բարի ես, Օրհան: Այս երկրին մէջ տեղեւ մը չի շարժիր, առանց ներքին գործոց նախարարին: Անոր վերջնական ծրագիրը եղած է ջնջել մեր ազգը ամբողջ, ծծկեր մանուկէն մինչեւ հաշմանդամ ծերակը: Այս մեռով կ'ուզէ լուծել հայկական հարցը:

- Այդպիսի բան չի կրնար ըլլալ. եւ այդ լուրերը տարածողները մեր կայսրութեան ռիսիկո՞ թշնամիները կրնան միայն ըլլալ:

- Քանի մը օր առաջ, Ղուբայան Պայրամի առթիւ, ջամբարին հրամանատարը խողխողել տուաւ հարիւրի չափ գերիներ, որոնց մէջը կար իմ մանկութեան լաւ ընկերներէս մէկը, եւ անոնց միտով պատրաստել տուաւ մեր տօնական ընթրիքը, ըսելով որ կառավարութիւնը մեր մասին չէ խորհած եւ չէ գրկած մեղի յատկացուելիք ոչխարները:

Օրհան գիտէր, թէ հայերը տեղական կ'ըլլային, կ'աքարուէին, կը թալանւէին: Ինք համաձայն չէր այս բռնութիւններուն եւ սակայն կը համակերպէր: Միքայէլին պատժածը լսելով անպատեհացաւ ամօթէն:

- Այդ անկարելի է, Միքայէլ, անկարելի է, - պոռայ գայրացած, բաներ կան որ զգաններն իսկ կ'անդիտանան: Եթէ ըսածներդ ճիշդ են, անմիջապէս կը տեղեկացնեմ սպայակոյտին, որպէսզի այս հրէշը գտնէ իր արդար պատիժը: Եթէ իմ խօսքս մտիկ չեն ըներ, միջամտել կու տամ հօրս:

- Այդ ընելով դուն միայն քեզի վնաս կը հասցնես եւ մեզի ոչ մէկ օգտակարութիւն կրնաս ունենալ: Եթէ նոյնիսկ սպայակոյտը այդ հրէշը պաշտօնանկ ընէ, տեղը պիտի դայ իրմէ աւելի դէշ մը: Լաւ կ'ընես որ այս խնդիրներուն յատուցելու: Զգէ մեզ մեր ճակատադրին, իսկ եթէ խօսքերուս հաւատալը չի գար, քիչ յետոյ, երբ ջամբար վերադառնաս, այդ մը նետէ ճիշդ այն տեղը, ուր զոհերը խողխողուեցան ոչխարներու պէս: Հոն պիտի տեսնես հսկայ բիծ մը: Անմեղներուն արեան հետքն է, որ կը մերժէ անհետանալ: Որովհետեւ, եթէ պահ մը ընդունինք որ իրաւունքը զօրաւորին է, պատմութիւնը մեզի ցոյց կու տայ, թէ սուրով ու զուլումով հիմնուած կայսրութիւնները հուրով անհետացած են: Տիեզերքը, իբր հաւատարակութիւնը պահելու համար պէտք ունէր արքարութեան, այս է բնութեան օրէնքը: Ան

յամբաքայլ կ'ընթանայ խորհրդաւոր  
օամբաներէ եւ կը պատժէ յանցաւորնե-  
րը ի՛ր ընտրած վայրը, ի՛ր ուղած ժա-  
մուն: Ես կը հաւատամ այդ արդարու-  
թեան: Մեր թափած անմեղ արեան իւ-  
րաքանչիւր կաթիլը ծանր պիտի կշռէ  
պատմութեան նժարին մէջ: Դահլիճներով  
չէ որ քուրքիան յաղթական պիտի ելլէ  
այս պատերազմէն:

- Կ'ուզե՞ս որ քեզի ազատեմ այս  
դժոխքէն: Ինձի օգնական մը պէտք է  
ընթացաւորութիւններու ընթացքին: Այ-  
սօր իսկ կրնաս հետ մեկնիլ:  
Միքայէլ նայեցաւ ընկերոջը երե-  
սին: Արդեօք անոր ըրածը կատա՛կ էր:  
Մեկնի՛ւ այս դժոխքէն: Ազատ շարժիլ,  
ազատ շնչիլ: Ձտեսնել ընկերներուն ցըն-  
ցոտիները...

- Ազատուի՛ւ այս դժոխքէն, կ'ուզեմ,  
այո՛, բայց ո՛չ իբր դասալիք: Դժբախ-  
տութիւնը այնպիսի ամուր կապերով դիւ

միացուցած է այս անտէր հօտին, որ մի-  
սերէս մաս մը պիտի մնայ հոս: Կարելի  
է Միամական քոյրիք իբրտէ բաժնել,  
առանց անոնցմէ մէկուն մասը պատճա-  
ռելու: Կրնա՞ս բան մը ընել այս փան  
հազար պատուհասուած մարդ հակներուն  
համար, կրնա՞ս մեղմացնել անոնց վի-  
ճակը: Ա՛յս է միակ շնորհքը, որ քեզմէ  
կը խնդրեմ, եթէ բարեկամութիւն բառը  
տակաւին իմաստ մը ունի քեզի համար:

- Անմիջապէս կը խօսիմ հրամանա-  
տարին, անուղղակի ձեւով եւ վստահ եմ  
որ վաղն իսկ աւելի մեղմ կը վարուի ձե-  
զի հետ: Ես ապերախտ մը չեմ, Միքա-  
յէ՛ւ, և միշտ, ի՛նչ որ ալ պատահի, սըր-  
տիս մէջ տեղ պիտի ունենաս: Նորէն կը  
կրկնեմ, այսօր իսկ քեզ կրնամ հանել  
այս դժոխքէն...

Ձիւնուր մը վազելով մօտեցաւ Օր-  
հանին եւ ըսաւ որ կառքը պատրաստ էր  
մեկնելու: Երկու բարեկամները հրաժեշտ  
առին եւ ընդմիջաւ բաժնուեցան իբրտէ:

(Շար. Ծ)

Ն. Զ.



ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

### ՍԻՐԵԼԻ ԱՍՏՈՒԱԾ

Անցեալ գիշեր, գիրք մը գիրկս, լոյսի կտուցի մը տակ ծաւարեր էի մեր հիւրանոցին մէկ անկիւնը: Գրեթէ երջանիկ էի: Դուրսը ձիւնամրրիկ կար, մինչ նս, նեղարձ տաճուկ տեղն էի: Փոքրս կուշտ էր, կոնակս՝ չոր: Ձեռքս ալ ազուար գիրք մը: Այլ ի՞նչ կ'ուզէի Արարչէն... Այդ պահուն շատ հաշտ էի իրեն հետ: Տիկինն ալ, բաժակ մը բարումնաւէտ սաւրն ձեռքը, ինքնագոհ երեւոյթով մը պատկերասփիւռ կը դիտէր: Բարեբախտաբար, նրկար տարիննու վարժուքենէ մը ետք, եթէ կարգացած ճիւղս զիս իրապէս կը շահագրգռէ, եթէ շրջապատիս մէջ տաւուր-գունաւ ալ նուագելու ըլլան, կրնամ կեդրանմանալ ընթերցանութեանս կամ գրութեանս վրայ: Եզրա պահ մը, որ գլուխս վերցուցի գրքիս վրայէն: Չկտրուած էջ մը կար: Դանակ մը տանելու համար խտանոց գացի: Վերադարձիս աչք մը նետեցի պատկերասփիւռին վրայ: Անուշիկ դէմքերով բազմաթիւ երեխաներ բաներ մը կ'ըսէին, ու իրենց ձեռքի թուղթին վրայ գրուած բաներ մը կը կարդային:

- Մտիկ ըրէ որ բան սարվիս, - ըսաւ տիկինը, - չօճուխները Աստուծոյ գրած իրենց նամակները կը կարդան:

Ու մինչ ձեռքերս գրքին էջը կը կտրէին, սկանչս տուի պատկերասփիւռին:

«Սիրելի՛ Աստուած, - կարդաց անոնցմէ մէկը իր ձեռքի թուղթը, - Դուն ալ ստիպուած ես ամէն բան ուտել... Ես ճիշտ չեմ սիրեր»:

Ընթերցողի հասցէին համբոյր մը շրթունքիս, ու լայն ժայտ մը դէմքիս, դրի գիրքը վար:

- Սրտէս խօսեցար, ճանի՛ց, ես ալ չեմ սիրեր...  
- Ձանդ կտրէ ու մտիկ ըրէ, - յանդիմանեց զիս տիկինը, - ճիշտը օգտակար է, արիւն կը շինէ:

Բարեբախտաբար, այդ պահուն յայտագիրը ընդմիջուեցաւ ու երկար, տողտողի ծանուցում մը սկսաւ՝ պատեհութիւն տալով ինծի որ պատասխանեմ տիկնոջս դիտողութեան:

- Հոս Ամերիկա է՝ ունեցած արիւնս կը բաւէ ինծի... Թուրքիա չենք որ պարբերաբար մեզմէ տոնուած արիւնին տեղը լեցնել աշխատինք ճիշտ ուտելով...»

Յայտագիրը վերսկսաւ՝ շատ սիրուն աղջնակի մը առ Աստուած ուզած նամակին ընթերցումով:

«Սիրելի՛ Աստուած: Այլ ի՞նչի տխրաբիկ մի դրկեր, պէտք եղածին շափ ունիմ հիմա»:

Յագորդը օր:  
«Սիրելի՛ Աստուած: Ենթ որ անցեալ օր կիրակնօրեայ դպրոցես ուշ մնացի, վարտիս չկրցի գտնել»:

L

- Սիրելի Աստուած .
- Աշխարհը ստեղծած պահուդ շատ յագնեցա՞ր :
- Սիրելի Աստուած .
- Լսեցի որ հայրիկս կ'ըսէր մայրիկիս , թէ մարդ մը «Աստուած մե-  
նած է» անուն գիրք մը գրած է : Իրա՞ւ մեռար : Ո՞ր տեղդ կը ցուէր : Երբ  
ես եիւանդ ըլլամ , մայրիկս ինձի ասիերիմ կուտայ : Կ'ուզե՞ս որ քիչ մը  
քեզի զրկեմք փռտտով :
- Սիրելի Աստուած : Գիշեր ընելու համար արեւուն վրայ փշելով կը  
մարե՞ս :
- Սիրելի Աստուած : Հաւկիթին մէջէն ձագ ելնելը տեսա՞ծ ես :
- Սիրելի Աստուած : Որդերը կակուզ շինեցիր որ քուչունները գառնո՞ք  
սառնոց ծամելու ուտնն ու չցաւցնե՞ն :
- Սիրելի Աստուած : Եթէ խոնամոցի արդերը մաշէն ետք դարձ տանե-  
լու օրէնքը դուն շինած ես , խնդրեմ , փոխէ :
- Սիրելի Աստուած : Ուրախ եմ որ մարդերը տեսակ-տեսակ ստեղծե-  
ցիր , աշխարհու մամաս փափաս ինչպէ՞ս պիտի մանչնայի :
- Սիրելի Աստուած : Դուն պատկերասպիւս ունի՞ս , գունաւո՞ր է թէ  
ոչ սեւ ու մերմակ :
- Սիրելի Աստուած : Հեռաձայնիդ թիւը ինձի զրկէ որ երբ ըսելիք մը  
ունենամ հետդ խօսիմ :
- Սիրելի Աստուած : Ջութակի դաս կ'առնեմ , բայց դեռ գիտ մտիկ մի  
ըներ :
- Սիրելի Աստուած : Խնդրեմ այնպիսի պազպազակ մը շինէ որ ուտե-  
սուես չհատնի :
- Սիրելի Աստուած : Կեռասին մէջ կուտ դնելդ անհրաժեշտ էր . . .
- Սիրելի Աստուած : Գեզի եամար կ'ըսեն , թէ ամէն տեղ ես ու ամէն  
բան կը տեսնես . մագս քաշող տղան տեսա՞ր :
- Սիրելի Աստուած : Գու մայրիկդ ալ ամէն շաբաթ գիշեր բազմի՞ք  
կուտա՞յ քեզի :
- Սիրելի Աստուած : Ինչո՞ւ համար ճիւղ միմակ ճմեղք կը շինես :
- Սիրելի Աստուած : Ամէն բան շինել կարենալու համար ո՞ր դպրոցը  
գացիր :
- Սիրելի Աստուած : Փոխանակ մարդերը մեռցնելու եւ ետքը մարէն  
շինելու , լաւ չըլլա՞ր որ ունեցածներդ նորոգես ու ալ չշինես :
- Սիրելի Աստուած : Առջի օր ամպ չկար ու երկնին վրայ մէկը տե-  
սայ . դո՞ւն էիր :
- Սիրելի Աստուած : Առայց ես էիր ու մեռնելդ վերջն է՞ր որ երկինք  
գացիր :
- Սիրելի Աստուած : Մեծ մայրիկիս բարեւ ըրէ ու ըսէ որ ալ տեղս չեմ  
Քրջեր :
- Սիրելի Աստուած : Դուն ալ փափայիս ածիլուելու գործիքն պէս  
եղեփորիք գործիք ունի՞ս թէ ոչ , եթէ չունիս մամայիդ ըսէ որ հատ մը գնէ  
քեզի . փափաս ածիլուելու պահուն ալ չի բարկանար ու հայեոյե՞ր :
- Սիրելի Աստուած : Զե՞ս կրնար շունիս , Պլէ՞քին խօսիլ սարվեցնել :
- Սիրելի Աստուած : Զիւնը ինչպէ՞ս կը շինես . . .
- Այս բոլորը լսելէ ետք , մամակ մըն ալ ես գրեցի Աստուծոյ .
- Սիրելի Աստուած : Կրնա՞ս գիտ ճարէն մանկացնել . . .

Ա. Հ.

ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ

“ՏՈՒՆԻ ՀԱՅ”

Յաջորդ Կիրակի, Էրեկոյեան, Օհան գարեջրատուն մտաւ Մօտեցաւ Լեւոնին: Մատովը կանչեց զայն, նստեցուց սեղանի մը առջեւ՝ իր դէմ, յանձարորեց երկու բաժակ գինի, եւ՝

- Ըսածս եղաւ, - ըսաւ գոհունակ:

Լեւոն զարմացած կը նայէր անոր՝ անտեղեակ՝ աճապարանքին, հեւքին եւ գոհունակութեան պատճառներուն:

- Ըսածս եղաւ, - կրկնեց Օհան՝ վերցնելով բաժակը եւ մատովը ցոյց տալով միւս բաժակը:

Լեւոն վերցուց իր բաժակը: Տարաւ չրթներուն՝ նայուածքը Օհանին՝ սպասելով որ ան պարզէ իր միտքը:

- Տիրանը կը նշանուի կրր ուրիշի հետ... Երկու օրէն Սոֆիայի թերթին մէջ կը կարդաք յայտարարութիւնը... Տէրտէքը չիմացած՝ Օհանը կ'իմանայ...

Եւ, կանչելով սպասեակը, երկու բաժակ գինի եւս պատուիրեց: Յետոյ, ծխատուփը հանեց դրպանէն, յաղթանակ տարած մարդու մը հը պարտութեամբը ուժգին դրաւ զայն սեղանին, բացաւ, դրանիկ մը առաւ, ուղղաձիգ՝ մէկ-երկու հեղ պարկաւ բթամատի եղունգին, դրաւ չրթներուն, վստեց, եւ ծուխը փչելով Լեւոնի կրեսին՝

- Հիմա Արաքսին ալ ձերն է, - շնչեց՝ գլուխը մօտեցնելով Լեւոնին եւ նայելով շուրջը՝ ուղիւով հաւաստիացնել, թէ իր ու անոր միջեւ մնալիք դադանիք մըն է...

- Տիրանին նշանուիլն ու օրիորդ Արաքսին ի՞նչով կը հետաքրքրեն դիս, - ըսաւ Լեւոն՝ ջանալով ծածկել իր մէջ ի յայտ եկած շահադրդուութիւնն ու յոյսի փոքրիկ նշոյլը...

- Հր՛... Միւսիւ Քեաթիպեան, ամէնուն լօլօ, Օհանի՞ն ալ լօլօ... Ես գերեզմանի պէս մարդ եմ... Ես ձեզի ի՞նչ կ'ըսեմ... Միայն թէ, - ափը վերցուց օդին մէջ, - Բախի՛նով պէտք է շարժիք... Մալըն ալ խորամանկ է, աղջիկն ալ...:

- Պրն. Օհան, դիս ո՛չ մայրը կը հետաքրքրէ, ո՛չ ալ աղջիկը... Ես պարզ վարձակալ մըն եմ այնտեղ:

- Գիտե՛մ, ճանը՛մ, ես էի որ ձեզ տարի հոն, չէ՞...

Եւ ժպտեցաւ Օհան: Միատուփը դրաւ դրպանը եւ կրկին ծուխով՝ - Միայն թէ, զգո՛յշ ըլլալու է... Չո՛ք որ, - աւելցուց, - սոստաթոցիները թաց տեղ չեն պտակիր...:

**Եւ ելաւ դուրս :**

Լեւոն ամբողջ գիշերը չկրցաւ ձերբազատիլ Տիրանի նշանուելուն եւ Արաքսի մասին իր մտածումներէն : Փամերով մնաց արթուն : Մրանեղեցաւ : «Ինչո՞ւն է պէտք անոր նշանուելը», մտածեց, «սասանան տանի Տիրանն ալ...»: Բայց շարունակելու համաձայն չեղաւ : Արաքսի, հակառակ ցոյց տուած անտարբերութեան, հետու չէր իրմէ : Ինչո՞վ էր մօտ, - չէր գիտեր, փորձած ալ չէր ճշդել : Նոյնիսկ մօտիկութեան այդ անդրադարձումէն կը տօգուանէր, կը խրաչէր ա՛յնքան՝ որքան կը ցանկար իրեն մօտ տեսնել զայն... :

Երեք օր, շարունակ, ճաշերէ ետք գնաց հայու փոքրիկ սրճարանը՝ օրաթերթը տեսնելու համար : Երբորդ օրը տեսաւ Տիրանի նշանուելին յայտարարութիւնը : Մալեց թերթը, ընեց մէկ կողմ, կանգնեցաւ եւ ուղղւեցաւ դէպի գլխաւոր պողոտան :

Այդ երեկոյ տանը վրայ ամպ էր իջած : Երեկոյեան դէմ, յիսունը անց կին մը՝ Իւզարեր, որ բարեացակամ չէր դէպի Սիրանը, նպարեղէնի խանութը տեսնելով զայն՝

- Տիկին Սիրան, նայէ վստահութիւն կ'ըլլա՞յ ՚իմօկուան ճահիլներուն, - ըսեր էր՝ շարժելով գլուխը եւ իրբեւ թէ վրդովուած .
- Ի՞նչ է պատահած :
- Չլսեցի՞ր... Նշանուելը է Տիրանը :
- Որո՞ւ :
- Քա ո՞վ գիտնայ, տիկին Սիրանս, վստահայն աղջկայ մը... Ելած-ինկած, հիմա ալ... Հո՛գգ, աստանկ վարդի պէս աղջիկը... Աստուած անանկ դուռ մը կը բանայ որ... Զեռքը պտղեղը թող աննէ...

Այդ «ինկած-էլած»ը շիկացած զամի մը պէս միտեցաւ Սիրանի սրտին : Ակնարկը Արաքսիին էր անշուշտ : Վերջին գովասանքը շնորհակցանակորով լուրին առթած տպաւորութիւնը : Սիրան տուն գնաց ընկճուած : Ինք միշտ թերահաւատ էր Տիրանի նկատմամբ : Նոյնիսկ անգամ մը կրկին փոքրիկ ակնարկութիւն մըն էր ըրած : Բայց, Արաքսի պատասխանած էր .

- Զիս աննէ կամ ոչ՝ ես կը սիրեմ գինք, վերջացա՛ւ... Բայց Սիրանի համար վերջացած չէր : Ընդհակառակն : Արգ, ի՞նչ կը սպասէր իր աղջկան : Արաքսի պիտի կարենա՞ր հեռու մնայ Տիրանէն : Երկրորդ անգամն էր, որ կը լքուէր : Ունէր ամէն առաւելութիւն : «Ես պակաս արժանիք ունէի», մտածեց Սիրան : Ինք եւս իր զեղեցկութեան ու իր պերճանքին անհամապատասխան բախտ ունեցած էր : Դատնացաւ այն մտածումէն, թէ արդեօք իր անցեալը գեր էր օւնեցած իր աղջկան նկատմամբ ցոյց տըրած վերարճումներուն մէջ :

Արաքսի տուն եկաւ սովորականէն կանուխ : Ոտոտած էր : Զրտեսցաւ : Զընթերց : Բարձրացաւ սենեակ եւ դուռը ուժգին փակեց : Եւ օրեր շարունակ մնաց մռայլ, համր ու անհազորդ : Մռայլեցաւ նաեւ տունը :

Գիրքորի լեզուն փակեք էր զեմքին : Եւ ինք՝ իր աթոռին : Կը ճղնէր կարելի եղածին շփ անզգալի դարձնել իր ներկայութիւնը : Իրեն այնպէս կը թուէր, թէ այդ ճշտող, կապարեայ միջնորդը կրնայ խտանալ, ծրարել եւ իջնել իր գլխուն... :

Վերապահ դարձաւ նաեւ Լեւոն : Նախընտրեց աստուները կանուխ դուրս ելլել : Կը սպասէր որ «միջնորդը պարզուի», գէմքերը զեչ մը պայծառանան եւ վերադառնեն իրենց նախկին վիճակը :

Անցան ամիսներ: Երկույ մը Արաքսի տան գործերով էր զբաղած: Դրան նսիւնը լուսեցաւ: Լեւոնն էր: Շառազուկած էր:

- Հիւանդ էք, - հետաքրքրուեցաւ Գիրգոր:
- Գլուխս կը ցաւի առտունէ ի վեր: Ծաշէն ետք շերմութիւն ունեցայ: Կ'այրի՛մ, - ձեռքը զբաւ ճակտին:
- Հանդատանա՛լ, միւսիւ Գեաթիպեան... Պոռկի՛լ... Արաքսի՛, միւսիւ Գեաթիպեանը...

- Անշո՛ւշտ, պէտք է պառկիլ, քրանիլ պէտք է, - վրայ բերաւ Արաքսի՛ լուսցարանէն դուրս դալով:

- Հապա՛... Տաք թէյ մը... Քրտինք... Հը՞, Արաքսի, - քաջալերուեցաւ Գիրգոր Արաքսի բարեհասկածութենէն:

- Ելէք սենեակ, ես թէյը կը պատրաստեմ, ու կը բերեմ:

- Քովկրէն ալ լաւ է... Պաղ Քովկրէն, - վրայ բերաւ Գիրգոր: Արաքսի երբ սենեակ մտաւ, Լեւոն անկողինն էր՝ վերմակը քաշած ժինչեւ կզակը: Մարտու մը պատեր էր մարմինը: Արաքսի զբաւ ափսէն մահճակալին քով՝ աթոռի մը վրայ, եւ՝

- Նստեցէք ու խմեցէք, - ըսաւ, - յետոյ կը դնեմ Քովկրէնը:

Քիչ ետք Արաքսի կրկին եկաւ՝ թաս մը ջուր եւ անձեռոց մը առած: Թրջեց անձեռոցը, քամեց քիչ մը եւ զբաւ Լեւոնի ճակտին:

Լեւոն կը նայէր անոր՝ անպաստի, նոյնիսկ անհաւատալի այդ ուշադրութենէն յայտնապէս դուրս, հրճուանքի եւ երախտիքի խառն արտաստուութիւն մը աչքերուն մէջ:

- Մայրս Քրիզիմ մեկնեց է, - ըսաւ Արաքսի՛ կարծէք կանխելու համար թիւր ենթադրութիւն մը, զոր կրնար ունենալ Լեւոն:

- Ուրեմն ձեր մօր բացակայութեան կը պարտիմ ձեզ սենեակիս մէջ տեսնելու բարեխախտութիւնը, - ըսաւ Լեւոն:

- Բարեխախտութիւն... - կը կասկածի՛ք, թէ ձեր ներկայութիւնը բացառիկ հաճոյք մըն է ինձի համար, - յարեց Լեւոն՝ նայուածքը յառած Արաքսիի, երբ ան ծոնցաւ կրկին՝ թրջուած անձեռոցը դնելու համար իր ճակտին:

Այդ հակումը, շէկ մազերուն խոպոպները ճակտէն վար, զրեթէ հունի թեւերուն պարոյրը իր շուրջ՝ խոտիցին զինք: Միտալ սկսաւ արօփիլ աւելի արագ կերպով: Առաջին անգամն էր, որ Արաքսի իրեն հետ կ'ըլլար այդքան մօտ, զրեթէ գլուխ-գլխի, բայց մանաւանդ զինք խնամելու պատրաստակամութեամբ մը, որ, ինչ շարժառիթ է ալ մզուած ըլլար, իրեն համար հաճելի ուշադրութիւն մըն էր:

- Բացառիկ ի՞նչ ունիմ, որ ներկայութիւնս բացառիկ հաճոյք մը ըլլայ, - ըսաւ Արաքսի, առանց նայելու Լեւոնին եւ երթալով երկու քայլ ետ:

- Ձեր քով ամէն ինչ բացառիկ է, - քիչ մը աւելի համարձակ խօսեցաւ Լեւոն, - ձեր գէճը... ձեր մազերը... ձեր աչքերը թաց ու կապոյտ:

- Այրերու սովորական լեզուն, - ընդմիջեց Արաքսի՛ բոլորովին անտարբեր եւ երթալով գէպի պատուհանը:

- Ուրեմն եթէ ուրիշներ ալ ըսած են ձեզի, կը նշանակէ, թէ իրապէս գեղեցիկ էք:

- Իսկ եթէ դուք ալ ուրիշներու պէս...



- Ո՛չ, ես շատ անկեղծ կերպով կ'ըսեմ: Բայց դուք միշտ դժգոհանք մը ունեցած էք ինձմէ:

- Դժգոհանք...:

- Այո՛, անտարբերութիւն մը, անտեսում մը, նոյնիսկ արհամարհանք մը, - աւելցուց Լեւոն, առանց անդրադառնալու, թէ իր այդ խոստովանութիւնը պատճառ մըն էր, որ աւելի արհամարհելի դասնար ինք:

- Ձեզի այդպէս թուած է, - փորձեց մեղմել Արաքսի՝ կրկին մօտեցալով եւ անոր ճակտէն առնելով անձեռոցը: Թրջեց, դրաւ ճակտին եւ դուրս ելաւ:

Լեւոնի ամբողջ էութիւնը համակուած էր բերկրանքի այլքով մը: Ձէր իսկ զգար իր մարմինը կկտրող շերտութիւնը: Իր շուրջ, իր դէմ, իր վրայ հակած Արաքսին էր միայն, հեռացած՝ բայց ներկայ, այնքան անսպասելի եւ այնքան հաճելի: Իր ճակտին վրայ դեռ կը զգար հպանքը անոր նուրբ մասնէրուն: Յիշեց՝ թէ որքան ուժեղ տրոփեց սիրտը, երբ ինք յանդգնեցաւ իր ձեռքը դնել անոր ձեռքին վրայ: «Ձեզ գոհեցաւ», մտածեց: Յետոյ, սակայն, աւելցուց. «Որովհետեւ անտարբեր է ինձի հանդէպ...: Եւ ինք իրեն հարց տուաւ, թէ «ինչո՞ւ այս բոլորը, եւ դէպի ո՞ւր կ'ուզեմ երթալ»: Հարցումը մնաց անպատասխանի: Հարկ ալ չկար: Պատասխանը իր դէմն էք, իր շուրջ, իր ջով: Եւ, մտնալով իր հարցումը, զերկին պիտի դա՞յ՞, խորհեցաւ: Ի դուր փորձեց յոյսի թել մը գտնել: Եւ, անխիթար, զայսպէս աւելի լաւ է», եզրակացուց:

Նոյն վճռականութեամբ դարձաւ պատին եւ վերձայնովը ծածկեց գլուխը: Ժամեր շարունակ մնաց արթուն: Անձկութիւն մը պատած էր ներքը: Գոհ էր ու դժգոհ միանգամայն: Ի՞նչ կ'ուզէր ինք: Ի՞նչ կը փնտրուէր: Եւ կրկին մեղադրեց ինքզինք՝ իր մեղկութեանն ու թուլութեանը համար: Կը սէրէ՞ր...: Ձկրցաւ առաջ դրական պատասխան մը: Եւ ոչ ալ միտեց սակայն: Ձկրցաւ բացատրել, թէ այս խուսափող, բիրտ ու անտարբեր աղջիկը ինչո՞ւ այդքան յամառ կերպով կ'առչած էր իր մտածումին: Յանկաց թօթափել իր թուլութիւնը: Ըլլալ անո՞ր պէս: Եւ՝ անկէ հետանալու, զայն անտեսելու իր ցանկութեանը մէջ նմանիլ անոր...: Ըլլալ անոր պէս ուժեղ, ինքնավստահ եւ վճռական: Ո՞րքան զօրեղ թուեցաւ իրեն այդ անմշակ, թիչ մը վայրի, այլեւ յանկուցիչ աղջիկը: Եւ երեւակայնց զայն քանի մը քայլ անդին, հանդիպակաց սենեակին մէջ, մազերուն սակեհիւս ցանցը բարձին եւ փոռած անկողնին վրայ...: Եւ ցանկաց զոնէ պահել մը ըլլալ այնտեղ: Անկարելի՞ էր: Ունեցած չէ՞ր նման առիթներ: Ստուերի մը նման, որ ինքն իրմէ կը հալածուէի, սահել ներս, եւ սեղմել զայն՝ իր երկարատեւ ցանկութեան, իր թաքուն ու անյազ տենչանքին ըր՝ վանդակ ուժգնութեամբը: Բայց «ո՛չ», յարեց յանկարձ՝ մտաբերելով հակադրութիւնը, որ կար իր եւ անոր միջեւ: Իսկ զաշտին պատկերը, որ վերածնաւ մտքին մէջ, վրդովեցուց զինք:

Առաւօտուն դիտուն ցաւը անհետացեր էր: Յիշեց Արաքսին: «Թերեւս դեռ կը քնանայ», մտածեց: Եւ հզօր փափաք մը ունեցաւ շարժելու շէնքը: Իր այդ անհամբերութեանը մէջ ցաւեցաւ, որ երէկ դիւեր, երբ ան իրեն այնքան մօտ էր, հակած՝ իր վրայ, դէմքը դրեթէ հպած իր դէմքին, թեւերը չէր պարուրած անոր պարանոցին...: Եւ յիմա՞ր մը նկատեց ինքզինք: Բայց իր այդ անդրադարձումին հետ յիշեց նաեւ Սիրանը, ամիսներ առաջ, նոյն սենեակին մէջ...: Մօրն ու աղջկան մտապատկերումը ցնցեց զինք: Եւ վրդովուեցաւ ինքն իր դէմ: Իր հարաւոյն խորը դեռ կար, կամ

զուցէ նո՛ր յայտնուեցաւ նշոյլ մը պարկեշտութեան: Եւ, կարծէք ինչ իրմէ ամչցած, ձեռքերովը ծածկեց աչքերը, ուզելով հեռացնել այդ մտապառկէրը:

Իրենց առանձնութեան պահերուն Լեւոնի մեղկ, անհամարձակ վիճակը աւելի շեշտեր էին Արաքսիի մէջ տեսնութիւնը դէպի ահ: Իր ուժեղ, կամակոր, յանդուգն ու ինքնավստահ խառնուածքը չէր հանդուրժեր կամկար սրտեր: Ի՛նչ կ'ուզէր իրմէ մեղրամամի զոյնով այս մարդը: Երեւակայեց ինչ ու ան՝ մտերմութեան մէջ: Եւ ծիծաղեցա՛ւ:

Իսկ Սիրան մտահոգուած էր աղջկան վիճակէն: Մանաւանդ հիմա, երբ այլեւս երկրորդ յոյսը եւս չբացած էր՝ իր ետեւ թողնով ճիւղաւանդաւանդ թափառանքներ: Իր մտահոգութիւնը աւելի շեշտուած էր այն պատճառով, որ համոզուած էր, թէ Արաքսի չէր դադարած սիրելէ Տիրանը: Ինչ բնաւ կասկած չունէր, թէ Արաքսի իր սիրոյն մէջ աննկուն էր ու անզուսպ: Եւ ոչինչ կ'արգիլէր զայն՝ նոյնքան բոլորանուէր ու անվարան տրուելէ Տիրանին ա՛յժմ եւս, որքան առաջ: Վիրաւորուած ինքնասիրութիւնը պիտի կարենա՛ր ճնշել սէրը, թէ Արաքսի կանխապէս վստահ էր, որ Տիրան պաշտօնապէս պիտի կապուէ ուրիշի մը: Ինչ կարենար զոնէ ներքնապէս իրեն կապուած պահել զայն:

Բայց մինչեւ Ե՛րբ եւ մինչեւ ո՛ւր, - կը խորհէր Սիրան: Իսկ եթէ յանկարծ... Այդ հեռապատկերը, որ դայթակղեցուցիչ հաւանականութիւն մըն էր, միշտ շարարեր էր իր միտքը: Իր կանացի բնազդին ու մայրական ձայնին թաքուն թելադրանքին շնորհիւ իր «հասարակեանք» խուսափած չէր Լեւոնի արամադրութիւնը դէպի Արաքսին: Գիտէր, միանգամայն, թէ Արաքսիի համար անհրաժեշտ պիտի ըլլար անցնիլ զոյգ պատուարներ, - նախ՝ իր մէջէն ջնջել Տիրանը կամ զոնէ չափով մը հեռանալ անկէ, եւ զիջիլ Լեւոնին: Սիրան կ'անդրադառնար իր անձնական կեանքին: Այր մըն ալ ինչ ունէր: Չայն ճարած, համոզած եւ փախթած էին իր գլխուն: Եւ սուն մըն ալ ինչ էր կազմած: Նմա՞ն երդիք մը կը ջանար ապահովել իր աղջկան: Լեւոն Գիրգոր մը չէր անշուշտ: Բայց Արաքսին ալ Սիրան մը չէր: Ան ո՛չ իր հանդուրժողական ոգին, ո՛չ իր զուսպ խառնուածքը, ո՛չ ալ՝ «երեւոյթները փրկելու» մտահոգութիւնը ունէր: Եւ կ'երեւակայէր, թէ ի՛նչ տեսակ երդիք մը կրնար կազմուիլ անոնցմով:



Փետրուարի մռայլ երեկոյ մըն էր: Երկինքը իջեր՝ կէքեր էր քաղաքին վրայ: Արաքսի սուն եկաւ սովորականէն կանուխ: Մռայլ ու ամպամած բուն մը կար նաեւ անոր դէմքին վրայ: Սիրան քանի մը օրէ ի վեր կը նկատէր, թէ մտատանջութիւն մը կը տառապեցնէ զայն: Ուզած էր ստուգել, բայց վարանած էր:

Արաքսի չուզեց ընթրել՝ պատրուակելով, թէ կուշտ է: Սիրան աւելի մտահոգուեցաւ: Իր բնազդը, բայց մանաւանդ իր փորձառութիւնը իլլրտեցին զինք: Սրբեց լուացուած ամանները, հանեց դոզնոցը, նստեցաւ եւ, ուղիղ նայելով Արաքսիի աչքերուն՝

- Ի՛նչ ունիս, - հարցուց՝ այնքան շեշտակի, որ կը մատնէր ստանալիք պատասխանին իրեն համար պարզ ըլլալը:
- Ոչինչ, - պատասխանեց Արաքսի:
- Ինչպէս թէ ոչինչ... Ըսէ՛, ինչո՞ւ կը ծածկես:
- Այո՛, ինչո՞ւ ծածկել: Եւ ո՞րքան կրնար ծածկել:

- Արաքսի՛, աղջիկս, ինչո՞ւ է կը ծածկես, - աւելի մեղմ կրկնեց Սի-  
րան՝ նկատելով աղջկան նկուն վիճակը:

Եւ, պահ մը լռելէ ետք՝

- Ե՞րբ կը սպասէիր, - հարցուց:

- Երեք օր սպասեցի, յետոյ փորձեցի...

- Փորձեցի՞ր... Դուն քու գլխո՞ւդ... Փորձա՞նք կը փորես...

Կանգնեցաւ ոտքի: Եւ, աւելի մօտենալով Արաքսիին՝

- Ես քեզի քանի անգամ ըսի, որ զգոյշ ըլլաս:

Բայց յիշեց իր պարսպան: Եւ, մտա՛նոյ, որ կ'անդրադառնայ նաեւ  
Արաքսի, բորբոքի մօտեցաւ, շոյեց անոր դէմքը, եւ՝

- Մէկ օրը մէկ օր է... Հասկցա՞ր... Կորսնցնելիք առեն շունինք, -  
շնչեց, - հօտը դուրս շեւած պէտք է որ...

Արաքսի կ'ըմբռնէր, թէ հարկ է ակօսները սեղմել եւ համակերպել:  
Իր կապոյտ, իր եզնիկի աչքերը լծացնր էին արգէն: Եւ ի՛ր իսկ բաներուն  
իր ականջին բախումէն ցնցուած՝ կիտով ինկաւ սեղանին վրայ՝ չփեղ զը-  
լուխը թռեին, եւ սկսաւ հեկեկալ՝ զուսպ, խնդուկ, իր զօրեղ անհատա-  
կանութեան, իր բիրտ նկարագրին, ինչպէս նաեւ իր զժբարտութեան հա-  
կադիր արթններուն իրարու բախումէն հարուածուած:

Սիրտք, մայրական կարեկցութեան, մտահոգութեան, կակիծին ու  
վրդովումին համազրեալ յուզումովը կը շարունակէր շոյել այդ պիւր, տե-  
ւապէս սէզ, բայց այժմ հակալ գլուխը, որ ի՛ր աղջկանն էր: Անո՛րը, որ  
իր արեւին, իր միսին, իր սիրոյն ու իր կամաւոր բայց յուսախաբեալ  
նուիրումին արգասիքն էր եղած, եւ որ, հիմա, ճիշդ իրեն նման, իր սի-  
րոյն ու կամաւոր այլ չփոխարինեալ ինքնանուիրումին արգասիքը կը զգար  
իր մէջ...

Սիրան երեք տեսած չէր իր աղջկան արտասուելը: Արաքսի կը հե-  
կեկար հիմա իր այդ դառն ու զուսպ փղձկումին մէջ արձագանգելով եր-  
բեմնի հեկեկանքն իր մօր: Սիրան յիշեց, թէ հեռաւոր անցեալին մէջ,  
ճի՛շդ Արաքսիի նման, ինք եւս, մտայլ ու ամպամած գիշեր մը, հեկեկա-  
ցեք էր իր մօրը ծունկին վրայ ու գլուխը անոր ձեռքին ներքեւ, Արաքսիին  
սաղմնաւորումը զգալով իր մէջ:

- Ի՞նչ որ կը կասկածէի, եղու, - ըսաւ դառնութեամբ:

Եւ, կարծէք զղշալով իր այդ յայտարարութեանը համար՝

- Յանցաւորը ե՛ս եմ, - աւելցուց՝ յուզելով խոստովանիլ կամ չկա-  
րենալով լրացնել իր յանցանքին պատճառը: Եւ, փղձկուն, սկսաւ հեկեկալ  
նաեւ ինք՝ գրկելով Արաքսին, տարիներէ ի վեր իր մէջ կուտակուած մօր  
ու կնո՛ղ կակիծները, իր աղջկան հասակին հետ իր մէջ աճող յանցապար-  
տութեան զգացումն ու ամօթը, ինչպէս նաեւ՝ կեանքին իրեն պատճառած  
դառնութիւնները հոսեցնելով այտերն ի վար...

Եւ ճաշասենեակին այդ մենութեանը մէջ, մայր ու աղջիկ, ընդե-  
լուզուեցան իրարու, իրենց արցունքներով ընդելուզելով նաեւ փորձա-  
թիւններն ու յուսախաբութիւնները իրենց:

Սիրան ո՛չ գիշերը քուն ունեցաւ, ո՛չ ալ ցերեկը՝ հանգիստ: Տաղ-  
նապեցաւ ու ընկճուեցաւ այն հեռապատկերին, զոր նախատեսք էր յա-  
ճախ, եւ որ հիմա կը մերձենար, կու գա՞ր ահա՝ նոր դայթակղութեան  
մը բոլոր ծալքերը բանալու, եւ վերարժարծելու նաեւ նախկինը...

Այդ նախատեսութիւնը զինք սարսափեցուց: Եւ իր մէջ լռեցուց ա-  
մէն ձայն: Խեղդեց ինքնասիրութիւնը, ինչպէս նաեւ հպարտութեան այն

արդար կամ անարդար չուզը, զոր միշտ քաղցուցած էր իրեն հետ: Անտեսեց նաեւ իր աղջկան յախուած նկարագիրը եւ անկէ ծնելիք հաւանական անախորժութիւնները: Եւ, փրկելու համար դոնէ ա՛յն, որ կը կարծէր թէ դեռ մասամբ ազնատուած չէ, ուզեց գտնուիլ մէջը խեղդելը ի՛նք եւս, ինչպէս ժամանակին ըրած էր իր հայրը:

Եւ ճարտար կառուցաւ յոյսի այն միակ թելին, զոր երկար ատենէ ի վեր կը ջանար բռնել ափին մէջ, կամ՝ իր երգիքէն ներս ինկած լոյսի այն տմոյն, այն փոքրիկ ցուլին, որուն զէմ միշտ փշեր էր Արաքսի, իսկ ինք միշտ ճգներ էր պլպլուն պահել:

Յաջորդ երեկոյ, երբ Արաքսի գործէն ուղիղ տուն եկաւ, Սիրան մօտեցաւ անոր, եւ՝

- Քեզի հետ ի՛նչպէս է, - հարցուց:

Անունը տալու հարկ չկար: Արաքսի կուսնց, ու՝

- Ի՛նչ գիտեամ... Միշտ կը փորձէ, բայց...

Եւ յանկարծ իրարու հանդիպեցան իրենց նայուածքները: Հաւասարապէս սաղնապած երկու նայուածքներ, որոնցմէ մէկը, - աղջկանը - հարկազրական գծախտութեան մը յանձնառումին հետ դեռ անհաշտ հարցում մը ու անկէ ծնող վարանում մը ունէր իր մէջ՝ ուղղուած մօրը, իսկ միւսը - Սիրանինը - երկար ատենէ ի վեր զինք տանջող մտածում մը, թէ աղջիկը կը կասկածի իրմէ ու Լեւոնէն...

Սիրան, զուպ այլ գործոտ, ժօտեցաւ Արաքսի, երկու փերտովը բռնեց անոր զէմքը, ուղիղ նայեցաւ աչքերուն եւ, խոստովանութեան մը պէս, որ ճշող ծանրութիւն մը կը գլորէ կուրծքէն, - հանդիստ ու վստահ եղբր, աղջիկ, - ըսաւ, - տանը մէջ կին չէի ես, այլ՝ մայր... Եւ պէտք էր որ թելով մը կապէի օտքը...

Երբ ընթրիքը վերջացաւ, հաւաքեց սեղանը, հագուեցաւ, հաղուեցուց նաեւ Գիրգորը եւ, ժօտենալով Արաքսի՝

- Հօրաքոյրիդ պիտի երթանք, - շնչեց, - եւ ուշ պիտի վերադառնանք... Կը սպասես գալուն... Կը հասկնաս թէ ի՛նչ ըսել կ'ուզեմ... Վառէ վառարանը եւ լաւ մը տաքցուր սենեակը:

Յետոյ, նայելով Արաքսիին՝

- Դուն ըսածս ըրէ՛ մնացածը ձգէ ինծի, - աւելցուց, - սենեակը լիվանտա կայ...

Եւ, անցնելով սալոն, ուր կը սպասէր Գիրգոր՝

- Երթա՛նք, մայրդ, - յարեց, - աղջիկը տունն է, երիտասարդները այս գէշեր թող առանց մեզի ըլլան:

Տան շնիկի մը պէս, որ իր սուր բնազդին շնորհիւ կը կուսնէ տունէն դուրս դալու մտադրութիւնն իր տիրոջ, եւ անկէ առաջ կը գեղերի, կը շարժուի, եւ ու առաջ կ'երթայ, եւ յաջորդաբար տիրոջ ու դրան կ'ուղղէ նայուածքը՝ շարժելով պոչը, Գիրգորը իր գաւազանին քով էր, գուռը բանալու հրահանգին սպասելով:

Արաքսի կանգնած կը մնար ճաշասենեակին մէջտեղը, այլայլած ու շնորհ իր առջեւ յանկարծ պարզուող այս դառն իրականութիւնէն:

Ժամը 22-ը անց էր, երբ դուրս ելան Գիրգորն ու Սիրանը:

Արաքսի բարձրացաւ սենեակ: Հանեց յըջադէստը եւ շարտեց մահահալի վրայ: Հանդերձարանին երկար հայելին առջեւ կանգնեցաւ, դիտեց ինքզինք, եւ լզխոցաւ, թէ ամիսներ առաջ, իր մայրը, նոյն հայելին առջեւ իր մարմնին գեղեցկութիւնն էր դիտած: Դառնացաւ Ընդվզեցաւ

եւ ուզեց փշրել հայելին, որ կարծէք կը հեղնէր իր զեղնցկութիւնը: Պըրկեց գուլպաները՝ միւս էրիզ մը թողլով անոնց եւ ներքնագլխաւորն միջեւ: Առաւ իր այն շրջագլխաւորը, զոր հազած էր Լեւոնի հիւանդութեան երեկոն: Հազաւ: Սանտրեց մազերը: Կապեց նոյն կապոյտ ծապաւէնը: Գնաց մօրը սենեակը: Բոյր դրաւ ծոծրակին, կուրծքին, այտերուն: Եւ անցաւ Լեւոնին սենեակը:

Արաքսի գիտէր, թէ Լեւոն տուն կը վերադառնար ժամը 24-ը անց: Դեռ աւելի քան մէկ ժամ կար: Սենեակին դուռը փակեց՝ փակելով նաեւ ալքերը: Իրեն այնպէս թուեցաւ, թէ այլիք մը բարձրացաւ կուրծքն ի վեր՝ մինչեւ կոկորդը եւ ճնշեց: Ուրեմն իրեն պիտի վիճակուէր տեսապէս ըլլալ անոր հետ: Այս կամ ուրիշ սենեակի մը մէջ: Փակ դրան մը ետեւ: Եւ ինք ստիպուած պիտի ըլլար տկոտները սեղմել ու հանդուրժել: Դառնալ կրկնեց իր ծոծրակը մօրը...: Եւ անոր պէս ծրարել, փակել, լքել կամ ջանալ մոռնալ սիրտը: Ամէն գիշեր անփոփոխ ու պարտադիր համակերպութեամբ մը անոր քով փակել իր մարմնին շքեղանքը: Իր վրդովումին ու խորշանքին միջեւ անզօր՝ ալքերը փակ հանդուրժել այդ մեղկ, անկամ ու կամկար մարդուն:

Ընդվզեցաւ նաեւ մօրը դէմ: Մեղկ ու անկամ ընկերուս մը չէ՛ր նաեւ անոր: Ինքնաժխտում մը: Անճար ու անկամ հպատակութիւն մը զիպուածին, շրջագլխաւորն, ըմբռնումներու, բարբերու, դրկիցին ու ծանօթին լեզուազարութեան, հասարակութեան վերջապէս, որ անյազ տենչանքով մը մէկուն ու միւսին միտը կ'որոնայ անընդհատ:

Եսնկարծ յիշեց մօրը խօսքը, - «յանցաւորը ե՛ս եմ»: Ինչո՞վ յանցաւոր էր ան: Եւ ուզեց դուրս գալ եւ պոռալ՝ իր ձայնին ու գայլոյթին ամբողջ ուժգնութեամբը: Ուժգնութեամբ մը նաեւ մօրը կուտակեալ դառնութիւններուն: Մարդոց դէմ: Բազմութեան: Ամէն մէկ մութի՝ մեղանշումներու վաղող երիտասարդներէն մինչեւ տարեցններուն, որոնք մեղքեր են կուտակած իրենց կորացած կոնսկններուն վրայ: Երկիւղած կերպով ազօթողը՝ բայց զա՛ղտորէն դաւաճանող այրերուն ու կիներուն: Պատուաւոր-ի իրենց պատմուճաններուն ներքեւ մեղքեր թաքցնող տանտիրուհիներուն: Երբանցքներու մէջ կամ փակ դուռներու ետեւ իրենց աղախիններուն հետ իսկ մեղանշելէն ետք լրջադէմ փողոց ելլող ամուսիններուն: Պոռալ մանաւանդ «բարոյական» սրակումին դէմ, որ նոյն այդ մարդոցմէն է յօրինուած ու պաշտպանուած՝ անոնցմէ ամէն մէկին կողմէ քմահաճ կերպով ըմբռնուելով ու մեկնաբանուելով:

Ո՞վ կրցած է այդ բառին ճշգրիտ բնորոշում մը տալ: Սահմանել զայն՝ զոնէ ինք իրեն համար եւ իր խղճին առջեւ՝ սկսելով իր անձին:

Վրդովուած՝ նոյն այդ ըմբռնումներուն դէմ, Արաքսի կրկին անզօր-զարձաւ մօրը: Ինք առանձին էր իր կակիծին ու ընդվզումին մէջ: Նոյնը վիճակուած չէ՞ր նաեւ մօրը: Հանդուրժած չէ՞ր նաեւ ան: Եւ, անտեսելով իր անձը, սնուցած ու աճեցուցած էր զինք, - այն միակ թիւը, որով կապուած էր կեանքին: Փրցնել այդ թիւը, զոր այժմ ինք կը զգար իր մէջ: Տե՛րա՛նը: Ինչո՞ւ դեռ այդքան ուժեղ կերպով կապուած կը մնար անոր: Եւ հիմա, փակ դրան ետեւ, իր կայքն ու սպասումը փաստ մը չէ՞ր, թէ Տե՛րան իրեն հետ էր եւ այժմ ինք զայն կը կրէր իր մէջ:

Ի՛նչաւ վար: Տաշեղ ու փայտ բերաւ: Վառեց վառարանը: Եւ մնաց ծունկի՝ անոր բոցերէն հաճոյացած: Յետոյ մէկ առ մէկ փայտի կտորներ սահեցուց վառարանէն ներս: Փչեց: Բոցին ժայթքումէն իր շքեղ դուրբը

նետեց ետ՝ մազերուն խոպոպները ցնցելով: Եւ մինչ կկրած եւ արմուկնե-  
րը ծունկերուն կը դիտէր կրակէ լեզունները, լսեց դրան բացուիլը: Դար-  
ձաւ: Սեմին վրայ կանգնած էր Լեւոն՝ ուրախութեան ու զարմանքի խո-  
տուն արտայայտութիւն մը դէմքին ու աչքերուն:

- Ես կը վառէի, օրիորդ Արաքսի, ինչո՞ւ ձանձրոյթ յանձն առեր էք, - ըսաւ մեղմութեամբ:
- Ինչո՞ւ ձանձրոյթ ըլլայ, մայրս ըսաւ որ վառեմ:
- Երեւի յոգնած էր ու պառկեցաւ:
- Ո՛չ, դուրս ելան, շատ ուշ պիտի վերադառնան:
- Կ'անձրեւէ, բաւական թրջուեցայ, - Լեւոն ուզեց երկարել խոսակ-  
ցութիւնը:

Արաքսի կկրած կը մնար վառարանին առջեւ՝ նման յանցապարտի  
մը, որ ինքնակամ կը յանձնուէր սպասելով դատաստանին:

- Լա՛ւ շորցնէիք վրանիդ, - ըսաւ հոգածութեան շեշտ մը ձայնին  
մէջ՝ ելլելով ոտքի: Եւ փորձեց ստուգել՝ ձեռքը մեղմութեամբ գնելով  
Լեւոնի ուսին:

Ձեռքի այդ հպանքը բաւական եղաւ, որ Լեւոն, այլեւս անզոր գինջ  
կիզող հրայրքէն, աւելի խողովուի: Եւ, բռնելով Արաքսիի ձեռքը, համբո-  
րեց դատասկն ու կիսարաց բազուկը: Արաքսի թեթեւ շարժում մը փորձեց,  
բայց Լեւոն արդէն գրկեր էր գայն՝ թեւը պարուրած անոր պարանոցին ու  
փորձելով համբուրել:

- Թողէ՛ք, պրն. Լեւոն, - շնչեց ան՝ հեռանալու թեթեւ շարժումով  
մը, բայց միանգամայն ձայնին մէջ գնելով համակերպութեան շեշտ մը:
- Դուն անդժմադրելի ես... Գերիդ դարձուցիր դիս, - մրմնջեց Լե-  
ւոն, - աւելի ուժգին սեղմելով գայն՝ մոռնալով տունը, հաւանական մոռա-  
քը Սիրանին ու Գիրգորին, ստեղծուելիք անսխորժութիւնն ու իր ընթաց-  
քին հետեւանքը:

Եւ, անելով գայն թեւերուն մէջ, փուեց մահճակալին վրայ:

Ճ

Նրազներու գունազեղ աշխարհէ մը վերադարձած ուղեւորի մը պէս,  
որ չ'ուզեր դէմ յանդիման դալ իր առջեւ պարզուող իրականութեան հետ,  
Լեւոն, կոնակի վրայ պառկած եւ աչքերը փակ, մտովին վերապրեցաւ Ա-  
րաքսիի գեռ գողացուող բոյրը, մազերուն ալիքը իր դէմքին վրայ եւ ստաց  
ու խոռոխէ իրանին դիւթանքը:

Եւ յանկարծ մտաբերեց սենևակէն փախուսած անոր:

Ի՞նչ կրանի թան է վայելիլ իր մտերմութիւնը, մտածեց: Միշտ ու-  
նենալ գայն իր զով ու ըլլալ անոր հետ: Թէեւ անդրադարձաւ, որ Արաքսի  
իրեն հետ եղած չէր այնպէս՝ ինչպէս եղած էր Տիրանին հետ այն օրը: Ձեռ  
խկ համբուրած: Եւ ինչ դժուարաւ կրցած էր պահել իր շրթները անոր  
չրթներուն վրայ: Ո՞րչա՞ծ էր: Դառնացաւ այս ենթադրութիւնէն: Եւ լա-  
բեց իր յիշողութիւնը, մտաբերելու համար անոր կողմէ կատարուած ամէն  
մէկ շարժում՝ շոյանքի, կամաւոր հպանքի կամ նայուածքի ձեւին տակ,  
որ ժխտէր իր ենթադրութիւնը: Բայց չ'աջողեցաւ: Եւ չկրցաւ լուծել ա-  
ռեղծուածը, որ ստեղծուեցաւ իր առջեւ՝ անոր ինքնակամ ու սիրալիր այ-  
ցովն ու յապաւումովը եւ, ասոր հակառակ, կրաւորական վերաբերումը:  
Մտածումներու եւ մտապատկերներու իրերամերժ, դառնացնող, բայց եւ  
դիւթիչ յաճախանքէն ընդարձացած, եւ մարմնով պարտասած, ննջեց՝ իր

կրպերուն ներքեւ պահել ջանալով դեռ թարմ, բայց արդէն իսկ խուսափած իրականութիւն մը, որ տեւապէս երազ մըն էր եղած եւ տեւապէս հալածած էր զինք... :

Կէտօրուան մօտ էր, երբ սանդուխներուն վրայ ոտքի զոյճ թափէ մը արթնցաւ: Ճանչցաւ այդ թափը: Ամիսներ շարունակ ի՞նչ յոյզեր, վիշտեր եւ յուսախաբութիւններ պատճառած էր իրեն: Իսկ հիմա մերձ էր իրեն, իր քով, իր հետ՝ իր շնորհներուն ամբողջ հրապուրանքովը: Կամովի՞ն էր այդ: Եւ տեւակա՞ն: Լեւոնի մտածումը կառչեցաւ վերջին հարցումին: Ինք մինչեւ ո՛ւր ուղած էր երթալ: Կշտադատա՞ծ էր, թէ յանձնուած էր կոյր ու անասնձ: Վա՞ղը:

Աւելի վե՛րջ: Իսկ եթէ օ՛... Այս կասկածը ցնցեց զինք: Սարսափեցաւ: Նստաւ անկողինն՝ եզերքը՝ ոտքերը կախ եւ երկու ափերը մահճակալին: Հարկ էր իջնել լուսացունելու համար: Վարանեցաւ: Իրեն ափսոսանքով թուեցաւ, թէ ժայռը արդէն իսկ զիտէ ամէն բան: Եւ երեւակայեց Սիրանը՝ վրդովուած ու խոռվ: ճեղածը եղած է, յետգարձ չկա՛յ, մտածեց: Եւ իջաւ վար:

- Բարի լո՛յս, միւտի Գեթիպեան, - լսեց հնչեղ ձայնը Սիրանի: Դարձաւ: Փոխադարձեց բարեւը: Սիրան կանգնած էր խոհանոցին դրան սեմինի, ժպտալ շրթներուն:

- Կը ներէք, որ երէկ գիշեր վառարանը ժամանակին չկրցայ վառել... Կ'անսպարէինք, - յարեց սիրալիր:

- Օրերոջ Արաքսին արդէն վառած էր, - պատասխանեց Լեւոն՝ Սիրանի ժպտոյն, շեշտէն, վառարանի մասին ներողամտութեան խնդրանքէն բոլորովի՛ն հանգստացած, թէ զիշերուան ճեղքուածը իր ու Արաքսիի զաղանիքն էր մնացած:

Եւ բարձրացաւ սենեակ: Հանդիպակաց սենեակին մէջ, փակ դրանը ետեւ, մահճակալին վրայ փռուած, փոթորիկէն բեկանուած առազատի մը նման, սիրտ մը կը պատրտէր: Ու այդ սրտէն յորգող հեկեկանք մը կը խեղդուէր շորս պտտերուն միջեւ...



Արեւը յանկարծ ցոյց տուաւ իր գէժքը: Ամբողջ գիշեր ձիւնը հալեր էր՝ փխրելով, կքելով ու տանիքներէն կաթկթելով: Առտուն երկինքը դաշտառ էր: Եւ լիալուսինը մոլորեր ու մնացեր էր զէնիթին՝ ողիմպիականի դարերուն նետուած ու երկնքին կպցուած սկաւառակի մը նման:

Գիրգոր կանուխ զուրս ելաւ: Յետոյ, Արաքսի՝ իր ժամուն ու իր կարգին: Սիրան, որ այդ օրերուն հագիւ մէկ քանի ժամ կրցեր էր քնանալ, հաւաքեց, լուաց, սրբեց ու տեղաւորեց ամէն բան:

Երեք օրէ ի վեր անհանդարտ վիճակ մը ունէր: Եւ՝ խոժոռ, նոյնիսկ դաժան գէժք մը: Լեւոն մտահոգ էր: Սիրտը արոփեց, ե՛րբ սանդուխներուն ճոթնչը լսեց: Ականջ տուաւ: Դրան վրայ մասի ուժգին բախում մը լսեց: Մօտեցաւ: Բացաւ:

- Հաղուած չէ՞ք, - հարցուց Սիրան՝ մէկ ոտքը դրան սեմին եւ՝ իր գէժքին, ձայնին, արտայայտութեան ձեւին մէջ ցուրտ պաշտանականութիւն մը զնկելով:

Եւ մտաւ ներս: Նստեցաւ աթոռի մը վրայ եւ, պահ մը լուռ մնալէ ետք՝

- Միւսիւ Քեաթիպեան, ես ձեզմէ կրթեք չէի սպասեր, - յարեց՝ չեղարեւոյ ամէն մէկ բառը եւ խիստ նայելով Լեւոնի աչքերուն:

- Ի՞նչ է պատահած, - հարցուց Լեւոն՝ կոտակելով հանդերձ ստանալիք պատասխանը:

- Ինծի՛ կը հարցնէք... Ե՛ս պիտի ըսեմ ձեզի, - վերսկսուա Սիրան՝ ափերը ծունկերուն ու խիստ շեշտով մը, - ես այս տունը առի ձեզ՝ իբրեւ վատահէլի մարդ... Ձեզ նկատեցի մէկ անդամը մեր ընտանիքին: Նոյնը՝ ամուսինս: Օտարի աչքով չնայեցանք ձեզի: Նստանք-եկանք ձեզի հետ՝ մէկ մարդու պէս... Նոյնիսկ ես... Ի՛նչ որ է... Դուք գիտէք թէ ի՛նչ ըսել կ'ուզեմ... Իսկ դուք մեր վատահուժիւնը շարաշար գործածեցիք եւ մեզ դրիք ամօթալի, անպատուարեր վիճակի մէջ...:

Լեւոն համբացեր, զարացեր, սմբե՛ր էր: Եւ անշարժ կը մնար՝ ոտքի կանգնեցուած մտխայի մը պէս:

- Ա՞յս պիտի ըլլար մեր ստանալիք վարձատրութիւնը, - բռնեց արագ-արագ դուրս կու տար Սիրան՝ առանց շունչ առնելու, - մտաւորակունի, պատուաւոր ընտանիքի դաւկի վայնի բան էր ինչ որ ըրիք... Թըշնամբ՝ էիք մեզի... Վնաս հասցուցեր էիք ձեզի, որ ուզեցիք խայտառակել մեզ, քանզի մեր տունը... Ձեր հանգստութեան համար ըրած գոհողութիւններուս փոխարէն շարի՞ք պէտք էր ընէիք ձեզի... Ի՞նչ կ'ուզէիք վարդի նման ազլիկէս, որ անոր միամտութիւնը, վատահուժիւնն ու անփորձութիւնը օգուտգործեցիք... Ոճի՞ր ուզեցիք գործել, - Հետզհետէ բարձրացուց ձայնը Սիրան, - դուք ի՞նչպէս համարձակեցաք աղջկանս մօտենալ տաննկ շար մտքով... Նպատակ մը ունէիք... Կը փափաքէիք ամուսնանալ... Հարկա՛ւ, գեղեցիկ է Արաքսին, վարդի պէս աղջիկ, ամէնքը խենթ կ'ըլլան անոր համար... Դուք ալ հանեցաք տնշուշտ... Կը սիրէի՞ք, ըսէի՞ք ինծի կամ հօրը, ամուսնոյս, քանի որ կը յարգէք դիմե՛ իբրեւ այս տանը մեծը... Ինչքէ մարդը դեռ չի գիտեր, - շարժեց գլուխը Սիրան՝ դաճնութիւն մը գէմքին, - եթէ իմանա՞յ... Իսկ աղջիկ... Ի՞նչ ընէ հիմա... Ո՞ր պատին դարնէ գլուխը... Ձեր չափը չդիտցաք եւ արեւնը մտաք, - ա՛լ աւելի բարձրացուց ձայնը՝ Հետզհետէ սաստկացող տեղատարափի մը նման, - երեք օր է մաղերը կը փետտէ... Եւ սիրտս դողի մէջ է... Իսկ եթէ յուսահատութենէն ու ամօթէն դժբախտութիւն մը բերէ մեզի... Ձեզած բան է... Ա՞յդ էր ձեր ուսումը... Ատա՛նկ կտակած էր ձեր պատուաւոր հայրը... Ուրիշին պատիւը խլելով է, որ ձեր գերդաստանին պատիւը բարձր պիտի բռնէք...

- Տիկին Սիրան... Կորձեց բաներ մը կմկմալ Լեւոն՝ բողբոջովին սահմակած ու ընկճուած, առանց դիտնալու, թէ ի՛նչ պիտի ըսէր:

- Ի՞նչ... Ի՞նչ՝ տիկին Սիրան... Ի՞նչ ընէ տիկին Սիրանը հիմա, երբ դուք ըրեր եզեր էք... Ամիս մը, երկու ամիս, յետո՞յ... Ի՞նչ վիճակ կը ստեղծուի... Կը մտածէ՞ք այս մասին... Ո՞ր պիտի խօթեմ գլուխս... Ո՞ր պիտի պահեմ անմահ աղջիկս, որուն արեւնը մտաք, ծաղիկի պէս, խելօք, աշխատասէր, տունի ու ընտանիքի արժանի աղջիկս... Գիտէ՞ք ի՛նչ գերդաստանի թոռ է անիկա, միւսիւ Քեաթիպեան...:

- Բայց, տիկին Սիրան, ես...

- Ի՞նչ դուք, - թոյլ շտաւա որ խօսի, - հարկա՛ւ դուք պիտի որո՞չէք, վճռէք, վերջացնէք այս գործը, քանի որ դուք սկսաք... Սա մեռել պէտք է վերցնել՝ հոտը չելած, միւսիւ Քեաթիպեան... Դուք գիտէք, թէ ձեզի հանգէպ որքան սիրալիք ենք մենք, ե՛ս ալ, ամուսինս ալ... Գրի՛



դուր աղային պզտիկ լեզուն կ'երեւայ, երբ ձեր անունը կու տայ... Գուրգուրանք, հողածուբին՝ մեծով ու պզտիկով... Ձէի՞ք կրնար ինծի ձեռով մը հասկցնել ձեր փափաքը... Գիտի խօսէի հետը, պիտի համոզէի զինք... Տուն, տեղ, կա՛ն-կարասի՝ ի՞նչ կը պակասի ձեզի ու մեզի... Ամէն բան կայ, փա՛ռք Աստուծոյ... Սխալ ճամբէն որքան շուտ ետ դառնանք, - յանկարծ մեղմացուց ձայնը, - այնքան լաւ է, միւսիւ Քեաթիպեան... Դատարանն՝ըր պիտի լուծեն այս ինչի՞րը, մէկուն միւսին բերնին ծամո՞ց ըլլանք... Մեր ընտանիքը եւ Քեաթիպեան անունը պիտի խորատկե՞նք, թէ...

- Ի հարկէ ո՛չ, տիկին Սիրան, - յարեց Լեւոն՝ սարսփած այս շարադրեալ մենախօսութենէն, սպառնալիքներէն ու նաեւ իր արարքէն, - ես միշտ օրինորդ Արաքսիին նկատմամբ...

- Գիտե՛մ, - ժպտուն նայեցաւ Լեւոնին, - իմ աչքէս բան չի փախչիր... Մայր եղողը ամէն բան կը տեսնէ, միւսիւ Քեաթիպեան... Ես չե՞մ զիտեր թէ՛ քեզի նման, - մտերիմ շեշտ մը տուաւ ձայնին, - ինչացի ու ճաշակի տէր մտաւորական երիտասարդ մը պիտի զիտնայ անոր արժէքը... Անոր տէր եղողը թող վարդ ընէ ու գլխուն դնէ... Խոնջ շունի Արաքսիս... Դեղեցիկութի՛ւն, ճաշա՛կ, տանտիկնութի՛ւն ... Սենեակը որ մանեա՛ կը տեսնես՝ կը փոփոխա՛յ, միւսիւ Լեւոն... Անոր արժէքը վերջը պիտի իմանաս դուն, - սկսաւ թուել, - միայն թէ շուտ պէտք է շարժիլ... Մուխն ու հոտը դուրս չելած... Ասոր-անոր բերանը չինկած... Շատ ազմուկի ալ պէտք չկայ, մենք մեզի, տէրհայրը կը կանչենք, օրինաւոր, պատուաւոր պատկ մը, եւ վայելեցէ՛ք զիրար...: Դուն ալ, - ելաւ ոտքի ու մտնեցաւ Լեւոնի, - երբ դուրս ելլես, շուկայ երթաս, մարդու մէջ մտնես, քեզի վայել, վարդի պէս կին մը ունենաս թելիդ... Միայն թէ, - ալ աւելի մօտեցաւ Լեւոնի եւ, շահեւորվ անոր օձիքը, - դուն այսօր իսկ սեւ հագուստի մը ճարը նայէ... Դերձակ Շմաւոնը վարպետ է: Արազ ալ կը ձեւէ՛ կը կարէ: Իսկ վաղն ալ կ'երթաս եկեղեցի ու կը վճարես պատկին սակառիներ: Երկրորդ կարգի թող ըլլայ, հոգ չէ՛, մենք բարակը փնտռող չենք... Տէրտէրն ու ժամկոչը դո՞ւն պիտի հարստացնես...

- Եկեղեցիին դորձը...,- կմկմաց Լեւոն՝ այլեւս բոլորովին անձնատուր ու համակերպած:

- Լա՛ւ, հայրիկնիդ կ'երթայ՝ կ'ընէ, - ընդմիջեց Սիրան՝ Գիրգորը յանկարծ վերցնելով իր անկիւնէն ու աթոռէն եւ դետողելով անոնց վերեւ՝ իրքեւ հայր, - այլեւս մերը քուկը չկայ... Կու տանք՝ կը վերջացնենք... Հազուէ՛, դնա ձեռք մը հազուստ, կօշիկ, շապիկ մը...

- Իսկ Արաքսիին, - հարցուց Լեւոն:

- Արաքսիին... Դեռ չեմ խօսած... Մայր ըլլալը զիւրին բան չէ, Լեւոն... Պէտք է որ անոր ալ Բէֆը ընեմ, ըսեմ, բացատրեմ, համոզեմ... Ձեռ զիտեր թէ ի՞նչ էք, ի՞նչ չէք... Թէ՛, - ժպտուն նայեցաւ Լեւոնին, - իմ կանակէս ամէն բան խօսած որոշած էք, - աւելցուց՝ բոլորովին միտմիտ ձեռնալով:

Քայլ մը յառաջացաւ զէպի դուրը: Յանկարծ դարձաւ, կրկին նայեցաւ Լեւոնին եւ, ժպտուն՝

- Միայն թէ, - ըսաւ մեղմիկ՝ կարծէք տանը մէջ լսող սկանջներ ըլլային, - այլեւս Սիրան չկա՞յ... Քեզի ծաղիկի պէս աղջիկ մը:

Եւ ելաւ դուրս:



Երգիքը վերադասած էր իր անդորրութիւնը: «Երգիքը, որովհետեւ ճիշդ պիտի ըլլար զայն շտուկն որակել, եթէ այդ բանը կը նշանակէ փոխադարձ սէր, կամ՝ առնուազն՝ փոխադարձ կապ, եւ առաւել թէ նուազ չափով փոխադարձ հոգածութիւն: Այդ երգիքին ներքեւ երկու կիներ ու երկու այրեր էին անոնք, փոխանակ ըլլալու երկու զոյգեր: Եւ աղջիկը եւս ճիշդ ո՛րն ձեռով զկինն էր եղած, ինչ ձեւի կին որ եղած էր մայրը: Լեւոն ուղինչով փոխուեցաւ Արաքսիի համար: Մնաց նոյն ստուերը, նոյնիակ սենեակէն ներս, իրենց առանձնութեան ժամերուն: Արաքսի, աչքերը փակ, թեկերը դէմքին եւ մտածումով հեռուն՝ միայն կը հանդուրժէր Լեւոնը, մնալով անզգայ ու անտարբեր:

Օր օրի աւելի արհամարհուեցաւ այդ ստուերը, «Միւսիւնն ու «Քեանթիպեան»ը փետուրեան հազուատներուն հետ մտան սնաուկը: Եւ ան դարձաւ պարզ ու հասարակ «Լեւոն» մը՝ առանց շէրմութեան եւ առանց մօտկոթեան, Պարզապէս «Լեւոն»: Արասանուած ճի՛շդ այն շեշտով՝ ինչ շեշտով որ նորահարուստ թաղականին կինը, եկեղեցւոյ բակէն անցնելու ատեն, «ժամկոյ՛» կամ «տնտես» կը ձայնէ՝ մուշակը ուսերէն թափթըփելով:

Դէպի Լեւոնը հոգածութիւնները շքացան: Տունէն ներս իր երբեմնի ազատութիւնը խուսեցաւ իրմէ: Միբան մայր էր այլեւս: Եւ մայր մը՝ իր աղջկան միայն: Ոսկիներուն կապոցը յանձնուած էր առաջին օրէն: Ոսկիով կարելի էր շահել այդ աղջկան արժէքը: Լեւոն դիշերը կու դար ուշ, առանց հարցնելու կամ տուտնց դիտնալու թէ՛ Արաքսի ե՞րբ էր վերադարձած եւ ո՞ր էր զացած: Ձէր իսկ համարձակեր նման հարցումներ ուղղել: Եւ կը խուսափէր այդ մտտին մտածելէ: Ձգոյ՛՛ կը բանար սենեակին դուռը: Կը մտնէր ներս՝ ջանալով լսելի ընել ոտքին ձայնը: Կը հանուէր եւ կը սողոսկէր վերմակին տակ՝ ցանկալով զոնէ հպիլ: Իայց կը վարանէր՝ Արաքսիի հաւանական սրտնեղութենէն ահաբեկ:

Լեւոն պատրաստ էր առտուն կանուխ ելլել: Իր ճիւղին պարտքն էր վառարանը վառել, հիւսկէն տոպրակը առնել, շուկայ երթալ եւ գնել յանձնարարուածները:

Տրամադրի՛ր էր թէ ոչ, — ո՛չ ոք կը հարցնէր: Եւ չէր պատահեր որ Արաքսի ցանկար անոր հետ դուրս ելլել: Լեւոն տունը ըլլար կամ ոչ՝ կը հազուէր, եւ, առանց բառ մը ըսելու, կ'ելլէր դուրս:

Իր այդ նսեմ, նկուն, արհամարհեալ վիճակը աւելի շեշտուեցաւ, երբ արգասիքը սկսաւ ձեւաւորուիլ, Արաքսի գոյն ու դիմադիմ փոխեց, ախորժակէ զրկուեցաւ, եւ մարմինը ծանրացաւ:

— Մայրս ո՞ր մէկը պիտի ընէ, պէտք է որ օգնես, — Արաքսիի սովորական բառերը եղան, Կամ՝ միակ բառերը, զորս ան կ'ուղղէր Լեւոնի:

Գիրգոր եւս, որ նախապէս բարձրացեր էր Լեւոնին շնորհիւ, անոր հետ իջաւ, նսեմացաւ կրկին: Լո՛ւո՛՛ ինչպէս առաջ, լեզուն փակած քիմքին, եւ ջանալով բոլորովին աննկատելի զարձնել իր ներկայութիւնը, կծկուած կը մնար իր աթոռին վրայ: Կամ՝ անշուղի ու արագ կը սահէր ճաշասենեակէն՝ դուրս ելլելու համար զինք լրացնող դաւազանին հետ: Որովհետեւ միայն իր գաւազանին հետ էր կարծէք միեւնոյն ճակատազրոյց միացած անոր, երկուքը համընթաց, իրարմով ոտքի կամ իրարմով շարժուն եւ իրարմով լրացած:

Եւ ինք ու Լեւոնը, ըլլալով հաւասարապէս արհամարհուած, հիմա

կ'արհամարհէին նաեւ զիրար: Օրեր շարունակ բառ չէին փոխանակեր: Եւ միայն այն պարագային, երբ երկուքը առանձին կ'ըլլային տանը մէջ, Գիրգոր՝ մեծի՝ թէ փորձառուի իր հանգամանքէն թելադրուած, բայց մասնաւոր որեւէ օտտ կամ անտարժուութիւն կանխելու մտահոգութեամբ՝

- Տաշտը տեղը զբէ՛ր... Խոհանոցին օճախը վառա՞ծ ես, - ընելիք, կատարելիք որեւէ գործ կը յիշեցնէր՝ որովայնախօսի մը պուպրէկին պէս, որ կը շարժի ու կը շարժի թաղուն ձեռքի մը շարժումներուն համաձայն:

Որքան շելուկեցաւ անտեսումը, ա՛յնքան յաճախակի դարձան սաստիկը: Եւ որքան զգալի դարձաւ Արաքսիի արհամարհանքը, այնքան անձրկեցաւ, բթացաւ, երկչոտեցաւ Լեւոն: Իր մտքին ու հոգիին անզորութիւնը բոլորովին կորսնցուց: Եւ միայն մէկ մտածում ունեցաւ, - չըժողոհեցնել: Իսկ իր միակ օփոփանքը եղաւ ա՛յն, որ շուտով հայր պիտի ըլլար: Իր մէջ այնքան զօրացաւ այդ հրճուանքը, որ դարձաւ անհամբեր: Սկսաւ գաղափարի եւ զգոյշ գիտել՝ օր օրի աւելի աճած տեսնելու յոյսով: Իրեն այնպէս կը թուէր, թէ անոր հետ, որուն կը սպասէր, պիտի գար նոր բան մը տունէն ներս: Փոփոխում մը՝ իր դէրժին ու իր վիճակին: Եւ ինչ որ իրեն կը զլանար ամուսնի իր հանգամանքը, իրեն պիտի ընծայէր չօր հանգամանքը: Իր ամբողջ իտէալը դարձաւ այդ դեռ անծանօթ ու դեռ անլրիւ՝ բայց անպակաս դալիք տեսիլքը, - չօրը երազն ու բաղձանքը՝ «շառուի՛ղը» Գեաթիպեան գերդաստանին:

Լեւոն ոչ միայն ցանկաց, այլև հաւատաց թէ՛ ինք մտնչ գաւակ մը պիտի ունենայ: Հարազատ ու արժանի յաջորդ մը իր մեծ չօրը, իր չօրը եւ, - վարանեցաւ մտածելու, - նաեւ իրեն...: Եւ օր՝ պիտի ունենայ իրենց գերդաստանին բոլոր շնորհներն ու ձիրքերը: Կ'երեւակայէ՛ր զայն: Կը պատկերացնէր այնպէս՝ ինչպէս կը ցանկար, որ ըլլար: Եւ գիշերը, Արաքսիի շատ պատահական հանդուրժողութեանը պահերուն, իրեն շնորհքաւ փոքրիկ թոյլտուութենէ մը օգտուելով, ձեռքի մեղմ, զգուշաւոր, գորովոտ շարժումով մը կը հպէր անոր մարմնին այն մասին, որուն ներքեւ կ'աճէր, կը մեծնար, կը կազմաւորուէր սպազայ «շառուի՛ղը» Գեաթիպեան գերդաստանին: Բայց երբ կը փորձէր շոյիլ՝ իր մատներուն վրայ խըտացնելով իր յոյսը, անցեալի յիշատակներուն արթնցուցած յոյզերն ու հեռանկարին խոստացած Հրճուանքները, յանկարծ, ձեռք մը կը հրէր իր սփը՝

- Ես քեզի քանի անգամ ըսի, որ այդ տեղին չգալի՞ս, - զօշիւով:

Այդ վանող ձեռքը զինք հրեց ու քեց տեւապէս: Տանը ամէն կողմը՝ նայուածքով, բաներով, դէմքի արհամարհական թէ դժգոհ արտայայտութիւններով: Եւ քանի մեծցաւ կամարը անոր՝ որ կոչուած պէտք է ըլլար ընտանեկան յարկին ներքեւ ոչ միայն վկայելու նոյնացումը երկու հակներու, այլև զօրացնելու եւ ամբապնդելու զայն, ընդհակառակն, հեռագետէ աւելի հեռացուց զանոնք իրարմէ:

Լեւոն, երկկոյ մը, երկրորդ մահճակալ մը տեսաւ իրենց սենեակին մէջ: Ու յիշեց, որ, առտուն, Սիբան՝

- Արաքսին իր այդ վիճակին մէջ հանդիստ պէտք է քնանայ, - ըսեր էր:

Համակերպեցաւ՝ առանց կարենալ կանխատեսելու թէ ան իր մահճակալը պիտի դառնայ տեւապէս՝ Գիրգորին աթոռին նման:

### ԵՐԿԻՆՔԸ

Կուտակել էր բոլոր վիշտն ու տառապանքը՝  
 Հոգու իր մէջ,  
 Ասես մէկէն քարացել էր  
 Մարմնոջնոր ծանրութիւնից,  
 Ու սառել էր, արձանացել  
 Սառոյցի պէս:

Յանկարծ պռփկաց ծանրութիւնից  
 Իր ցուերի,  
 Ու որոտաց ճայնը նրա  
 Մանչիւնի պէս՝ աւիւծի,  
 Դռուց, գոռաց, ու մարմնոջնոր  
 Դատաւած սրտի  
 Վար քափուեցին հեղեղի պէս:

Արտասուփոս այնքով լի կանգնած էր նա,  
 Մին էլ յանկարծ ժպիտն իջաւ դէմքին նրա,  
 Ժպտաց, ժպտաց, մէկ էլ խնդաց  
 Սիրտն ուռեացած մի անամուն խնդութիւնով  
 Երկինքը մեր,  
 Երկինքը՝ ես:

### Խ Ո Ն


Երբ քիկ-քակն եմ լսում սրտիս,  
 Ինձ քում է կրծքիս ներսում  
 Աշխատում է մի ժամացոյց,  
 Սառն ու անփայլ:

Ու տալիս է երգը կեանքի  
 Իմ ականջին, իմ ազեղին,  
 Եւ ի՞նչ մտիկ նմանութիւն,  
 Երբ ժամացոյցն էլ սրտիս պէս,  
 Ձի կրկնում իր նայն գարկը  
 Նայն վայրկեանին:

Երբ կանգնում է ժամացոյցի  
 Վազքը, սակայն  
 Ես լսում եմ ու արթնացնում  
 Քնից նրան.

Բայց երբ մի օր սիրտս կանգնի  
 Պիտի գգայ նա տրամօրէն,  
 Ինքը ոչ մի լաքող չունի:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



## ՊԵՐՃԱԽՕՍ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Հայ եկեղեցու երկրորդական վարժարաններ յանախոջ մեր ազոց իրական կացութիւնը իմանալու մասնագութեամբ՝ 1968-69 դպրոցական տարւելլանի տարաջն առաջ, Զատարեան Աշակերտական Միութեան անդամները լծուեցան հետախուզական աշխատանքի մը, որուն շուտիւի արդիւնքները, թիւերով ու անոնց առջեւ կատարուած խորհրդանութիւններով՝ կու տանք յաջորդոց էջերուն:

Գլուխ հանուած այս գտնարին ու մտերակրկիտ աշխատանքը երկու զոհունակութիւն կը պատճառէ ընթերցողին. առաջինին աղբիւրը, ի հարկէ, Զատարեան Աշակերտական Միութեան նախանձանդրութիւնն է, եւ երկրորդը մեր աշակերտութեան յուսուողիչ այն պատկերը, որ թիւերու լեզուով ու այնքան յտակարէն կ'ընծայուի մեզի: Ենարժեք թուարանական այդ առիտակին, այսօր դիւրին է բուարար Ծանօթութիւն մը ունենալ երկրորդական վարժարաններ յանախոջ մեր ազոց հետազոյրութիւններուն, ձգտումներուն եւ մեր իրականութեան մէջ գործոն դերեր ստանձնելու կամենողութեան մասին:

### Այլ ինչէք:

Հարցումներին, պատասխաններին եւ անոնց արդիւնքին առջեւ կատարուած խորհրդանութիւններին կը պարզուի, որ եորեր կան զարմեալ եւ երէցներ եւ երէցներուն Քիւրթմարութիւններն ու թերաւուաա կեցուածքը մշակութային, ընկերային թէ քաղաքական ասպարէզներին ներս յանախ արդիւնք կը հանդիսանան երիտասարդներուն յտառի-խաղցման:

Քրտզին, որ ոչ երէցներուն հանդէսն է եւ ոչ ալ երիտասարդներուն, եւ ուշի ուշով կը հետեւի թէ՛ երէցներուն զործունէութեան եւ թէ՛ երիտասարդներուն աճման, մէկ բազմանք ունի՝ — անսնել ամէնքը ճճիզի, ասնջանքի անինջ հոցումն, արդիւնաւորոց ընթացքի մը մէջ: Հինի եւ նորի պայտարը միշտ եղած է, կայ, պիտի ըլլայ, բայց պիտի ուզէինք, որ այդ պայտարը, զէ՛ք այս անգամ, փոխադարձ մեղադրանքներով լղարմանար, շամլանար, շըլլար մանուածի խոտով, ըլլար արժեքով: Ծո՛րեն է եւ միայն արժը, որ զինթափ կ'ընէ դիմացինը...

Մեր երիտասարդութեան մասին արուած այս պատկերը ամբողջացնելու մաքով, այս նախանձանդրութեամբ ու ոճով, այլ աւելի մտերակրկիտ ու ալլազան առիտակ մը կազման է նոյնպէս Զատարեան Ուսանողական Միութիւնը, զոր պիտի ներկայացնենք մեր յաջորդ համարով:

## ԵՐԿԻՆՔԸ

Կուտակել էր բոլոր վիշտն ու տառապանքը՝  
 Հագու իր մէջ,  
 Ասես մէկէն քարացի էր  
 Մորմոհների ծանրութիւնից,  
 Ու ստուի էր, արձանացի  
 Սառոյցի պէս:

Յանկարծ պարփաց ծանրութիւնից  
 Իր ցանքի,  
 Աւ որոտաց ճայնը նրա  
 Մանչիւնի պէս՝ առիւծի,  
 Գոտաց, գռաց, ու մորմոհներն  
 Դատուած սրտի  
 Վար քափուեցին հեղեղի պէս:

Արտասուեաւ աչքով լի կանգնած էր նա,  
 Մին էլ յանկարծ ժպտան իջաւ դէմքին նրա,  
 Ժպտաց, ժպտաց, մէկ էլ խնդաց  
 Սիրտն ուռնացած մի անանուն խնդութիւնով  
 Երկինքը մեր,  
 Երկինքը՝ ես:


## Խ Ո Հ

Երբ քիկ-քակն եմ լսում սրտիս,  
 Ինձ բուսւմ է կրծքիս ներսում  
 Աշխատում է մի ժամացոյց,  
 Սառն ու անփայլ:

Ու ապիս է երգը կեանքի  
 Իմ ականջին, իմ ուղեղին,  
 Եւ ի՞նչ մտիկ մտանութիւն,  
 Երբ ժամացոյցն էլ սրտիս պէս,  
 Ձի կրկնում իր նայն գարկը  
 Նայն վայրկեանին:

Երբ կանգնում է ժամացոյցի  
 Վագրը, սակայն  
 Եւ լարում եմ ու արթնացնում  
 Քնից նրան.  
 Բայց երբ մի օր սիրտս կանգնի  
 Պիտի գգայ նա տրտորէն,  
 Ինքը ոչ մի լարող չունի:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



## ՊԵՐՃԱԽՕՍ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Հայ եռօտար երկրորդական վարժարաններ յանախող մեր ազոց իրական կացութիւնը իմանալու մասնագութեամբ՝ 1968-69 դպրոցական ոտրելըլանի ուտարեն տալը, Զուտրեան Ալակերտական Միութեան անդամները լծուեցան Կեսախուզական ալխատանգի մը, որուն շղափելի արդիւնգները, թիւերով ու անոնց առլեւ կատարուած խորհրդանութիւններով՝ կու տանք յաշորդող էլլերուն:

Կլուխ Կանուած այս գծուարին ու մտերակրկիտ ալխատանգը երկու գտունակութիւն կը պատեառէ ընթերցողին. առաջինին աղբիւրը, ի Կարկէ, Զուտրեան Ալակերտական Միութեան Կախանմարտորութիւնն է, եւ երկրորդը մեր ալակերտութեան յուտաղբիւ ախ պատկերը, որ թիւերու լեզուով ու այնգան յստակորէն կ'ընծայուի մեզի: Մտորիւ թուարանական այդ տախտակին, այսօր գիւրին է բուտորը Եանութիւն մը ունենալ երկրորդական վարժարաններ յանախող մեր ազոց Կեսաղբերութիւններուն, ձգտումներուն եւ մեր իրականութեան մէլ գործան զերիք սասանելու կամեցողութեան մասին:

Այլ խնդիր:

Հարցումներին, պատասխաններին եւ անոնց արդիւնգին ալիւ կատարուած խորհրդանութիւններին կը պարզուի, որ Կորեր կան գործեալ եւ երէցներ եւ երէցներուն թիւրիմացութիւններն ու թերտուաա կեցուածգը մշակութային, ընկերային թէ քաղապական տապաղչիւնրին Կերս յանախ արդելը կը Կանգիտանան երիտաարդներուն յաստիտաղման:

Քրապիմք, որ ալ երէցներուն Կանգչան է եւ ալ ալ երիտաարդներուն, եւ ուլի ուլով կը Կեսեւի թէ՛ երէցներուն գործունելութեան եւ թէ՛ երիտաարդներուն անման, մէկ բաղմանք ունի՝ - տեսել մէկեքը Քերպի, տանլանգի անելել Կոցուածք, արդեւաաբող ընթացքէ մը մէլ, շինի եւ Կորի պայգարը մէլս եղան է, կայ, պիտի ըլլաւ, բայց պիտի ուլչիւնք, որ այդ պայգարը, զէ՛թ այս անգամ, փոխաղարմ մեղաղբանգներով լըտրմանար, լամլանար, լըլլար մանուանք խոտրով, ըլլար գործքով: Դուրեն է եւ միւսն զործը, որ պիտաթակ կ'ընէ դիմացիւր...

Մեր երիտաարդութեան մասին արուած այս պատկերը ամբողջացնելու մտքով այս Կախանմարտորութեամբ ու սեով, այլ աւելի մանրակրկիտ ու ալլապան տախտակ մը կ'աղմած է Կոլիպէս Զուտրեան Ուսանողական Միութիւնը, զոր պիտի Կերկայացնենք մեր տղերը Կամարով:

**Ն. Յ. Գ. ԶԱՒԱՐԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱԺԻՆ**

Զատարեան Աշակերտական Միութիւնը *անբէթ* մը պատրաստեց եւ բաժնեց հայ եւ օտար երկրորդական վարժարաններու բարձրագոյն դասարանները յաճախող հայ աշակերտներու, ծանօթանալու համար անոնց հետեւ տարբերութիւններուն եւ ձգտումներուն:

*Անբէթ*ին օրինակները բաժնուեցան 682 աշակերտներու, որոնցմէ 645-ը կը յաճախեն հայ երկրորդական վարժարաններ, իսկ 37-ը օտար դպրոցներ: Արդիւնէնէրը եղան շատ գոհացուցիչ:

Մեծ ուրախութեամբ կը յայտնենք, թէ հարցաքննուած աշակերտութեան 93,7%-ը հայերէն կը խօսի իրենց տուններէն ներս, թէն 75,7%-ը միայն կընան լաւ հայերէնով արտայայտուիլ: Մնացած փոքրամասնութիւնը կ'արտայայտուի անգլերէնով կամ ֆրանսերէնով:

Թէն մեր երէցներուն մօտ այն կարծիքը կը տիրէ, թէ արդի երիտասարդութիւնը հակաիրոն դիրք մը բռնած է եւ կ'արհամարհէ եկեղեցին եւ անոր դերը, սակայն հակառակը կը փաստեն մեր *անբէթ*ին արդիւնքները: Եկեղեցի յաճախողներուն թիւը փոքր է, բայց վերոյիշեալ թիւին 89,6%-ը կը հաւատան կրօնքին եւ Աստուծոյ գոյութեան: Ծանօթ ենք մեր պատմութենէն այն մեծ դերին, որ կատարած է եկեղեցին հայ ազգին գոյատեւման եւ անոր պահպանման համար: Արդի մեր երիտասարդութիւնը համոզուած է, որ հայ եկեղեցին մեծ դեր ունի կատարելիք մեր պայտարին մէջ:

Բայց ներկայիս հայ եկեղեցին կը կատարէ՞ այդ դերը: Հարցաքննուած աշակերտներուն 40,2%-ը միայն համոզուած է, որ հայ եկեղեցին լիովին կը կատարէ իր դերը:

Ուրախ ենք նաեւ յայտնաբերելու, որ այս աշակերտութեան մեծ մասը հպարտ կը զգայ ինքզինք երբ օտար շրջանակներու մէջ կը գտնուի. եւ փոքրամասնութիւնը մըն է միայն, որ կը ծածկէ իր ծագումը:

Շատ յաճախ մեր մեծերը պահպանողական գիշիք մը կը բռնեն եւ արգելիք կը դառնան, որ մեր երիտասարդները շփոււմ ունենան տեղական մշակութային շարժումներու հետ, բայց մեր աշակերտները որեւէ անպատեհութիւն չեն գտներ այս շփումն մէջ: Ընդհակառակն, կը մտածեն, թէ տեղական մշակութային կեանքին մասնակցիլը կընայ նպաստաւոր ըլլալ իբրեւ ընկերային մերձեցման միջոց: Անոնք կը հաւատան եւ համոզուած են, թէ այդ մերձեցումը օուլման ազգակ մը չի կընար ըլլալ:

Հանրութիւնը համոզուած է, թէ մեր աշակերտութեան մեծամասնութիւնը կը յաճախէ օտար շրջանակներ եւ կը հետեւի միայն օտար մշակութային ձեւերակներու: Բայց կու գանք հաստատելու, որ անոնք հաւասար չափով ներկայ կ'ըլլան օտար ֆու հայկական մշակութային ձեւերակներու: Ներկայիս այն կարծիքը կը տիրէ, թէ մեր աշակերտութիւնը չի հետաքրքր-



բերուիլի հայ գրականութեամբ եւ հայ արուեստով: Բայց դարձեալ արդիւնքները հակառակը կը փաստեն:

Մեր հարցաքննած աշակերտներուն գերակշիռ թիւը, այսինքն՝ 86,7%-ը կը կարդան հայ հեղինակներուն գործերը, իսկ մտաւարարութեան շնորհիւ աշակերտներ կը կարդան հայերէն թերթեր: Փոքրամասնութիւնը, բնականաբար, կը հետաքրքրուի օտար գրականութեամբ եւ կը կարդայ օտար թերթեր, լիբանանեան եւ ոչ-լիբանանեան:

Հայկական երաժշտութեամբ հետաքրքրուողներու թիւը կը հասնի 80,6%-ի, իսկ հայ թատրոնով՝ 72%-ի:

Այս բոլոր արդիւնքները մեծ չափով կը փաստեն եւ կը համոզեն, թէ արդի հայ երիտասարդութիւնը բնաւ չէ շեղած իր հայու պարտականութիւններէ: Մեր անգէթին վերջին հարցումին պատասխանը աւելի եւս կ'ամրացնէ այդ լաւ համոզումը, որ ունեցանք մեր երիտասարդութեան մասին: Մեծ թիւով աշակերտութիւն մը, ըլլա՛յ օտար դպրոց յաճախող, ըլլա՛յ հայկական՝ կը հետաքրքրուի մեր անցեալով: Անոնց 59,5%-ը չի գտնանար դպրոցէն ներս դաստանդուած հայոց պատմութիւնով, եւ իր հետաքրքրութիւններուն յագեցումը կը գտնէ անձնական ընթերցումներու մէջ:

Հիմնուելով այս երեւոյթներուն վրայ, մեր երեցները պէտք է գիտնան վստահիլ հայ երիտասարդութեան եւ հաւատան որ գաղափարի մը իրականացման համար իրենց անխոնջ աշխատանքը կը շարունակուի եւ պիտի շարունակուի սերունդէ սերունդ, մինչեւ այդ նպատակին իրականացումը:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆ

*Ձաւարեան Աշակերտական Միութեան անկէքը իր արդիւնքներով մեզ կը զնէ գանազան անակնկալներու առջեւ եւ կը ժխտէ ներկայիս գոյութիւն ունեցող ըստ մը թիւը գնահատումներ, Հայ աշակերտութեան մասին: Երբ ուշադրութեամբ հետեւինք մեր ստացած արդիւնքներուն, ըստ յտակօրէն կը նկատենք, որ պատասխաններուն մէջէն երեւան եկող Հայ աշակերտին տիպարը, ներկայիս կարծուածը չէ. Հայ աշակերտութիւնը այն չէ, ինչ որ մեծերը կը կարծեն՝ անտարբեր եւ անփոյթ ամէն Հարցի Հանդէպ:*

*Ըստ մեր ունեցած ստոյգ տուեալներուն, Հայ աշակերտը կը հետաքրքրուի քաղաքականութեամբ:*

*Միլիազային քաղաքականութեամբ կը հետաքրքրուի մօտ 70,5%-ը: Ինչ որ ցոյց կու տայ, թէ Հայ աշակերտը անտարբեր չէ իր շուրջ եւ քիչ մը ամէն տեղ պատահող դէպքերուն:*

*Առաջին կէտը, որ մեզ կը զնէ Հարցականի մը առջեւ, Հայ աշակերտին լիբանանցիութեան զգացումն է:*

*Ձանազան Հարցերու մէջ, աշակերտական կամ ուսանողական շարժումներու ընթացքին, նկատելի է, որ Հայ աշակերտը կը քաշուի մէկ կողմ եւ չ'ուզեր մասնակցիլ պատահող դէպքերուն: Արդ, ըստ անկէքին՝ 86,4 առ հարիւրը ինքզինքը կը զգայ լիբանանցի եւ 80,2 առ հարիւրը այս զգացումը ձուլումի պատճառ չի նկատեր: Ի՞նչ է ուրեմն պատճառը ընդհանուր*

այդ ինքնամփոփ դիրքին: Անշուշտ որ կարելի չէ կասկածի տակ առնել Հայ աշակերտութեան լիբանանցիութեան զգացումին անկեղծութիւնը: Գրողապատճառը այդ քաշուած վիճակին, պէտք է փնտռել ուրիշ տեղ:

Ընդհանրապէս, այս աշակերտութեան մեծամասնութիւնը երկրի լեզուին շատ լաւ ծանօթ չըլլալուն, եւ արտայայտուելու դժուարութիւն ունենալուն, կը քաշուի մէկ կողմ: Ընդհանրապէս նկատելի է արդէն որոշ ժօտեցում մը եւ հաւանական է, որ մօտաւոր ապագային այդ դժուարութիւնը բոլորովին հարթօրի եւ այլեւս Հայ աշակերտը դուրս դայ իր մեկուսացումէն:

Հայկական դատի արդիւնքները յուսատու եւ ուրախալի են: Հայկական դատը կը հետաքրքրէ Հայ աշակերտութեան մեծամասնութիւնը, իբրեւ ներկայի մտահոգութիւն:

Հոս արդէն կրնանք փակագիծ մը բանալ: Որեւէ առիթով, հազիւ սկսինք խօսիլ Հայկական դատի մասին, մեծամասնութիւնը այս նոյն աշակերտութեան, կը դժգոհի, ըսելով՝ թէ այլեւս զգուած է նոյն բաները լսել: Մինչդեռ, միւս կողմէ՝ մեր արդիւնքները կը փաստեն, թէ ընդհանուրով, Հայ աշակերտը լուրջ եւ դիտակից կեցուածք ունի իր պարտականութիւններուն հանդէպ: Ուրեմն շիտակ չէ տիրող այն կարծիքը, որ Հայ աշակերտը անտարբեր է: Իսկ եթէ խօսակցութիւններու ընթացքին ան կը բռնէ անտարբեր կեցուածք՝ յանցանքը երէցներուն է, որոնք տեւաբար կը կրկնեն միեւնոյն բաները, առանց աշխատելու նորութիւն մը բերել իրենց ըսածներով:

Հայ աշակերտը ծանօթացած է Հայ դատին, զանազան միջոցներով, որոնցմէ գլխաւորներն են դպրոցը, անձնական ընթերցումները, միութիւնները: Այսպէս, ուրեմն, մեծամասնութիւնը ծանօթացած է Հայկական դատին դպրոցով եւ անձնական ընթերցումներով: Իսկ անդին կը մնայ հսկայ թիւ մը աշակերտներու, որոնք օտար դպրոց յանախելուն, Հայերէն չեն գիտեր եւ ուրեմն չեն ճանչար Հայկական դատը: Այդ մեծամասնութեան մասին պէտք է լրջօրէն մտածեն Հայ ծնողները ու նաեւ Հայկական միութիւնները, որոնք ունին միջոցները, անոնց հարկ եղած ծանօթութիւնները տալու, Հայկական դատի մասին:

Հայապահպանման առաջին երկու ազգակները իրեն համար լեզուն եւ եկեղեցին են, նորէն ժխտումը ընդհանուր կարծիքին, ըստ որում՝ Հայ աշակերտը անտարբեր է եկեղեցիին հանդէպ: Ահաւասիկ փաստը, որ ան ո՛չ միայն անտարբեր չէ, այլ նոյնիսկ շատ կարեւոր դեր մը կու տայ եկեղեցիին, Հայապահպանման մէջ:

Հայկական դատի լուծման համար լաւատես է աշակերտութիւնը եւ արդիւնաբեր կը նկատէ դիւանագիտական լուծում մը: Ուրեմն այս արդիւնքէն կարելի է հետեւցնել, որ Հայկական դատը ամուլ հետաքրքրութիւն մը, պարզ ծանօթութիւն մը չէ Հայ աշակերտին համար: Աւելի բան մըն է անիկա, որ զինքը կը դարձնէ հսկայ ուժ մը, որ վարպետ ու կարող ձեռքերու մէջ կրնայ դառնալ գործօն եւ արդիւնաբեր, որովհետեւ Հայ աշակերտութեան 87 առ հարիւրը կ'օգէ գործնականապէս նպատակ Հայ դատի լուծման համար տարուող աշխատանքներուն:

Հայ աշակերտութեան լուրջ կեցուածքը՝ իբրեւ մարդ, քաղաքացիի գիտակցութիւնը՝ իբրեւ լիբանանցի եւ առօրէ ու դիտակից կեցուածքը՝ իբրեւ Հայ, իրեն կու տան ազնիւ դիմագիծ մը, զոր պէտք է պահել ամէն դնով:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Մեր երեց սերունդը կ'ըսէ եւ իբրևունք ունի, թէ հայ աշակերտութիւնը երբեք ալ չ'աւելի ու աւելի կը վարակուի տեղական կամ օտար բարքերու ազդեցութիւններէն: Անժխտելի իրողութիւն մըն է ասիկա. սակայն մեր երեց սերունդը չ'ըմբռնեմք, թէ հայ երիտասարդը խորքով միշտ կապուած կը մնայ իր ազգին, նոյնի'սկ եթէ տղաքը մագնիսիմ երկնցնէն եւ ազգիկները «*հինի-հինի*» հագնին. օրուան նորոյթին հետ կապուած բաներ են ասանք, որոնք միշտ եւ ամենուրեք կը պատահին ու պիտի պատահին. բայց ազգային լուրջ հարցերը իրենց կարգին կաւ զան գրաւելու հայ երիտասարդներուն ուշադրութիւնն ու մտածողութիւնը:

Այսպէս, մեր *աւելի*ը ցոյց կու տայ, թէ հայ աշակերտութեան 76,7%-ը կը նախընտրէ հայկական շրջանակներու մէջ մտնել, թէն 47%-ը միայն կ'անդամակցի հայկական միութիւններու: Մեր տուեալները կ'ըսեն նաեւ, թէ այս աշակերտութեան 47%-ին կարեւոր մէկ մասը կը մտնէ մշակութային եւ ընկերային շրջանակներու մէջ, իսկ մնացածը կը հետաքրքրուի մարզական հարցերով: Սակայն չի բաւեր միայն անգամակցիլ միութեան մը, առանց աշխատակցելու եւ օգնելու միութեան ձեռնարկներուն: Այստեղ ուրախ ենք կրկին հաստատելու, թէ անգամակցողներուն 72,6%-ը գործօն մասնակցութիւն կը բերէ միութեանկան զանազան աշխատանքներուն, թէն չենք կրցած ստուգել, թէ այս աշխատանքը ինչքան որակաւոր եւ արդիւնաւէտ է: Վերջապէս, կայ նաեւ հայ աշակերտութեան 9% փոքրամասնութիւն մը, որ օտար միութիւններու կ'անդամակցի եւ բուսականաչափ գործօն մասնակցութիւն կը բերէ այդ օտար շրջանակներէն ներս: Մենք այս իրողութիւնը երբեք չենք դատապարտեր, որովհետեւ տեղացի ժողովուրդին հետ յարաբերիլն ու շաղուիլը խելօք վարմունք է եւ արդիւնները միշտ ի նպաստ մեզի կրնան ըլլալ:

Անցնիմք վերջապէս, ընդհանրապէս հանրութեան մօտ տիրող այն կարծիքին, թէ հայը կը խուսափի օտար շրջանակներու մէջ իր ազգութիւնը յայտնելէ. թերեւս հայը այդպէս էր տեսնակ մը տարիներ առաջ. սակայն, հիմա, մեր ստացած ստույգ տեղեկութիւնները կը փաստեն, թէ հայ աշակերտութեան 73%-ը օտար միջավայրի մէջ հպարտ է իր հայու կոչումով:

Մեր մեծերուն կը մնայ երանքել այս խանդավառութիւնը եւ պահպանել այս թարմ ուժը, որ ան դառնայ նաեւ արդիւնաբեր:

## ՀԱՐՑԱՐԱՆԸ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 1- ՍԵՌ

- Արական	285	—	41,78	41,8%
- Իգական	397	—	58,21	58,2%

#### 2- ԴԱԻԱՆԱՆՔ

- Առաջնական	538	—	78,88	78,9%
- Կարգիկ	31	—	4,54	4,5%
- Աւետարանական	54	—	7,91	7,9%
- Այլ կարգիչություն	2	—	0,29	0,3%
- Չեն պատասխանած	57	—	8,37	8,4%

#### 3- ՏԱՐԻՔ

- 15 տարեկան	89	—	13,04	13%
- 16 »	146	—	21,40	21,4%
- 17 »	207	—	30,35	30,4%
- 18 »	165	—	24,19	24,2%
- 19 »	66	—	8,21	8,2%
- 20 »	19	—	2,78	2,8%

#### 4- ՀՕՐ ԶԲԱՂՈՒՄ

- Ազատ ապարեզ	81	—	11,87	11,9%
- Պաշտոնեայ	136	—	19,94	19,9%
- Վաճառական	173	—	25,36	25,4%
- Արհեստավոր	230	—	33,72	33,7%
- Մեռած	18	—	2,63	2,6%
- Չեն պատասխանած	44	—	6,45	6,5%

5.- ՅԱՃԱՆԱՆՎ ԱՐԺԱՐԱՆՆԵՐ

- Հայկական	645	—	94,57	94,6%
- Օտար	37	—	5,42	5,4%

6.- ՏԱՆ ՄԵՋ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԻՆՉ ԼԵՁՈՒ ԿԸ ԳՈՐԾԱՆԵՔ

- Հայերէն	639	—	98,69	98,7%
- Անգլիերէն	1	—	0,14	0,15%
- Ֆրանսերէն	3	—	0,44	0,4%
- Արաբերէն	4	—	0,58	0,6%
- Թրքերէն	6	—	0,88	0,9%
- Իտալերէն	1	—	0,14	0,14%
- Գերմաներէն	-	—	-	-
- Սլոներէն	-	—	-	-
- Սխալ պատասխանած	26	—	3,81	3,8%
- Չեն պատասխանած	2	—	0,29	0,3%

7.- ՈՐ ԼԵՁՈՒՈՎ ԿՐՆԱՔ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԻԼ

- Հայերէն	516	—	75,65	75,7%
- Անգլիերէն	38	—	4,83	4,8%
- Ֆրանսերէն	32	—	4,69	4,7%
- Արաբերէն	24	—	3,51	3,5%
- Թրքերէն	2	—	0,30	0,3%
- Իտալերէն	-	—	-	-
- Գերմաներէն	-	—	-	-
- Սլոներէն	-	—	-	-
- Սխալ պատասխանած	68	—	9,97	10%
- Չեն պատասխանած	7	—	1,02	1%

**Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ**

1.- ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

- Այո	481	—	70,52	70,5%
- Ոչ	193	—	28,29	28,3%
- Չեն պատասխանած	8	—	1,17	1,2%

2.- ա) ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՏՈՎ

- Այո	572	—	88,87	88,9%
- Ոչ	110	—	16,11	16,1%
բ) ԵՔԷ ԱՅՈ				
- Իբր պատմական հարց	190	—	27,86	27,9%
- Իբր ճերկայի մտահոգութիւն	360	—	52,78	52,8%
- Չեն պատասխանած	22	—	3,50	3,5%

<b>3.- ՈՐՁԱՓՈՎ ԾԱՆՕԹ ԷՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ</b>			
- Բառական	362	—	53,07 53,1%
- Քիչ	280	—	41,05 41,1%
- Բնու	39	—	5,71 5,7%
- Չեն պատասխանած	1	—	0,14 0,14%
<b>4.- ԳԼԽԱՒՈՐԱՐԱՐ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԾԱՆՕԹԱՑԱԾ ԷՔ ՀԱՑԿ ԴԱՏԻՆ</b>			
- Դպրոց	274	—	40,17 40,2%
- Զանազան միութիւններ	57	—	8,35 8,4%
- Անճնական ընթերցումներ	158	—	23,16 23,2%
- Դպրոց, Զանազան միութիւններ	29	—	4,25 4,3%
- Դպրոց, Անճնական ընթերցումներ	107	—	15,68 15,7%
- Զանազան միութիւններ/Անճնական ընթերցումներ	21	—	3,08 3,1%
- Դպրոց/Զանազան միութիւններ/Անճնական ընթերցումներ	12	—	1,76 1,8%
- Չեն պատասխանած	24	—	3,52 3,5%
<b>5.- ԿԱՐԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԷՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ԼՈՒԾՈՒՄԸ</b>			
- Այո	524	—	76,83 76,8%
- Ոչ	138	—	20,23 20,2%
- Չեն պատասխանած	20	—	2,93 2,9%
<b>6.- ԵԹԷ ԱՅՈ, ՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻԻՆԱՐԵՐ ԿԸ ԳՏՆԷՔ</b>			
- Դիւանագիտական	398	—	58,36 58,4%
- Ուժի գործածութիւն	64	—	9,38 9,4%
- Այլ կարելիութիւն (փռփականո)	9	—	1,32 1,3%
- Դիւանագիտական/Ուժի գործածութիւն	21	—	3,08 3,1%
- Չեն պատասխանած	32	—	4,69 4,7%
<b>7.- ՊԻՏԻ ՈՒՋԷՒՔ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՊԷՍ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՅ ԴԱՏԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐՈՒՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ</b>			
- Այո	593	—	86,95 87,0%
- Ոչ	77	—	11,29 11,3%
- Չեն պատասխանած	12	—	1,76 1,8%
<b>8.- ՉԵՐ ՀԱՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԻՆ ԻՆՔՁԻՆՔՆԻԴ ԼԻՐԱՆԱՆՑԻ ԿԸ ԶԳԱՔ</b>			
- Այո	589	—	86,36 86,4%
- Ոչ	90	—	13,19 13,2%
- Չեն պատասխանած	3	—	0,43 0,4%
<b>9.- ԼԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԼԻՐԱՆԱՆՑԻՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ ՁՈՒՂՈՒՄԻ ՊԱՏՃԱՒ ԿՐՆԱՔ ԸԼԼԱԼ</b>			
- Այո	123	—	18,03 18%
- Ոչ	547	—	80,20 80,2%
- Չեն պատասխանած	12	—	1,76 1,8%

10- ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ  
ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ ԴԱՍԱԽՈՐԵԼ (ԹՈՒԱԳՐԵԼՈՎ)

- Հեղու			
1.-	425	62,31	62,3%
2.-	142	20,82	20,8%
3.-	61	8,94	8,9%
4.-	17	2,49	2,5%
Զեմ պատասխանած		37	5,42
- Եկեղեցի			
1.-	101	14,80	14,8%
2.-	160	23,46	23,5%
3.-	173	25,36	25,4%
4.-	190	27,85	27,9%
Զեմ պատասխանած		58	8,50
- Մշակոյթ			
1.-	57	8,35	8,4%
2.-	240	35,19	35,2%
3.-	247	36,21	36,2%
4.-	91	13,34	13,3%
Զեմ պատասխանած		47	6,9%
- Աղբայրի քաղաքական խտնալ			
1.-	85	12,46	12,5%
2.-	86	12,61	12,6%
3.-	139	20,38	20,4%
4.-	318	46,62	46,6%
Զեմ պատասխանած		54	7,91

9. ԿՐՕՆԱԿԱՆ

1- ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ՀԱՒԱՏԱՎ			
- Այո	611	89,58	89,6%
- Ոչ	67	9,82	9,8%
- Զեմ պատասխանած	4	0,58	0,6%
2- ԵԿԵՂԵՑԻ ԿՆՐԹԱՎ			
- Կոնստանտնուպոլս	141	20,67	20,7%
- Յաթայ	172	25,22	25,2%
- Երբիմ	317	46,46	46,5%
- Բնու	42	6,16	6,2%
- Զեմ պատասխանած	10	1,46	1,5%
3- ԿՐՕՆԱԿԱՆ ՈՐԵՒԷ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՎ ԷՔ			
- Այո	87	12,75	12,8%
- Ոչ	532	78,00	78%
- Զեմ պատասխանած	63	9,23	9,2%

4-- ա) ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ, ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐԿԱՑԻՍ ԿԱՐՆԻՈՐ ԳԵՐ ՄԸ ՈՒՆԻՐ ԽԱՂԱՒՔ				
- Այս	516	—	75,65	75,7%
- Ոչ	150	—	21,99	22%
- Չեն պատասխանած	16	—	2,34	2,3%
բ) ԵԹԷ ԱՅՈ՛ ԿԸ ԿԱՏԱՐԷ՞ ԻՐ ԳԵՐԸ				
- Այս	274	—	40,18	40,2%
- Ոչ	228	—	33,43	33,4%
- Չեն պատասխանած	14	—	2,53	2,5%

**Դ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**

1-- Ո՛Ր ՇՐՋԱՆԱԿԻ ՀԱՒԱՔՈՑԹՆԵՐՈՒՆ ԿԸ ՆԱԽԸՆՏՐԷՔ ՆԵՐԿԱՑ ԳՏՆՈՒԻԼ				
- Հայկական	523	—	76,68	76,7%
- Օտար	159	—	23,31	23,3%

2-- ա) ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԵՒԷՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԸ ԿՊԱՆԳԱՄԱԿՑԻՔ				
- Այս	321	—	47,06	47,1%
- Ոչ	310	—	45,45	45,5%
- Չեն պատասխանած	51	—	7,47	7,5%
բ) ԵԹԷ ԱՅՈ՛, ԳՈՐԾՈՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԷՔ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ				
- Այս	233	—	34,16	34,2%
- Ոչ	94	—	12,32	12,3%
- Չեն պատասխանած	4	—	0,59	0,6%

3-- ՕՏԱՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ ՁԵՐ ՀԱՑ ԾԱԳՈՒՄԸ ՁԵՋԻ ՀՊԱՐՏԱՆՔԻ ՋԳԱՑՈՒՄ ԿՈՒ ՏԱ՛Ց				
- Այս	498	—	73,02	73%
- Ոչ	14	—	2,05	2,1%
- Չեն պատասխանած	11	—	1,61	1,6%

4-- ա) ՏԵՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԻԸ ՀԱՑԵՐՈՒՆ ՆՊԱՍՏԱՒՈՐ ԿՐՆԱ՛Ց ԸԼԼԱԼ				
- Այս	583	—	85,48	85,5%
- Ոչ	92	—	13,48	13,5%
- Չեն պատասխանած	7	—	1,03	1%
բ) ԵԹԷ ԱՅՈ՛				
- Իբր հայ մշակույթի զարգացման միջոց	267	—	39,15	39,2%
- Իբր ընկերային մեթոդներով միջոց	279	—	40,91	40,9%
- Այլ կարելիություն	37	—	5,42	5,4%



5.- ա) ԱՆԻՍՏ ԷՔ ՕՏԱՐ ՈՐԵԻԷ ՄԻՈՒԹԵԱՆ			
- Այս	62	9,09	9,1%
- Ոչ	616	90,31	90,3%
- Չեն պատասխանած	4	0,58	0,6%
բ) ԵԹԷ ԱՅՈ, ԳՈՐԾՈՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԷՔ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ			
- Այս	44	6,45	6,5%
- Ոչ	13	1,91	1,9%
- Չեն պատասխանած	5	0,73	0,7%
6.- ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՑ ԿՂԼԼԱՔ			
- Յանախ	185	27,12	27,1%
- Երբեմն	425	62,31	62,3%
- Երբեք	60	8,79	8,8%
- Չեն պատասխանած	12	1,76	1,8%
7.- ՕՏԱՐ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՑ ԿՂԼԼԱՔ			
- Յանախ	44	6,45	6,5%
- Երբեմն	434	63,63	63,6%
- Երբեք	194	28,44	28,4%
- Չեն պատասխանած	10	1,46	1,5%
8.- ՄԱՐԶԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՑ ԿՂԼԼԱՔ			
- Այս	277	40,61	40,6%
- Ոչ	94	13,78	13,8%
- Երբեմն	306	44,38	44,3%
- Չեն պատասխանած	5	0,73	0,7%
9.- ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՄ ՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ			
- Այս	593	86,95	87%
- Ոչ	89	13,04	13%
10.- ՀԱՅՆՐԷՆ ԳԻՐՔԵՐ ԿԸ ԿԱՐԴԱՔ			
- Այս	591	86,65	86,7%
- Ոչ	87	12,75	12,8%
- Չեն պատասխանած	4	0,58	0,6%
11.- ԹԵՐԹ ԿԸ ԿԱՐԴԱՔ			
- Այս	624	91,49	91,5%
- Ոչ	57	8,35	8,4%
- Չեն պատասխանած	1	0,14	0,14%

## 12.- ա) ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՄՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ

- Այո	550	—	80,64	80,6%
- Ոչ	129	—	18,91	18,9%
- Չեն պատասխանած	3	—	0,44	0,4%

## բ) ԵԹԷ ԱՅՈ

- Դատական	107	—	15,68	15,7%
- Ժողովրդական	308	—	45,16	45,2%
- Դատական/Ժողովրդական	127	—	18,62	18,6%
- Չեն պատասխանած	8	—	1,17	1,2%

## 13.- ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՄՔ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՎ

- Այո	491	—	71,99	72%
- Ոչ	190	—	27,85	27,9%
- Չեն պատասխանած	1	—	0,14	0,14%

## 14.- ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՄՔ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՄԲ

- Այո	354	—	51,90	51,9%
- Ոչ	323	—	47,36	47,4%
- Չեն պատասխանած	5	—	0,78	0,7%

## 15.- ա) ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՑԵԱԼՈՎ ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻՒՄՔ

- Այո	615	—	90,17	90,2%
- Ոչ	66	—	9,67	9,7%
- Չեն պատասխանած	1	—	0,14	0,14%

## բ) ԱՑԳ ՈՒՎՂՈՒԹԵԱՄԲ ԱՆՁՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷՔ

- Այո	406	—	59,53	59,5%
- Ոչ	195	—	28,59	28,6%
- Չեն պատասխանած	14	—	2,53	2,5%



Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

**ՄԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝**

**ԺԳ. - ԺԴ. ԳԱՐԵՐՈՒՆ**

ԺԱ. դարու կէսերէն սկսեալ մինչեւ ժԲ. դարու վերջերը կառուցողական անգործութեան շրջան մը կ'երկարի դարձեալ՝ այս ան.ա. սելճուքեան լուծին տակ տառապող Հայաստանի մէջ, Փոքր Թիւով կերտուածքներ միայն, եւ ոչ առաջնակարգ արժէքի, հասած են մեզի՝ շուրջ 130-140 տարուան այդ ժամանակամիջոցէն մնացած: Սելճուք էմիրները անխնայ կը կողոպտէին զիւզերու եւ քաղաքներու ժողովուրդը, կը ստիպէին երկրասարգուծութիւնը, կ'աւերէին եւ կը հրկիզէին յուշարձանները, մանաւանդ՝ կրօնական կառուցուածքները:

ԺԲ. դարու ընթացքին քրիստոնեայ եւ զրաքի Վրաստանի զօրացումը պատճառ դարձաւ, որ Հիւսիսային Հայաստանի կարգ մը իշխաններն ու զօրավարները դաշնակցին Վրաստանի հետ, միասնաբար մղելու համար պայքարը՝ սելճուքեան բռնատիրութեան դէմ: Հիւսիսային ազատագրման զորքին մէջ կարեւոր դեր ունեցան յատկապէս Ջաքարեան աւատապետական տոհմի (Լօսի, - Գուգարաց աշխարհ) ներկայացուցիչները, որոնք վրացական բանակներուն մէջ ունէին զօրավարի, երբեմն եւ սպարապետի (ամիրապատար) աստիճան: ԺԳ. դարու սկիզբը՝ արդէն իսկ սելճուքեան լուծէն ազատագրուած էին Գուգարքը (եր-

բեմնի Տաշիր-Ձորապետի Թաղաւորութեան կարեւորագոյն մասը), Արցախը (այժմու Ղարաբաղը), Սիւնիքը եւ Այրարատեան նահանգի մեծագոյն մասը, շնորհիւ Ջաքարէ եւ Իվանէ Ջաքարեան իշխաններու զլիաւորած հայ-վրացական բանակներու յաղթական մարտերուն: Վրաց Թամար Թադուհին ազատագրուած Հայկական շրջանները յանձնեց Ջաքարեաններուն: Ետևով ազատագրուեցան նաեւ Կարսն ու Ֆազրեանդ գաւառը, եւ Ջաքարեաններու իշխանութիւնը տարածուեցաւ նաեւ Բարձր Հայքի եւ Տուրուբանի մէջ մասին վրայ: Ջաքարեաններու իշխանութիւնը մեր պատմագրութեան մէջ յիշատակուած է «պետութիւն», «աշխարհակալ տէրութիւն» եւ այլ անուններով, իսկ իրենք՝ Ջաքարեան իշխանները՝ «շահնշահ» եւ «հայոց Թաղաւոր» տիտղոսներով: Պէտք չէ մոռնալ սակայն՝ որ, թէեւ ներքնապէս ինքնավար, Ջաքարեաններու Հայաստանը իրաւօգէտ կախուած էր Վրաստանի Թաղաւորութեանէն:

Հայաստանի ներքին ինքնավարութիւնը կարճատեւ եղաւ զժրախտարար, եւ ԺԳ. դարու 50-ական թուականներէն սկսեալ՝ Հայաստանը մաս կը կազմէր արդէն հետզհետէ դէպի Արեւմուտք յառաջացող մոնկոլական մեծ կաշտու-

Քեան: Ապա, ժՊ. դարուն, երկերը պահ  
 մը բաժանուեցաւ թուրքմենական ծա-  
 դուժով արքայապետըներու միջեւ (Ղա-  
 րա-կոյունյուններ և Աղ-կոյունյուններ),  
 նոյն դարու վերջերը էյնալու համար  
 կենկթիմուրեան բարբարոս արչաւանջ-  
 ներու ծիրին մէջ: Հայ ժողովուրդի կեն-  
 ցադային պայմանները, տնտեսական և  
 մշակութային կեանքը և ազգային դի-  
 մադրականութիւնն ու կորովը երկար  
 մամանակի համար փճացան: Արդէն իսկ  
 սկսած մեծ դաղթալարժեքը շարունակ-  
 ւեցան թափով: Երբեմնի ծաղկեալ երկի-  
 րը ամայացաւ:

ԺԲ. դարու վերջին տասնամեակնե-  
 րուն սկսած և Չաքարեաններու իշխա-  
 նութեան օրերուն մեծ թափ ստացած շի-  
 նարարական վերածնունդը մասամբ շա-  
 րունակուեցաւ նաեւ ժՊ. դարուն (թէեւ  
 շատ աւելի սահմանափակ կերպով),  
 մինչև Լենկթիմուրեան արչաւանջները:  
 Հայ դասական ճարտարապետութեան  
 վերջին մեծ ծաղկումը եղաւ ափկա,  
 Մեծ Հայաստանի զանազան շրջաններուն  
 մէջ: ԺԲ-ԺՊ. դարերուն, շինարարու-  
 թիւնը ծաղկեցաւ նաեւ Կիլիկիոյ Հայկա-  
 կան թաղաքութեան սահմաններէն  
 ներս. բայց այդ մասին մենք պիտի խօ-  
 սինք առանձին: ԺՊ. դարէն ետք՝ ճար-  
 տարապետական մասնակի վերածնունդ  
 մը կը նկատենք նաեւ ժԲ. դարուն:

Ա. Ընդհանուր պիտակ. - Նախորդ  
 շրջանին արդէն իսկ սկսած արհեստնե-  
 րու և վաճառականութեան ծաղկումը  
 նոր թափ ստացաւ Չաքարեաններու օ-  
 րով: Մասամբ տնտեսական վերելքը  
 պայմանաւորող, մասամբ ալ անկէ բխող՝  
 առեւտրական դասի հարստացումը և  
 հանրային-շինարարական գործին լծուի-  
 ւը զարարչականի ամենահիմնական յատ-  
 կանիչներէն մէկը եղաւ: Իշխանայէն և  
 կղզեցիներու և վանական մատուռներու  
 ու դաւիթներու կողքին՝ այս շրջանին կը  
 պտնենք տաճարներ ու պալատներ - ամե-  
 նաչափ շէնքերն - մենաշարուած առեւտր-  
 նուիրատուութեամբը կա-



Անի, - Տիգրան Հոնեցի Սր. Գրիգոր  
 եկեղեցին (ժՎ. դար)  
 (Համազգայինի հուսմամբ շինուած)

մութեան չգերազանցուած աստիճանի մը  
 կը հասնի Անին՝ Չաքարեաններու մայ-  
 րաքաղաքը: ԺՎ. դարուն՝ այնտեղ կը  
 բարձրանան պալատներ (ինչպէս՝ Պարո-  
 նի պալատը), հիւրանոցներ, շքեղ մենա-  
 տուներ, ինչպէս նաեւ նոր եկեղեցիներ  
 (Տիգրան Հոնեցի առեւտրականի Սր.  
 Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Բախտա-  
 զիկի և Աղբոցլանքի եկեղեցիները, Ա-  
 ռափիոց եկեղեցիի գաւիթը, և այլն):

Երկրի ամբողջ տարածքին, առեւ-  
 տրական թէ զինուորական անհրաժեշ-  
 տութեանց բերմամբ, կը կառուցուին  
 ճամբաներ և, անոնց երկայնքին, կա-  
 բաւանատուներ (Թալիշ, Ներքին Թալիս,  
 Սելիւս, Էւայնի: Նոր թափ կը ստանայ  
 կամուրջաշինութիւնը (Սամաիթի, Աշ-  
 տարակի, Անիի, Սղեզնաձորի, Գառնիի,  
 և այլ կամուրջներ):

Ամբողջները ամբողջացան՝ պալատա-  
 կան, կենցաղային թէ ոսղմակուն (նոր  
 պարիսպներ) յաւելեալ շինութիւններով:  
 Չաքարեաններու օրով՝ Անիքըն ու այլ  
 ամբողջողեակներ վերածուեցան ինքնա-  
 բաւ անասովներու, ուր կարելի էր աղ-  
 րիչ և թշնամիներու դիմադրելի երկար  
 մամանակ:

Ամբողջացան նաեւ նախորդ դարու

կենդանայ և փարթա-  
 digitised by



Տիգրամ Հոննցի եկեղեցիի գաւիթը և մուտքը  
(Համագգայինի հուսփածոյէն)

լը՛նանին հիմնադրուած վանքերը եւ կառուցուեցան նորերը: Այսպիսով ժԳ. — ժԴ. դարերու մեծ Հայաստանի նարտարապետութեան ամենայատկանշական կերտուածքներէն դարձան վանական էմփիլեֆները՝ բաղկացած գլխաւոր եկեղեցիէ մը եւ երկրորդական քանի մը եկեղեցիներէ (կամ մատուռներէ), գաւիթներէ կամ ժամատուռներէ, սեղանատուներէ, գրատուներէ, զանազակատու-

ներէ եւ այլ յուշարձաններէ (խաչքարեր, կոթողներ, դամբարաններ, եւ այլն): Հռչակաւոր են եղած, եւ այցելուին վրայ՝ երբեմն իրենց կիսափուշ վիճակով՝ մինչեւ հիմա իսկ անմոտանալի սպաւորութիւն կը գործեն Սանահինի, Հաղբառի, Նոր Գետիկի (Խոջավանք), Հազարծիմի, Կեչառիսի, Գեղարդի, Տաքիւի, Յովհաննավանքի, Սաղմոսավանքի եւ այլ վանական էմփիլեֆները: Ա-

նոնցմէ ու՛մանք, ինչպէս Հաղթատը, Սանահինը, Գլաճորը, Տաթևը եւ ուրիշներ, ԺԱ.էն ԺԴ. դարերուն կազմած են զպրոցական կարևոր կեդրոններ՝ «համալսարանները»: Վանական կեդրոններուն մէջ է առաւելարար որ ծաղկած են միջնադարեան հայ մատենագրութիւնը, փիլիսոփայութիւնը, զբնութիւնը եւ մարտնչակարգութիւնը: Նոյնօրինակ վանական կեդրոններ ունեցած է անշուշտ ներկայի թրքապատկան Հայաստանը (Հալուսնա, Խծկոնք, Վարազ, Նարեկ, Առաքելոց եւ Գլակայ վանքեր, եւայլն). բայց անոնց վիճակուած դժբախտ ճակատագրին եւ այժմու եզերական վիճակին մասին սակէ առաջ խօսած ենք արդէն:


Վանական շինութիւններու, ի մասնաւորի գաւիթներու եւ սեղանատուններու կառուցման մէջ՝ հայ վարպետները յայտօրէն կիրարկեցին նախորդ շրջանի նախափորձերով վերջնական հասունութեան յանգած խաչածին կամարներու դրութիւնը, — ծածկի կառուցի նոր եղանակ մը, որ սիւներու եւ որմերու կրման պաշտօնը կը թեթևեցնէ եւ հնարաւորութիւն կը ստեղծէ նոր տիպի, եւ ներքին տարածութիւններու մեծ միանականութեամբ օժտուած ճարտարապետական իրագործումներու: Ասոր ապահով փաստերն են Արաքելոց վանքի հարաւային գաւիթը, Հաղբասի, Գանձատարի, Խոքակերտի եւ վանական այլ քովիքներու գաւիթները: Գոթական արուեստի ծաղկումէն շուրջ 100-150 տարի առաջ ինքնավստահութեամբ եւ վարպետութեամբ կիրարկուած կառուցողական թեթևացման, շղատրման եւ զանդուածի տարրազարգացման վերլուծական այս դրութիւնը երկար մտածել տուած է զոթական ճարտարապետութեան սկզբնաղբիւրները փնտռող գիտնականներուն, եւ զանոնք ի վերջոյ հասցուցած ա՛յն եզրակացութեան, որ Եւրոպայի ԺԴ.—ԺԶ. դարերու հարաւանքը կազմող կառուցողական այդ սճի պատրաստութեան մէջ՝ Հայաստանի նախափորձերը ունեցած են իրենց ապահով գերը: (\*)

Գարալըջանի այլ մէկ ընդհանուր

յատկանիշն է՝ զարդային մոթիփներու, քանդակներու, շքամուտքերու եւ որմնանկարներու ճոխացումը. այնքան՝ որ զարդաքանդակները եւ figuratif բարձրաքանդակները ճակատները կը լեցնեն քիչ մը ամէն կողմ, յաճախ հակադրութիւն կազմելով նախորդ շրջաններու (մանաւանդ Ոսկեդարու) կառուցողական ըմբռնումներուն հետ, ուր քանդակազարդումը երբեք ինքնանպատակ չէր, այլ ենթակայ միայն ընդհանուր-կառուցողական անհրաժեշտութիւններուն (բացառութիւն կազմած է Աղթամարը անշուշտ, որու մասին տակէ առաջ խօսած ենք արդէն): Նորըր եւ այլապես մոթիփներով՝ երկրաչափական թէ figuratif քանդակներ կը զարդարեն զոներու բարաւորները (tympan), մուտքերու եւ պատուհաններու պսակները: Մեծ զարդացում կը ստանան խաչքարերը, որոց նմանողութեամբ քանդակներ կը գտնուէ յաճախ՝ եկեղեցիներու եւ գաւիթներու պատերուն վրայ իսկ՝ քիչ մը ամէն տեղ:

Բացորոշ է որ ԺԴ.—ԺԶ. դարերուն գործածուած կարգ մը զարդաձեւեր, ինչպէս՝ ի մասնաւորի՝ շքաքարային մոթիփը (stalactites), կարգ մը մուտքերու բարաւորները պտակող սրտաձեւ (կեդրոնը սուր՝ զէպի վեր բարձրացած) կամարները, պարսկական, արաբական, կամ ընդհանրապէս՝ իսլամական արուեստի ազդեցութիւնը կը մատնեն: Բայց, այստեղ եւս, օտարամուտ մոթիփներու օգտագործումը չէ կատարուած կապիւմի սկզբունքով. հայ վարպետները զանոնք պատշաճեցուցած են իրենց աւանդական ըմբռնումներուն եւ ճաշակին՝ ստեղծելու համար ընդհանուր կառուցիկ հետ պատշաճող նոր զարդաձեւեր: «Պէտք է ասել, — կը գրէ Մնացականեանը, — արեւայ վարպետները մրանցից պահպանցիկ արտաքին արտայայտչական սկզբումները միայն եւ ամէն ինչ լուծեցին իրենց տեղական, շատ խոր տրադիցիաներ ունեցող կանստրուկտիվ ձեւերի հիման վը-

(1) Տես J. Baltrusaitis, « Le problème de l'ogive et l'arménie » - Ed. E. Leroux, Paris.



Անի, - Պարսնի պալատին աւերակները

լայն»։ («Անկարկ հայ ճարտ. պատմքն.» - էջ՝ 208)։

Մնաց որ, այստեղ եւս՝ ինչպէս միշտ, հայ ճարտարապետները աւելի սոււած են, քան ստացած։ Մեյնուքեան տիրապետութեան օրերուն (ճարտարապետներ՝ Գալուստ, Կալոյեան, Քաղաւոր, եւ այլն. - տես՝ նոյն գործը, էջ՝ 209), ինչպէս եւ աւելի ուշ, Օսմանեան կայսրութեան շրջանին (ճարտ. Միսան, Պալաններու զերդաստանը եւ շատ ուրիշներ), հայ կառուցողներու տաղանդին կը պարտինք շատ մը կարեւոր պաշտաններ, մզկիթներ եւ իւլամական այլ յուշարձաններ։ Հայկական զարդամաներն ու հիմնական շինարարական ներկայ են սովետութեք՝ եւ կարնոյ հաշակաւոր «Ձիթթէ միւսարէ»-ին, եւ Պալազիտի սելճուքեան զղեակ-պալատին, եւ շատ ուրիշ կառուցուածքներու մէջ։ «Սիլբուկ-

ման շատ կառուցուածքների նոյնիսկ յատկազմային ձեւերում (տես՝ նոյնը, էջ՝ 209) պարզ կերպով կարելի է տեսնել հայկական նարտարապետութեան մէջ մշակուած յօրինուածքների ուղղակի ազդեցութիւնը, իսկ սիլբուկեան զամբարանները ոչ այլ ինչ են, քան հայկական եկեղեցիների գմբէտների պարզ ընդօրինակումք։

Բ.- Անիի Ջախարաններու օրով - Ժ.-ԺԱ. զարեբէն մնացած ծանօթ կառուցուածքներէն զատ (որոնցմէ գէթ Գազկաշէնը կիսափուշ վիճակ մը ունէր արդէն), ԺԳ.-ԺԴ. զարեբուն Անիի մէջ կը գտնենք բազմաթիւ նոր քաղաքացիական թէ եկեղեցական շինութիւններ։

Արդէն իսկ 1072-ին, Շէտտատեանները մզկիթի վերածած էին Բազրատունեաց Անիի քաղաքային մաքսատունը, ութանկիւն միւսարի մը յաւելումով։

Շէնքը ծանօթ է «Մանուշէի սղկիթ» անունով:

Եկեղեցական ճարտարապետութեան նոր գոհարներ ծնունդ առին «այնտեղ» Ջաքարեաններու օրով: Առաջիններէն մէկն էր հաւանաբար՝ Բախտազիկի եկեղեցին, նուիրուած՝ Սր. Գրիգորի, կառուցուած ժ.Գ. դարու վերջերը կամ ժ.Գ. դարու սկիզբը: Դժբախտաբար մեծ բան մնացած չէ այս գոգտրիկ ու քանդակապարզ եկեղեցիէն, որուն վերակազմութիւնը կատարած է Թորածանեանը՝ հիմնուելով պեղումներու արդիւնքներուն վրայ: Բախտազիկը պատկանած է զբօրէցի Վրէժիկի արահներու կերպարին եւ ունեցած է սրացիկ, վերամբարձ համալսարաններ: Ներքին որմերուն վրայ գտնուած են որմնակարներ, հայերէն որմնազարութիւններով:

Ջաքարեաններու օրով կառուցուած է նաև Ազգիայ բերդի եկեղեցին, Անիի հարաւային եռանկիւնաձեւ հրեանդանի ծայրին, հաւանաբար նախկին եկեղեցիի մը (թերեւս Լուսուորչաչն) աւերակներուն վրայ: Ունեցած է ճոխ քանդակներ:

1215-ին, մեծահարուստ առեւտրական Տիգրան Հոննցի նուիրատուութեամբ կառուցուած է Սր. Գրիգոր Լուսաւորի՝ եկեղեցին, հետագային կոչուած «Նախըջուս»՝ իր հարուստ զարդաքանդակներուն համար: Անիի ամէնէն տպաւորիչ եւ ամէնէն աւելի ճաշակով քանդակազարդուած եկեղեցիներէն մէկն է ան, այսօր իսկ բաւարար չափով կանգուն՝ ամբողջական վերանորոգման կարենալ ենթարկուելու համար...: Կը պատկանի զմբէթակիր արահներու կերպարին. արեւելեան զոյգ որմնամոյթերը կը ծառային նաև իբրև պատ՝ ընդարձակ խորանին երկու կողմերը գտնուող աւանդատուններուն համար: Արտաքին կարգիծը քառանկիւնի է. ճակատներուն վրայ կը գանձէր երկուական փոքր որմնախորշեր: Շատ հարուստ ու ներդաշնակ ապարուրութիւն կը թողուն պատերու եւ թմբուկի զարգային որմնասիւնիկներն ու անոնց վրայ բարձրացող կոյր կամարաշարքերը. կամարամիջոցները մշակուած

են կենդանական եւ բուսական մոթիփնեւորով ճոխ քանդակներով: Շատ տպաւորիչ է նաև դմբէթը (ծածկը ներկայիս փլած է) իր բարձր թմբուկով:

Արեւմտեան բաց գաւիթը աւելի ուշ կառուցուած է, Թէ՛ տաճարին եւ թէ՛ գաւիթին ներքին պատերը զարդարուած են հարուստ որմնակարներով, որոնք կը ներկայացնեն տեսարաններ՝ Աւետարանէն եւ Հայ Եկեղեցւոյ պատմութենէն: Բայց որմնակարներու արտակարգ ճարտութիւնն ու յունարէն եւ վրացերէն արձանապրութիւնները մտածել կու տան Յ. Օրբելիին, որ Տիգրան Հոննցի Սր. Գրիգոր Լուսաւորիչը քաղկեդոնական (բնականապէս) դաւանանքի հայ եկեղեցի է ևղած: (\*) Պատերը կը կրեն նաև արձանազրութիւններ, ուր կը պանծացուի նուիրատուին անունը եւ կը յիշուին եկեղեցիին կտակած իր բազմաթիւ կայուածները:

Տիգրան Հոննցի նուիրատուութեամբ է դարձնալ, որ կառուցուած է կուսանաց վանքի եկեղեցին՝ Արուերանի կերճի լանջին: Վեցապսիտ եկեղեցի մըն է ան, որուն ներքին կառույցը արտայայտութիւն կը գտնէ արտաքին եզրագծին մէջ (վեցթերթ): Գմբէթի ծածկը հովհարածէ է: Որմնասիւնիկներ եւ կոյր կամարաշարքեր (քանդակազարդ) կը զարդարեն ապսիտներու արտաքին դաւանաձեւ ծաւալները: Արեւմտակողմը կառուցուած է ուղղանկիւն նախասրահ մը:

1217-ին կառուցուած Աստուածամօր կամ Հոռոմ տիրուիի եկեղեցին եղած է երկյարկ (ա.յարկ՝ դամբարան, բ.յարկ՝ սղօթարան):

Անիի վրացական եկեղեցին կառուցուած ըլլալ կը թուի ժ.Գ. դարու կէսէն ետք. որմերուն վրայ կը գտնենք ժ.Գ. դարու վերջերուն եւ ժ.Գ. դարու սկիզբներուն պատկանող վրացերէն արձանապրութիւններ: Թաղակապ սրահ մըն է եղած ան՝ միանաւ պապիլիոնները յիշուցընող:

(\*) Տե՛ս՝ այս մասին Վ. Յարութիւնեան, - լԱՍԻ Բազմաթ - էջ՝ 64-65:



Իրրեւ քաղաքացիական բարձր ճարտարագետութեան նմոշներ՝ մատենագրութեան մէջ կը յիշատակուին Պարոնի, Սարգիսի, Ապուլիարիպի եւ Վարդապետի պալատները: Մառի եւ Թորամանեանի օրերուն՝ Պարոնի կիսափուշ պալատը տակաւին լուսապէս ուսումնասիրելի էր. Թորամանեան կատարած է անոր յատակագծային չափազրութիւնները եւ ճակատի վերակազմութիւնը: Ծէնքը քաղաքի կողմէն երկայրկ է, իսկ կէրնի կողմէն՝ եռայարկ: Անոր յատակագիծը յարմարեցրած է վայրի աշխարհադրական անկանոնութիւններուն: Եստ տպաւորիչ եղան է մուտքը՝ քաղաքի կողմէն: Կամարապատ դրան շուրջի ուղղանկիւն տարածութիւնը ծածկուած է նրեսպատման աստղածեւ-քանդակազարդ թարերով. նոյն ճակտին վրայ՝ երկրորդ յարկը ունի լայն պատուհան մը, սրտածեւ բարաւորով, ամբողջութիւնը շրջապատուած է ճատրակածեւ երեսպատուած քանակիւն տարածութեամբ մը: Պարոնի պալատը ընդհանրապէս կը նկատուի Ջաբրեաններու բնակավայրը (տես՝ Վ. Յարութիւնեան, - «Անի քաղաքը» - էջ՝ 72). ոմանք անոր կու տան նաև Հասարակական շէնքի գեթ (Թոքաբակի):


1905-ի պեղումները յայտնաբերած են նաև ԺԻ-ԺԳ. դարերէն մնացած պալատական ալ շէնքի մը՝ «Սարգիսի պալատի» մնացորդները: Թորամանեանի կատարած վերակազմութեան համաձայն՝ անոր շքամուտքը բաւական նման է եղած վերը նկարագրուած Պարոնի պալատի մուտքին:

Վերոյիշեալ միւս երկու պալատներուն մասին (Ապուլիարիպի ճաւանաբար ԺԱ. դարուն իսկ կառուցուած) ունինք միայն մատենագրական տեղեկութիւններ: Արձանագրութիւնները կը յիշատակեն նաև Անեցի մեծաւարուստ Սահմադիմի 1261-1276 թուականներուն Մրէնի մէջ (Անիի մօտ) կառուցել տուած «չարպաս»ը (մինասուն կամ պալատ), չրջապատուած «դրախտանման» ալիքներով:

1908-ին, Առաքելոց եկեղեցիին մօտ-բը երևան հանուեցան Անիի հիւրանոցի (ըստ Թորամանեանի՝ մեծ վաճառատան մը) մնացորդները: Զափազրութիւններն ու շքամուտքի վերակազմութիւնը կատարած է Վարպետը: Ըստ երևոյթիս՝ «հիւրանոց»-ը ամբողջութիւնն է միւսնոյն դարուն (ԺԳ. դար՝ ամենայն հասանականութեամբ) կառուցուած երկու շէնքերու, - հիւսիս-արեւելեան կամ «աֆիսքաներու» շէնքը եւ հարաւ-արեւմտեան կամ «օձերու եւ առիւծներու» շէնքը (անուանումները Ն. Մառինն են՝ ըստ գտնուած քանդակներուն): Ոչ-պալատական շէնքի մը համար՝ տարօրինակ կերպով ճոխ են եղած քանդակազարդումները, ի մասնաւորի՝ շքամուտքերը (արձանագրութեան մը համաձայն - 1270 տարեթիւով - հիւրանոցը պատկանած է երկու մեծաւարուստ բարերար եղբայրներու՝ Ուքան Կարիմատին եւ Պապան Գուրիտին անուններով: Անուններու օտարացումը, ըստ երևոյթիս, գէթ ազնուականական եւ մեծաւարուստ դասակարգերուն մօտ՝ բաւական ընթացիկ երևոյթ սկսեր էր դառնալ ԺԳ. դարուն): Հիւրանոցի իւրաքանչիւր շէնքը ունեցած է երկար ու բաց սրահ մը (բակ մը), որուն երկու կողմերը դասաւորուած են Գ-ական սենեակներ:

Գ. Միգնադրեան Հայաստանի կայսրանստներն ու կամուրջները.- Թորադիքն ու տեղեկութիւնները կ'առնենք ճարտ. Վ. Յարութիւնեանի համանուն զրգէն (Երևան, 1960), ինչպէս նաև Կ. Յովհաննիսեանի «ԺԻ-ԺԹ. դարերի Հայկական ճարտարագետութիւնը» աշխատասիրութենէն (Ակնարկ Հայ ճարտ. պատմութիւն - էջ՝ 213-247):

Կարաւանատուն, իջիւան, հոգեւան, օթիւան, պանդոկ կամ փնդուկ, հիւրանոց, խանապար, եւայլն անուններով կոչուած են քաղաքներու մէջ կամ, օտաւել կէս, առետրական ճանապարհներու երկայնքին կառուցուած ա'յն շէնքերը, ուր օտար ճանապարհորդներ, վաճառականներ, կարուաններ ժամանակաւոր բնակավայր եւ սնունդ կը գտնէին:



Սելիմի կարանատունը

(Լուսանկար՝ Ջարտ. Վ. Խաչատրյանի)



Ագարակաձորի կամուրջը

(Լուսանկար՝ Ջարտ. Վ. Խաչատրյանի)

Անոնք կը կառուցուէին կա՛մ պետական ծախսով, կամ իշխաններու եւ մեծաւարուտներու նուիրատուութեամբ:

«Միջնադարեան Հայաստանի կարաւանատները կարելի է բաժանել երկու տիպի, — կը գրէ Վ. Յարութիւնեանը, — սիւղաքանիք եւ բազմադասիլիք. իրենց հերթին միադասիլիք կարաւանատները կառուցուած էին միանաւ եւ եռանաւ, իսկ բազմադասիլիք կարաւանատները — բազում եւ ասանց բակի: ... Հայաստանում ամենից տարածուածը միադասիլիքեանաւ տիպն էր, ... Ուղղակիւն, ընդարձակ դասիլիքները (ներքին չափերը հասնում են մինչեւ 36 մ. երկարութեան եւ 16 մ. լայնութեան) երկայնական ուղղութեամբ երկու շարք դասաւորուած կարն յեմարամներ կամ մոյրերի միջոցով բաժանուած են միջին լայն եւ կազմի՝ ստելի եւղ մաւերի: ... Մուտքերը սովորաբար արւում էին ճակատային (եեղ) սրտի կողմից: Լուսաւորութեան համար ... քաղի կատարին, միւսանցից որոշ հեռաւորութեան վրայ քողովում էին լուսանցք-երդիկներ, որոնք միեւնոյն ժամանակ ծառայում էին դասիլիքի օդափոխութեան նպատակին: ... Միադասիլիք-եռանաւ կարաւանատների ծագման հարցը ... առաջին հայեացքից կապուած է բազիլիկ (պաղիլիք) կառուցուածքների հետ:» (Տես՝ յիշուած աշխատութիւնը, էջ՝ 13):

Մեզի հասած միջնադարեան կարաւանատներէն ամենալաւ պահպանուածներն են Սելիմի (կամ Սելիմայ) միադասիլիք-եռանաւ կարաւանատները, սըրբատաշ քարերով կառուցուած 1332-ին՝ Միւսնեաց իշխան Ջեռար Օրբէկեանի կողմէ, եւ Մուրմալու գաւառի Ջօր գիւղի բաղձադասիլիք կարաւանատները: Կիսաքանդ վիճակով մեզի հասած են Ջրափ գիւղի միադասիլիք-եռանաւ կառուցուածքը եւ միանաւ որահներու տիպին պատկանող Լեռնանցքի (Աղքենդ գիւղ) կարաւանատները: Թալիշի, Աղուսաձորի, Արարիկեան գիւղի եւ Թալիճի կարաւանատները (վերջին երկուքը՝ բազմադասիլիք եւ կեդրոնական բակի դրու-

թեամբ) քանդուած վիճակ ունին: Բոլորն ալ ժ.Պ.—ժ.Ի. դարերու շինութիւններ են:

Ճամբաներու երկայնքին կառուցուած ճանապարհերը, անշուշտ պաշտպանողական նկատումներու բերումով, ունեցած են հաստ պատեր, ընդհանրապէս մէկ մուտք միայն, եւ յաճախ՝ ամրոցներուն նման կիսակլոր աշտարակներ:

ժ.Բ.—ժ.Գ. դարերէն մնացած բոլոր կամուրջները քարաշէն են եւ ունին մէկ թոխը (գէթ անոնք, որոնք կը գտնուին Մայիսական Հայաստանի սահմաններէն ներս եւ ուսումնասիրուած են): Հազուադէպ են երկու կամ աւելի մեծ թիւով թոխքներ ունեցող կամուրջները (Ջրափի կամուրջը ունի երկու թոխք, իսկ Ալինի գիւղին մօտ՝ ժ.Պ. դարէն մնացած կամուրջը ունի չորս թոխք): Ճարտարակերպական մեւերը եւ ճակատային հարթութիւններու մշակումը բուական պարզ են (ընդհանրապէս՝ սրբատաշ քարեր), բայց ձեւերու կատարելութիւնը եւ շրջակայ բնական դիրքին պատշաճեցումը բացառիկ վարպետութիւն կը յայտնաբերեն:

Յարգ կանգուն են եւ կը գործածուին՝ Դեբեա գետակի վրայ կառուցուած Սամանիճի հուշակար կամուրջը (Ալուսովկրտի քաղաք), կառուցուած ժ.Բ. դարուն, եւ որուն 18 մեթրնոց կամարային թոխքին վրայն ամենայն ապահովութեամբ կ'երթեւեկեն 8 թոն ծանրութեամբ ինքնաշարժներ, Եաղտանի կամուրջը (ժ.Ա.—ժ.Պ. դարեր), Որոտան գետին վրայ՝ Եայնի կամուրջը (ժ.Պ. դար), Եասին գիւղի փոքր կամուրջը, եւ այլն: Այլ, երբեմն նոյնքան եւ աւելի մեծ ու կարեւոր եղած կամուրջներ, ներկայիս կիսաւեր վիճակի մէջ են (Ջորագետի վրայ՝ ժ.Բ.—ժ.Պ. դարերու Լօռի քերդի կամուրջը, Արեւի գիւղի կամուրջը, եւ այլն): Իսկ շարք մը ուրիշ կամուրջներու ջրափնեայ խելերու մնացորդները միայն հասած են մեզի:

Հ. Տ.

(Շարունակելի)



# « Մ Ա Ր Ա Ռ Ո Ն »

( Վ Է Պ )

( Հեղինակ՝ ԱՐՏԱՇԵՍ ԳԱՍՆԹԱՐԵԱՆ )

Երևան - 1968

Վէպը, որ կը բացուի, ՎՄԻ կից ցաւ ու գազաբոց զլուսօտով, ունի նաեւ մուտք մը, երկու կէ, որ հեղինակը կ'ընդգծէ, թէ ժամանակը երբեք չի կրնար բուժել մարդկային հոգիի դժբաժնի վերաբերմամբ: Վերադառնալով մի քանի քիչ, մի քանի, դիմացի, սակայն առաջին շէջով պատմութիւնն էսկի պատճառով կը

պակտի կարեւորութիւնը այդ անձնաւորութիւնները տեսնելու զխաւար անձնաւորութիւնն տարբեր անձնաւորութեանց հետ յարաբերութեան ընթացքին, իրենց յատուկ կենսաբան պայմաններուն մէջ եւ կամ, այդ պայմանները կը ներկայացունին պատմութեամբ, ինչ որ կը նուազեցնէ տեսչու զէպին վերականգնութիւնը: Մինչև անգամ կը սպասուայ վտանգել ընթացքներովն զբոլոր, զայն վերածելով երկար մեծախառնութեան մը:

Բարեբախտաբար, Արտաշէս Գալանթարեան յաշնդած է՝ պոքրածնելով ետ ու առաջ պատմութի թիւքեր մը, փշթել մտքի նախադասութիւնը պատմութիւն եւ հետաքրքրութիւնը լարող սովորութեան, սպասումներ, շեղումներ մտցնել վերականգնողական կառոյցին մէջ, որով՝ զերբեք կը կարողանայ զբոլոր մէջ կը շարունակէ:

Ս. որովհետեւ մարդկայինը հզօր կերպով գրուած է զբոլոր ամբողջութեան մէջ, ինչպէս նաեւ իրաքանչիւր էջի վրայ, վերջաւորութեան, ընթացքով ներդրումներ կը նայի զբանական տեսնելիւնն ունեցած անոր թերութեանց, եւ կը պահէ միայն տպաւորութիւնը (քաղցր, հոգեպարար տպաւորութիւնը) անկեղծ գիրք մը կարդացած ըլլալու: Հեղինակը եթէ լուսօտի պահած է կարգ մը իրողութեանց վերաբերմամբ, այդ զեղջուրը կարելի է դիտարկ վերականգնել երեւակայութեամբ եւ լրացնել զէպը, ընկարծակել մինչև անգամ:

Վէպի յաշնդական զլուսնները գրուած են անհրաժեշտ կերպով համարութեամբ, որ եթէ փորձենք փնտրել խորհրդանշական զբանականութիւն մը, եւ ուղիք Արտաշէս անձնաւոր

բուժիչներ ընդլայնել, իր մէջ տեսնել բազմաթիւ Արտակներու համադրութիւն մը, ամբողջ ազդ մը, կարելի է առարկել, թէ մտքին զգարք տալով է, որ նման ընդլայնում մը կը կատարուի, Կարելի է նաև, եթէ մէկ անհատի պատահած դէպքերու եւ իրողութեանց շարան մը ներկայացուի վէպը, ցոյց տալ թառեր, առդեր, որոնք կարելի կը դարձնեն խորհրդանշական ընդլայնում մը վէպին: Կարծե չկայ սակայն նման փնտրութեանը: Կայ մարդ մը՝ իր իտէալով, իրեն համար նախնական եղող սքրութիւններով: Եւ կայ իր ապրումն կենսաբ, շրջապատը, պայմանները, որոնց տակ ճգնուած է, որոնց մէջ կ'ապրի աշխատ՝ ինչպէս այլ մարդիկ, զի մը ամէն կողմ, զի մը ամէն սեղ: Կայ կենսաբ, որ զի մը ամէն կողմ, զի մը ամէն սեղ համարութիւնն է իտէալականին եւ ոչ-իտէալականին, իտէալականին համեմատու ձգտումներու եւ այլ պատրուակին տակ՝ զիրարդաշտ շահագործումներու:

Իբրքը, աշտեղ, կը կոչուի Արտակ Լեւոնան:

Նիթը՝ պատմութիւնն է համալսարանական ուսանողի մը (լրագրական ճիւղ), որ իր աւարտական տարուայ ընթացքին եւ հաջի հետացած ուսանողական նստարաններէն, ուր իտէալները աշխուհ շատ եւ շատ կը ջաղկին, կը դարձուի իրական կենսաբ գարգարութիւն: Եթէ վէպը առնեք իրեն պատմութիւն միայն, այս բախումին, ստացած հարուածներուն, կորուստն եւ վերագոռուած յոյներուն պատմութիւնն է:

Քաղաքի ամենակարևոր թերթին, կուսակցական թերթի խմբագրութեան եկած կեղծ ստորագրութեամբ նամակ մը կը նկարագրէ շինարարական վարչութեան պետ Վեդիբեանի մը շահատակութիւնները, բանուորներու սոճիկներէն կատարած զեղչումները, (որ ինք կ'իւրացնէ անուշտ) վաղուց հետացած կամ մեռած բանուորներու տնուան դիմաց արձանագրուած վճարումները, որոնք դարձեալ կը մտնեն իր գրպանը, զորս զաւրով պետութեան անուկէն:

Ռմբադրուպետը՝ Սարեան, մաքրամաքուր զարգացողական մարդ մըն է, որ միտմամբնակ Արտակի համալսարանի դաստիարակ է: Անոր ցոյցմունքով Արտակ Լեւոնան կ'աջցելէ յիշատակուած շինարարական կեդրոնը եւ կը փորձէ փնտրել մը կատարել, բանուորութիւնը հարկաւորելով:

Բանուորները կը խուսափին, չեն ուզեր խօսիլ, զգալի է վախը՝

~ Ի՞նչ էք ուզում, է՛: Ձե՛ք տեսնում, որ աշխատում ենք: Ինչի՞ էք ուզում գործից կտրել, առանց այդ էլ կորոզները քիչ չեն: Բան անէք հարցնելու: Վեդիբեանին հարցրէք: Ետեղ խաղիմը ձա է:

Երկուստարը, գեռ ուսանող լրագրողը, տարածե իր զարգացողական դաստիարակութեանն եւ մտնողութեանն, զիմացինը կ'անուանէ՝ «վախկորո», «տառաջ»:

Պատշաճ բանուորը կը պատասխանէ. «Գո ստիճիմն ես էլ էի այդպէս յօռում: Յետոյ դու էլ էպէտ կը խիտմանա, եթէ վեդիբեանի մտն պետ ունենա, ճայնդ էլ կը բարակամայ, մէրդ էլ իրն կը ծախ, դու էլ կը ոկտն յօռելու մտմանակ չոքս կողմն Յայնթ»: (է՞ր՝ 88)

. . . . .

«Կա՛ խխպի բան, դէ՛ մ չեմ, եպիս փոքրացի է, չեմ առում, է՛, փոքր է, առում եմ՝ փոքրացի է, փոքրացի կ՛մ . . . . . ես գիտն ո՛վ: Մտնալդ էլ չի անցնի եթէ ես չտանմ: Երեխաներս մանրակենցանքս, քաղցր ցեղերս, անց որ իրենց մէրձ է առում»:

Երեխաները հացէն կտրելու մտաւխումիւմբ բանուորութիւնը լուս կը տանի Վեդիբեանի դաստիարակութեանը, վախալով զորոն հանուկէն:

Իսկ Վեդիբեան, լրագրող կրիտատարը իր մօտ կը կանչէ, կը յիշեցնէ, թէ ծանօթ է ինք զաղկոմի գարտուղար Բաղանեանին, որ Լեւոնանին օգտակար եղած է, կը հարցնէ շինարարական կեդրոն զալուն պատճառը: կը տեղեկանայ կեղծ ստորագրութեամբ նամակի պարունակութեան եւ յուշումն կը պահանջէ Լեւոնանէն, որ շարունակէ քննութիւնը: կը կանչէ մինչեւ անգամ իր հայրուպարն եւ կը պահանջէ, որ սրտի նախորդ ամառայ աշխատավարձի ցուցակները, Հայրուպարն, բողկ մը վարանիչ ետք, կ'ենթարկուի: Վեդիբեան, այդ ցուցակները կ'երկարէ Լեւոնանին, «Տարբէ, տարբէ, հանգիստ ստուգեցէ տնօրէն: Հոգեբան մարդու մտնցում է: Լեւոնան կը մերժէ: Վեդիբեան կը կոխէ Թուղթերը Լեւոնանի բանկոմի ներսի գրպանը: Լեւոնան յուշումն, զերթ վերաւորումն, կը անէ Թղթմարքը եւ կը նետէ վեդիբեանի սեղանին, համազուած՝ թէ ինք զօն է անտարազիք նամակէն, թէ՛ Վեդիբեան մաքուր

ժաբզ է: Քիչ ետք, զուրք՝ զբաժանակը  
 չանտ ասան, Արտակ Լեւոնեան կը նկատէ, թէ  
 Վեպրեանի իր զրպանը կոխած թուղթերու կա-  
 պոցին մէկ էջ թուղթ մնացած է զբաժանը. ցանկ  
 մըն է բանուորներու անուններու եւ անոնց վճ-  
 ճարուած ոսկիներու: Ներքին ժողով մը, ժաբէ  
 յանկնալ չանկատութիւն մը ձեռք բերելու վա-  
 րքը զինք կ'առաջնորդէ այդ անուններուն ահ-  
 բերը փնտրելու զազափարին: Գունեկ գաւա հար-  
 ցընելով, անշնկութիւն փնտրելով՝ Լեւոնեան  
 կը չանկ անուններու տէրերուն, որոնցմէ մէ-  
 կը մնած է երկու մտի տաւլ (եւ անշուշտ  
 մունն ետք այ իր անուն զիմաց արժանագը-  
 ւած է վճարում ոսկիէի, որ Վեպրեանի զրպա-  
 նը մտած է անկատման): Աւելի. այս բանու-  
 րը, յիմարարական աշխատանքին զուրք եկած է  
 մէկ տարի առաջ, չափը մէկ մտի աշխատելէ  
 ետք... Այս յայտնութիւնն ետք, վնշը ար-  
 զորէն կը թաւայի անխուսափելի հակազորումի  
 ճանապարհով: Գաղափարական Լեւոնեան, իր  
 ստանդը, իր ընկերները, ժողովուրդին մեծ  
 ժաւը, ճանաւանդ անտէր, արտէք համեա զա-  
 սակարգին կը պակասին, աշխատաւորներ են,  
 կոնակ շուկին, զիբէր շին հասած, բաշտին ալ  
 սեղին կը համարեն Լեւոնեանին գրած յօդուածը  
 Վեպրեանի մասին, որով՝ կը մերկացունէ այս  
 վերջինն շահասակութիւնները: Յօդուածը կը  
 ուղարկ Լեւոնեանի զառաջտինն, Սարեանի իջմ-  
 արարած թերթին մէջ:

Բնականաբար Վեպրեան ձեռքբեր ծայած չի  
 մնար:

Արտակ Լեւոնեանի ասանը այցելելէ աւ զայն  
 սիրաշունչի կամ նուէրով մը կուտակի փորձելէ  
 եւ մերթուէր հանդիպելէն ետք, կ'անցնի ուսու-  
 նայիցներու, եւ կը զործարգէ գանձեք:

Գաղափարային կոմիտէի զարտադար թաղան-  
 անի միջոցով, որ իր բարեկամն է, եւ որուն  
 հետ շահակցական կապեր զայսութիւն անին, կը  
 թաղող Երջանային կոմիտէի մէջ իր անեցած  
 պաշտօնէն հեռացնել տալ Լեւոնեանը, ժաբզա-  
 կան փառասունին մասնակցելու իրաւունքէն, ինչ-  
 պէս նաեւ այդ բոլորին կապուած հարցաւորու-  
 ներէն աւ ոսկիէն զբիւլի գային: Այս կարգադրու-  
 թիւնները, պաշտօնէն հեռացումը կը կատար-  
 ւին աշպիտի մեծերով, որ երկուստեայէս ալ  
 մէկ կողմ անին Լեւոնեանի գրած յօդուածին  
 հետ: Հիմ աստուած են կուտակցական ղեկավար-  
 ներուն կողմէ, Լեւոնեանի զործէ ուշացումներ-

րուն իրբեւ արգելեց: Այդ ուշացումները եզած  
 են ժաւանար արտաուստիտը ժաբզական տո-  
 շանցէին պատրաստուելու համար. հիմա, առ-  
 կայն, այդ ուշացումները կը զարժուին Արտակի  
 գէժ իրբեւ աշխատանքէ թերացումներու:

Քիչ կը մնայ որ Լեւոնեանի պաշտպան  
 Սարեանը անգամ հաստատայ, թէ իրօք Արտակ  
 Լեւոնեան աշխատանքի անբաւարարութեան պատ-  
 ճառա է որ զործէ հանուած է: Սակայն, վեր-  
 չին առիթ մը տալու վճակակոթեամբ, կը մի-  
 շամտէ Գաղափարային կոմիտէին աւելի բարձր ե-  
 զող կուտակցական ղեկավարութեան մաս, ինչպ-  
 րեւով որ տանց վերապահութեան շնն Արտակ  
 Լեւոնեանը: Մանուկ, Արտակի ընկերը, իրա-  
 ւարանական համալուարանի անտանդ, այդ ղեկ-  
 արու թաւայումի ընթացին, ընդզած Լեւոն-  
 եանի հանգչող ցոյց արուած վերաբերմունքէն,  
 իր կողմէ փնտրուողներ կը կատարէ եւ կը նստ-  
 տատէ, զբաւուր վկայութիւն մըն ալ կ'որդելով,  
 թէ Վեպրեան, իր կնոջ միջոցով, Բաղանեանին  
 նուիրած է աւել մը, (Բաղանեանի կնոջ անու-  
 նին արձանագրել տալով զայն): Այս իրողու-  
 թեան երեւած զայլ բաւարար կը դառնայ իր-  
 տակցական զատառիտանաւորներուն համար, որ-  
 պէտք անզրադանան, թէ Լեւոնեանի գէժ կա-  
 տարուածը զաւ է, վերժատութիւն եւ մեղա-  
 զբանքները անեղի են: Կ'որդուէր Լեւոնեանը  
 պահել իր գործին մէջ եւ խառօրէն պատանել Բա-  
 զանեանը, մինչեւ անգամ զբէական յանցանքով  
 հետապնդել Վեպրեանը:

Արտակ Լեւոնեան կը վերահաստատուի ժաբ-  
 զական առզանցէին մասնակցելու իր իրաւունքին  
 մէջ եւ կը մեկնի Մոսկուա աւ կը ժաւանկել  
 փառասունին, համոզուած նաեւ, թէ վերադար-  
 մին իրեն կը սպասէ աւելի լաւ զործ մը, ցանկ  
 որ Սարեանի ինչպանքով, զինք արաժարած են  
 թերթի խմբագրութեան, աշխտող զործելու հա-  
 մար:

Գործէն վերադարձին, զարժանքով կը տես-  
 ան, թէ Վեպրեանի գէժ քաջուած զբէական  
 յանցանքի արձատարութիւնը մէկ կողմ զբուած  
 է եւ զաւարարուած են զայն յիմարարական գոր-  
 ծէն հանելով, Բաղանեանին ալ միայն զիտողու-  
 թիւն կատարուած է: Ոչ միայն այդ, այլ նաեւ,  
 Վեպրեանը յիմարարական այդ բաժնէն արժակ-  
 ւելուն յաջորդ օրն իսկ, նշահակցուած է յիմարա-  
 բական ալ մէկ միաւորի վարչութեան պետ:  
 Իսկ թերթի մէջ, ուր ինք յօդուած էր գրած Վե-

զերեանի վերաբերմամբ, ոչ մէկ ակնարկ կայ այլևս այդ մասին այն թերթին մէջ, որուն խմբագիրը Սարեանն է, տերտերք ու զազափառական Սարեանը...

Կեանքը, շրջապատը, պայմանները... վերին չարկադրանքները...

Գաղափարական Սարեաններով չի վերջանար չարքը, կուն ուրիշներ, զիրենով եւ իրաւունքով աւելի քարճար, լաւ Սարեաններն ու Լեւոնեանները: Գան Ծան Բաներ, զորս շնորհի պիտի Ե առնել... շարժուի շատ արիշ հարցեր կարեւոր լան լանջ: Ստիպուած եւ զիջի այս կամ այն շարքին մէջ: Գաղափար եւ խմբագիր Սարեան, վերին շրջաններու եւ որոշումներու զիմաց՝ կըստ է, վերին մարմինները համահարած են վերջերեաններն ու թաղանթները: Սարեան երկարուած է: Արտակ Լեւոնեան ինքզինք տեսնողուն կը զգայ իր զատաբար զիմաց, կը զգայ՝ թէ ի՞նչ ընդունի ծախսէս Սարեանի կողմէ իրեն առաջարկուած զործը, թերթին խմբագրական կազմին մաս կազմելու, Սարեան շատ նեղ կացութեան մէջ պիտի ըլլայ, ինչպէս շատ նեղ կացութեան մէջ է արդէն Արտակ Լեւոնեանի հետ առեւտրութեան ընթացքին, զաւայտմ տեղի առլու տնտեսական-իմանքը բարատրած առնն:

Արտակ Լեւոնեան յանկարծ կ'որոշէ, երկուս որ առաջ իրեն կատարուած այլ առաջարկ մը ընդունելու եւ մեկնել Եւրոպայի, իբրևս ռուսոյն թղթակից:

Սարեան վերին ընդգրկում մը կ'ունենայ, կը փորձէ պահել Լեւոնեանը թերթի գործին մէջ, սակայն, անցնելով իսկոյն, թէ ըլլա, ինն մի փոքր ժամանակ է պիտի միայն, մի փոքր: Յետոյ մնալ կը խոսեն: Իս ցրանց կ'աւանտ ար...: Արտակ եւ Նանար նարպակ զոյգը կը մեկնի Եւրոպայի: Փառտորէն պարտուած: Փամանակաւորակն սակայն:

Գիրքը կ'աւարտի ըլլալով անձնադատար երբք վերնագիրը կրող հասուածով մը, որուն մէջ կը նկատարուի մարդական փառաստն մը եւ քառասուն երկու զիմ. Սարաթոնի վազը մը, վազեր սկզբնաւորութիւնը, եւ ամէն մէկը մարդիկներէն կը պատրաստուի յաղթանակի զափնարկին տիրանալու: Բնականաբար բոլոր մարդիկները չեն որ առաջնութեան կը հասնին, շատեր կ'իջան կէս ճամբան:

Արտաշէս Գալանթարեան իր գիրքը կ'աւարտէ հետեւեալ հասուածով:

«Ու թէն չգիտեմ՝ կը շահնմ, թէ ոչ, բայց գիտեմ, որ արդիւնքի համար երբեք չիմ տըրտընայաւ: Զեմ արմնայ, ինչ էլ որ լինի: Ռազմիկն իմ ողջ ունեցուածքը բոլորի վրայ եմ դնել, ամէն մէկի վրայ աւանդին առաձեռն: Իս ցրանցից իրաւունքիս հետ եմ լինելու, իրաւունքիս սէր: Իս գիտեմ, թէ ինչ քառ է Մարտընը: Գա արխարիի ամենամեծ երբք է, բայց բոլորն էլ պիտի մասնակցում են այդ երբքին: Իս թէն բոլորն էլ սկսում են համարտար, թերեւ վազով, սպիտակ շորով, հարատրած իրենց յաղթանակին, բայց յաղթում են էլիքը: Իսկ յամառն ոչ մէկ էլ չի յաղթում: Այսօր կը յաղթի՝ ցրանցից շնորհով մէկը, իմ Երազմերից արեւ մէկը կ'անցնի՝ վերջին պատուոյ շրջանը: Չգիտեմ: Բայց իս ցրանց հետ եմ: Նըքամա՛ եւ եմ: Իս վերադարձում, մարտիկներից վազ դուրս եկածը, եւ յաւանտու, վերջին ժայլուն անաղք, ճա, որ բնիկաւ աւարտի մտ, եւ ճա, որ դեռ շարունակում է վազել: Վազում է բնու արդէն ոչ սպիտակ շորով, ոչ ճալիկն շարժով ու թերեւ, բայց վազում է...»:

Գալանթարեանի այս վեպը ունի երկու ասորեր զատակարգներու պատկանող անձնաւորութիւններու շարան մը: Կան անոնք, որոնք համեստ աշխատարարներն են երկրին, աղքէ պարզագոյն զաւակները, որոնցմէ ամէն մէկը, ըլլա՛ն ան պատ շարող բանուար մը, բնուակից Գապարը, բնուակից Ազատը կամ Մարկոսը՝ իր մտքին մէջ երող մը ունի, եւ երազին հասնի թէ շահնի իր կեանքի ընթացքին իր ստեղծան բնուցրած պարտականութիւնը լրիւ կատարելու արժանաւորութիւնը ունի: Այս պարզ մարդիկը, զորք բոլորն են ընկերան վրայ կը երկայանան տեսնանալու մարդկային ապրումներու զանձարան եղող հողով մը: Իսկին ոչ մէկ յենարան, ոչ մէկ աղքէիկ պոշտական անձնաւորութիւն, ունին տաք սիրտ մը եւ տաք սրտ տէր համանձան համեստ անձնաւորութիւններու զարգուրանքը: Եւ իրումը, եզրայրութիւնը, աղքէ պարտութիւնը՝ իբրևս միակ միջիթարող, խանդավառող, ողբարող ու՛ իրենց համար: Կը նմանին անոնք տեսակ մը ազատ արձագրութեան, առանց սենեակու ազատ արձագրութեան կազմակերպական կառոյցը կամ Երազմարտութիւնները: Ինքնաբերաբար կը զանն իբր, կը հասնին ի-

բարւա, կը մխիթարեն իրար, կը զօժանդակեն իրարու համար. կու տան իրենց վերջին կտակը եթէ պէտք ըլլայ, որպէսզի մարդը, որ իր զեմախինն է՝ նուազ սաստապէ, աւելի ուրախանայ, աւելի շուտ հասնի իր կրօնին: Այս մարդիկը կը կրօնին սակայն կեանքի դժգոհ պայմաններուն մէջ, իրենց այնտեսնին ու քրտինքին շահադոյնով կը սեւեւեն այնպիսի՝ արարածներու կողմէ, որոնք իրեն մարդ՝ ընկերութեան մաս կազմելու իրաւունքը չունին եւ որոնք, սակայն, բարձրագոյն են, բարեկամութիւններու միջոցով, զիկամքը զերբերու եւ այլ զերբերին կը հրաժարեն, կը վստահեն, որոնք կը հրաւիրեն, կը կաշառեն, եւ կաշառք կը ստանան, սեփական տեսնական բարօրութիւնը ապահովելու, անցընելու համար:

Գալանթարեան, իր զբօն զանազան գլխաւորներու փոքր հատուածներուն մէջ ունի գրական աղբուր էջեր, անմատչելիներու հոգեբանական բնական արտաբերումներ, եւ ներառեալ հարձեղում մէջ թափուած ապրումներու արեւտով արտայայտութեամբ կ'ըմբռնենա զբանական արուեստի յաջողած պատմիկներ: Գրեալներու, սակայն, իր վերականգնողական զբաղումը կատարած է աշխատ, որ ի վիճակի չէ եղած, իւր ինչ կատարած շրջանակը աւելի հիմնադրուած ձեւով ներկայացնելու: Որով ընթացանունութեան աստի, յաճախ կարելի է ստանալ տպագրութեանը կիսատ մնացած նկարագրութիւններու, հարկ հարկերի ձեւով ներկայացուած ապրումներու, որոնք չեն լսողութիւնը մարդը ջոյնն Արտակ Լեւոնեանի անմատչելիութեան հետ, զամ իրարու հետ, եւ չեն առաջնորդը ամբողջական կատարումի մը տպագրութիւնը:

Առնենք, որինսկի համար, Արտակ Լեւոնեանի ընկերով, փաստարեւելան համալսարանի ուսանող Մանուկի եւ անոր հօր անմատչելիութիւնները, այս երկուքի փոխադարձ յարաբերութիւնները, զստան գոտաբանայ հայրը եւ մարդկային ազդեցութիւնով հարուստ գաւազը՝ Մանուկի որոնք իրար չեն հասկնար. հայրը քաջակամ է զերթէ զբոն, գոյութիւն ունի միայն Վանուկի ներքին տառապանքը, իր հայրը սիրելի չկարենալուն, անոր զստանութեան պատճառաւ իր զուգորդանքը հօր հանդէպ արտայայտել չկարենալու ապրումը: կայ Մանուկի մէջ մարդկային զգացումներու, արժանիքներու բարձր

զնահատանքն ու փնտառուքը, այս պատճառով ու օգնութեան կը հասնի իր ընկերով՝ Արտակ Լեւոնեանին. իր անմատչելիութիւնը, սակայն, չի բխիր իր ընտանեկան միջավայրի եւ իր բնութեան կամ վերականգնողական պատկերացումէն, այլ կ'արժանազրուի չնդինակ Արտակու Գալանթարեանի կողմէ:

Առնենք տանկահայ Գեորգոս պապը, անոր մայրը, եւ աղիկը՝ Նուարդը, որոնց մասին ամբողջ գլուխ մը կայ զբոն մէջ՝ ՎԱՅՂ գարմախալի ընտանիքը վերադարձ: Գեորգոս հայրիկի նկարագրութիւնը յուզիչ է, սակայն համարելի չէ:

Վերադարձան արուեստի կամ արեւտար թերացումները, որոնց կարելի է հանդիպել զբոն մէջ, չեն նուազեցնել Գալանթարեանի զբոն հիմնական արժէքը, որ կը կայանայ մարդկային ապրումներու անկեղծ, պարզագոյն ձեւով, առանց ճոռոտարանութեան, ներկայացուելուն մէջ:

Նրկար արքաներ, Հայտատանէն եկող վերջեր, սեւեւին պարտադրական պարունակութիւն եւ ձեւ, որոնց հետեւանքով անոնք, ընդհանրապէս, ծաւալ սեւեւին միայն՝ առանց որակի: Վերջին տանաճանկի ընթացքին, զրոյններու յոր սերունդ մը, փոփոխուած, բարելաւուած նոր պայմաններու մէջ, մուտք կը գործէ գրական ստեղծագործութեան արուեստի սահմաններէն ներս, առաջով պատմութեանը, վերջեր կրեան, որոնք իրենց մէջ կը պարունակեն շատ աւելի բնականութիւն, արուեստ, քան աստը. նման զորք մըն է Գալանթարեանի Վարպարանքը, որուն եւ ոչ մէկ էջին համար կարելի է ըսել, թէ անկեղծօրէն զրուած չէ: Միայն թոնք, կեանքի վաղջին ձեւանակած երկտառարդ հեղինակին կողմէ, որ իր վաղքի ընթացքին շատ յաճախ ինկած է, վերադառնալով կանգնած ու շարունակած է վաղելի, տեսած է իր շուրջ ուրիշներու անկումը եւ յամարելն ոտքի կանգնելն ու վաղելի, ինչպէս իր ազգը, հազարամեակներու ընթացքին շարունակած է փախել, ինչպէս, վերադառնալով կանգնելով, իր սեփական, անվերջանալի Մարաթոնին վաղը շարունակած է, առանց բոլոր մը ինչ մտածելու, թէ այդ վաղը կրնայ վերջ չունենալ, կրնայ յաղթանակով շարունակել: Այն իրողութիւնն ինչ, որ վաղը չի մտածել պարտութեան մասին, զբաւական է յաղթանակին:

Բ. Փ.



# The Great



Mesrob  
Komidas  
Antranik  
Toramanian

Հեղինակ՝ ՀԵՐՄԻՆԷ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Պեյրուք, 1969

Յիսնամեայ սփիւռքը նոր էջ մը բացաւ Հայ ժողովուրդի մտաւորական սրունումներուն համար: Հայու բոլորովին նոր տիպար մը զարգացաւ անցնող յիսուն տարիներու ընթացքին:

Այս նորայայտ Հայը սահմանելու մտահոգութիւնը, ուղղակի կամ անուղղակի ներկայութեամբ, կ'իշխէ մեր այսօրուայ իմացական կեանքին մէջ: Եւ այս ուղղութեամբ, հետաքրքրական է ընթերցողին ուշադրութիւնը հրատարակվելի վերջերս Պէյրուքի մէջ լոյս տեսած, Տիգրան Լեւոնի վարժապետեանի «Ձորս մեծերը» գրքոյին վրայ: Գրքը զըրուած է անդիւրէն լեզուով եւ կը կրէ «The Great» իտալերէրը: Անգլիախօս, ու ընդհանրապէս օտարախօս սփիւռքահայի որ համար զըրուած այս յօդուածաւարքը՝ Մեսրոպ Մաշտոցի, Կոմիտասի, Թորամանեանի եւ Անդրանիկի մասին, հետաքրքրական է թէ՛ իր դրական եւ թէ՛ իր բացասական երեւներով:

Գրքոյի կը բովանդակէ ութ յօդուած: Առաջինը՝ ստորագրուած է Պէյրուքի Տիգրանց Գոյէճի պատմական բաժնի վարիչ՝ Տ. Ոսկեանի կողմէ, ուր շեշտը կը դրուի Հեղինակի նպատակին վրայ, որ է՝ ծանօթացնել Հայ ժողովուրդին մեծութիւնը օտարաշայու սեմին կանգնած սփիւռքահայերուն, եւ

յստեղծ հաղորդակից դարձնել Հայ արժեքներուն: Երկրորդը՝ Հեղինակին կողմէ զըրուած խոստովանութիւն մըն է, ուր կը ներկայացունեն այն պարագաները, որոնք առաջնորդեցին զինք իր բացարձակ անտարբերութենէն դէպի ամբողջական պաշտամունքը Հայ ժողովուրդին: Երրորդը՝ Հեղինակին յառաջաքանն է, իր ուսումնասիրութիւններուն ծնունդ տուող պատճառները լուսարանող. այստեղ Հեղինակին համար այս շորս մեծ հայերը բացած են նոր հեռանկարներ, որոնք պիտի առաջնորդեն զինք դէպի լուսաւոր դազալներ, ուր միայն կարելի կ'ըլլայ յարաբերութեան մէջ մտնել տիեզերական գեղեցկութիւններու հետ»:

Մեկնելով այս մտահոգութիւններէն, Հեղինակը կը ներկայացնէ իր «չորս մեծերը»: Մեսրոպ Մաշտոց առաջինն է այդ քառեակին, որովհետեւ ան Մովսէսն է Հայ ժողովուրդին՝ իր տուած ՅՅ պատուիրաններով, որովհետեւ ան այն աղամանդեայ ժայռն է, որուն վրայ զըրուած են Հայ մշակութիւնի հիմքերը: Կոմիտաս վարդապետ կը յաջորդէ անոր, որովհետեւ «Կոմիտասն է որ տուաւ Հայուն իր ներքին աշխարհին ձայնը, իր արիւնին ու Հոգւոյն Հնչիւնը, իր ազատչին երաժշտութիւնը»: Կոմիտասը ամբողջացնելու կուգայ Թորամանեան, որովհետեւ Հեղինակին բառերով, «Հայկական ճարտարապետութիւնը կը մարմնացնէ Հայ Հոգին, որ կը նայի վեր՝ աչքերը ուղղած երկնքին: Ինչպէս որ Կոմիտաս ցոյց տուաւ Հայուն իր Հոգւոյն ձայնը, նոյնպէս ալ Թորամանեան ցոյց տուաւ անոր իր Հոգւոյն տեսակը, ձեւը եւ կառոյցը»: Վերջինը այս մեծերուն՝ Անդրանիկն է. Հեղինակը զայն կը սեպէ «Հայոց Կարիպալտին», «Հերոսներոս Հերսը, որուն մահը չէր յանդգնէր մօտենալ», ու վերջապէս, «Ճնշուած ժողովուրդի մը ազատութեան համար մղուող պայքարին խորհրդանիշը»:

Եւ այս շորս մեծութիւններուն ներկրուած յօդուածներուն կարակացութիւնը կ'ըլլան Հեղինակին այս վերջին

տողերը:— Վէյր ժողովուրդը պիտի ապրի այնքան աստիճանով որ երկիրը, արեւը եւ աստղերը գոյութիւն ունին, որովհետեւ իր գարաւոր գոյութիւնը աշխարհին ուղղութեամբ բարձրաձայն յայտարարութիւնն է յափտեանական ճշմարտութեան, որուն համաձայն, վերջի վերջոյ, բարեին ուժերն են որ պիտի յաղթեն շարին ուժերուն»:

Տարբեր ինքիք է այն, թէ որչափ լիովին Վարժապետեան յաջողած է «մեծեր»-ու իր այս ընտրութեամբ եւ զանոնք ներկայացնելու իր այս ձեւով, ձուլման վտանգին տակ եղող սփիւռքահայր ժօտեցնել հայութեան: Իր արդի ամբողջ տարածքին, հակառակ իր դպացական այնքան լայն հարազատութեան, հեղինակը օտարականի մը ժօտեցումը ունի «չորս մեծերուն» եւ զանոնք ծնող հայ ժողովուրդին: Կը պատշտէ զանոնք ո՛չ թէ որովհետեւ անոնք իր սեփականութիւնն են, այլ անոր համար որ անոնք իսկապէս մեծութիւններ են, ու պատշտելի ունէ ծարուռ համար: Հայութեան հանդէպ սփիւռքահայր շատարական»-ի այս ըմբռնումը պէտք է աւելի եւս մանրամասնէր: Հեղինակին համար հայ ժողովուրդը գոյութիւն ունի, կարծես, իբրեւ մահացած մեծութեան մը արձագանգը, (նոյնիսկ երբ ազգապահպանումն է իր այս կրօնական նպատակը), որովհետեւ միշտ լիացած ժողովուրդի մը յատկութեամբ կամ յիշատակով է որ ան կը ներկայանայ հեղինակի մտածումներուն ու զգացումներուն: Տիկին Վարժապետեան իր հաստատումներուն մէջ կարծես կ'ուրուազծէ ազգ մը, որ այլեւս չունի ու պէտք ալ չունի նոր հետակարներուն, ըլլա՛յ այդ մշակոյթի կամ այլ մարդի մէջ, ինչպէս օրինակ՝ ազգային-քաղաքական գործունէութեան. որովհետեւ, «մեծերը» զորս կը ծանօթացնէ ընթերցողին, կարծես ժողովուրդի մը կարհիւթիւններուն վերջնական ծնունդներն են, եւ այլեւս անոնցմէ անդին չկան նոր հանդիսաններ ստեղծագործութեան, օւ պէտք ալ չկայ այդպի-

սի անկնկայութիւններու: Մեքրոպ Մաշատց մը իրեն համար արդէն տարած է հայ ժողովուրդը դէպի անմահութիւն. կոմիտասը հեղինակին համար արդէն սկիզբն է ու վերջը հայ երաժշտութեան, Թորամանեանի միջոցաւ արդէն կարելի է տեսնել հայու հոգին իր վերջնական դրսեւորումով. իսկ Անդրանիկով հայ յեղափոխական շարժումը արդէն իսկ պտած է իր կատարելութիւնը: Այս գիրքին մէջ ժողովուրդ մը կայ, որ կարծես չ'ապրի, այլ միայն կը հաստատայ ու կը սպասէ, առանց գործի:

Մարդը որուն սփիւռքահայ անունը կը տրուի, ըլլա՛յ այդ այս գրքոյի հեղինակին պարագային, ըլլա՛յ այդ անոր պարագային, որուն ուղղած է հեղինակը իր գործը, կը ներկայանայ շատարական»-ի մտայնութեամբ: Օտարական մը, որ թէեւ կ'ապրի իր առօրեայ տեսնական ու այլազան մասհոգութիւններով, բայց եւ այնպէս կը մերժէ այդ առօրեան: Այս գրքոյի կը վկայէ շատարական» սփիւռքահայուն մասին, որ հակառակ իր առօրեայ պահանջներու վերայ ձեւուած մտածելակերպին, կը մերժէ ինքզինք դասել մասնիկը այդ առօրեային. եւ ճիշդ այս պատճառով ան կը ժօտենայ հայ ժողովուրդին իբրեւ շատարական», որովհետեւ իր ամբողջութեան տէրը չէ, ամբողջութիւն՝ ներկայի, անցեալի ու ապագայի տեսլականներով:

Արդ, անհրաժեշտ էր ճշգիւլ, թէ ինչպէս այս օտարականը պիտի շարունակէ զարգացնել հայ ժողովուրդի աւանդական, անմիջական անցեալէն եկող տրպարը. պէտք էր զոնեւ այս երկուքի միջեւ գոյութիւն ունեցող ներքին ու արտաքին կապերը, եւ սփիւռքահայր սահմանել իբրեւ «ծանօթ» մը, որպէսզի «մեծերու» հանդէպ իրագործուած մտայնական իւրաքանչիւր ժօտեցում ըլլար ծանօթի, մտերմի մօտեցում, և աւելին՝ սեփականատէրի մօտեցում, այս մէկուն պարտադրած պահանջ անկեղծութեամբ:



**ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅՏԵՐՈՒ ՖՈՒՔԼՈՐԸ**

Երևանի մէջ, վերջերս, ազգագիր վերծիմիս Միգալեան լայն ըմբայած է Սոււտիայ շրջանի հայերու փոխարին լուսագոյն գործերը:

Սոււտիայ շրջանը կը գտնուի ամենապակաս Մուսա կերամ օտարաշէ (որ բքբակամ հողամաս է ներկայիս):

Վ. Միգալեան փոխարին այս նմայնները հաւաքած է երկրորդ աշխարհամարտէն ետք, Մեր-ձաւար Արեւիչի երկիրներէն հայրենիք վերադարձած սոււտիացիներէն:

Մուսա կեանքներու փոխարին բազմապարտան անցնալ ունի: Կը ճկարագրէ բազմաբնակու եւ գիւղերու կեանքն ու սովորութիւնները, շրջանի բուսական ու կենդանական աշխարհը:

Աւանդակներուն եւ ներխաբներուն մէջէն կը յայտնուի ժողովուրդին ամենու սերը գրականութեան հանդէպ:

Հաւաքածային մէջ գտնուած են առակներ, սատմներ, հանելուկներ եւ երգեր:

**ԱՐԱՐԱՅԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

Երևանի մէջ տեղի ունեցած է արարազէտներու համաթիւթենական երբորը համադրումը, որուն աշխատանքներուն ժամանակցած են Մուկուսյի, Լենինկրատի, Երեւանի, Պաքուի, Քիֆուի, Թաշկենտի, Տուշանքէի եւ արեւելահայաստանի սյլ կեդրոններու 150 զինականներ:

Նիտաը բացած է Հայկական Գիտութիւններու Ազգայնական անդամ Մ. Ազարյանը, որ նշան է, թէ այդ համաժողովը պատահաբար չէ նրախրուած Հայաստանի մէջ: Հայ-արարական օտերութիւնները եւ զինական կազմը զարտաւոր պատմութիւն ունին: Հանրահայտի, զիմիայի, աշխարհագրութեան, բժշկագիտութեան, Կենսագիտութեան եւ սյլ զինութիւններու բընագիտութիւն մէջ արար զինականներու հետ-

զօտութիւնները զալ ծանօթ էին միջնադարու հայ մատողներուն: Արար զինականներու բազմաթիւ աշխատութիւններ՝ արժէքաւոր արեստիւր կը պահպանեն հորհրդային Միութեան ժողովուրդներու մասին:

Այդ կազմերը, նշած է ակադեմիկոս Ալայ-եան, առանձնապէս ուսնողացած են մեր օրերուն: Արարական երկիրներուն մէջ ապրող հայերը զօրծնական կերպով կը մասնակցին այդ պետութիւններու տնտեսական, զինական եւ մշակութային կեանքին: Այս առնչութեամբ արար եւ հորհրդային ժողովուրդներու յարաբերութիւններու ուսումնասիրումը կը հանդիսանայ Խորհրդային Միութեան արարազէտներու կարեւորագոյն խնդիրներէն մէկը:

Համաժողովին մէջ արարներէն լեզուի եւ դըրականութեան հարցերու զինուարմանը ու հաղորդումներով հանդէս եկած են Խորհրդային Միութեան արեւելահայաստանի խոշորագոյն կեդրոններու զինականները:

Գլխաւոր հարցերէն մէկը, որոնցմով կը զբաղուին հայ արարազէտները, արարական երկիրներու ներքին կեանքի եւ միջազգային յարաբերութիւններու ուսումնասիրումն է: Արդէն իսկ հայերէն հրատարակութեան կը պատրաստուի Սուրիոյ Նորագոյն պատմութեան արարագծեր (1916-1968 թթ.) մենագրութիւնը: Լոյս կը տեսնէ նաեւ զՄիջազգային յարաբերութիւնները Արարական Արեւելքի մէջ Երկրորդ Աշխարհամարտի արարներուն աշխատութիւնը:

Մաս ժամանակներս Պէյրութի մէջ լայն կը տեսնի զԱրարներէն-Հայերէն Բառարանը, զոր կազմած են Երեւանի արարազէտները:

**ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՑԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ ՖՐԵՋՆՈՑԻ ՄԷՋ**

Ֆրեզնայի մէջ նոր բացուած հայկական շքու մայրաքաղաքներէն մէկը կոչուած է աշխարհառնայի հայագրի գրազէտ-քառերագիր Ուիլիլմ Սարոյեանի անունով:

Ուիլիլմ Սարոյեան ֆրեզնո ծնած է եւ միջին հիմա կը բնակի իր ծննդավայր բազմաթիւ մէջ, ուր տուած է բազմաթիւ զաւարտութիւններ:

**Օր. ՎԱՐԴՈՒՀԻ ՃԵՂԱԼԵԱՆ**

Փարիզի «Քալֆուր» օրաթերթը՝ հիանալի-  
լով Օր. Վարդուհի Ճեղալեանի լեզուակն ու  
բանասիրական արժանիքները, զայն պատուակալ  
թղթակից նշանակած է իր գեղարուեստական  
բաժնին:

Օր. Ճեղալեանի առաջին յօդուածը լոյս ած-  
ած է Վ. Բարսու. աւելի քան 2000 տարուան  
ժողովուրդի մը հարց խորագրով:

**ՕՐ. ՍՈՆՈՒԱ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ  
ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ**

Փարիզակալ բերք ծանօթ երգչուհի եւ Սի-  
փան-կոմիտաս երգչախումբի մեներգչուհի Ան-  
նիս Նիկողոսեան փարիզի Պետական կրթչա-  
նոցի առաջին մրցանակին արժանացած է:

**ՄԻՀՐԱՆ ԳՈՃԵԱՆ  
ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՍԵՆՑՈՆԻԿ ՆՈՒԱԳԱՅՈՒՄԻՍԻ  
ՔՈՆՍՐԵՐԹԱՍԹԸՐ**

Լիբանանեայ տաղանդաւոր ջութակահար  
Միհրան Գոճեան, վերջերս ընտրուած է Աւս-  
տրալիանի տաղանդաւոր ջութակահար-  
թեր:

Այս առթիւ, ամերիկեան թերթերը հրատա-  
րակելով Գոճեանի լուսանկարը՝ տուած են կեն-  
սագրական ծանօթութիւններ եւ անոր նուիրած՝  
զնաւասական առջից:

Միհրան Գոճեան եղբայրն է Նոյնպէս տա-  
ղանդաւոր ջութակահար Վարուժանի:

**ԿՈՄԻՏԱՍ ՎՐԻՒԻ 100-ԱՄԵԱԿԸ  
ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ**

Յունիս 27-ին, Նիւ Եորքի հայութիւնը, Գա-  
լաթիւնեանքանք Հայ Մշակութային Միութեան,  
«Թասն Հոյ»-ի մէջ, նոյն յայտագրով մը տօնած  
է մեծածառ եւ տնկում վարդապետին՝ կամը-  
տասի ծննդեան շարիւրամակը: Սրանք ծայրէ

ի ծայր լեցուած է, առաւելաբար երիտասարդ-  
ներով:

Ամիսի, իմաստալից ու տպաւորիչ ճառով  
մը, Պր. Բիւզանդ կուսնեան խօսած է հայ մշա-  
կոյնի եւ մտանաւորարար կոմիտաս վարդապե-  
տի մասին, աշով անոր կենսագրական գիծերը  
ու գործունէութիւնը: Նաեւ իր տեղը մեր մշա-  
կոյնի անդտատանին մէջ:

Մենք, զուգարգ, խորհրդապատկեր, ըն-  
թերցում, պար եւ խմբերգ մաս կազմած են գե-  
ղարուեստական նոյն յայտագրին:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՅՔ  
ՀԱՐՎԸՐՏԻ ՀԱՄԱԼԱՍԱՐԱՆԸ**

Այս տարի Հարվըրտ համալսարանի հայ-  
դիտական ամպիոնը, ուր կը զատուանդուին  
չորստար, ժամանակակից արեւմտահայերէն, ժա-  
տնագրութիւն եւ հայագիտական այլ առարկա-  
ներ, սկսած է նաեւ հայկական քաղաքակրթու-  
թեան նուիրուած զաւընթացք մը, որ կ'ընդ-  
ղըրկէ հայ ժողովուրդի պատմութիւնը ընդհան-  
րապէս եւ հայկական արուեստներու եւ զբոսկա-  
նութեան պատմութիւնը ժամանակագրապէս, Շե-  
զոյն ժամանակներէն մինչեւ 19-րդ դար:

Դասընթացքը կը վարէ անգլիացի հայագէտ  
Փրոֆ. Հաուըրս Թոմսըն:

**ԵԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԻ. ՊԶՏԻԿԵԱՆ  
ՅՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԳԵՄԻԻ ՈՍԿԱՅ  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ**

Ծրամական Ակադեմիան, իրեն ներկայաց-  
ւած հագարտար նկարչական գործերու մէջէն  
մրցանակի արժանի նկատած է Վենետիկի Մի-  
քայրեան ուխտէն Հ. Յարութիւն Վր. Պարիկ-  
եանի մէկ գծագրութիւնը, զոր Ակադեմիան ներ-  
կայացուցած է նկարիչ Զարեհ Մուշտֆեան:

Ակադեմիան վարդապետը պարգևատրած է  
«Քեղարուեստի ճիւղի» փարիզ քաղաքի ասկեայ  
շքանշանով:

Գաղտնէն ետք, Հայր Պարիկեան երկրորդ  
հայն է, որ կ'արժանանայ այս պատիւին:

## **ՇՆՈՐՀԱԿԱԿՈՒԹԵԱՄԲ ԾՏԱՑԱՆԲ**

ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԳԻԱՊԵՏ՝ հայ երաժշտության առաջնայր (ուսումնասիրություն). Գարեգին Եվիսկոպոս, Պէյրուք, 1969

ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ուսումնասիրություն), Բարգէն Վրդ. Թօփեան, Պէյրուք, 1969

ԿԱՊՈՅՏ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ (պատմաւածքներ), Արմէն Տօնոյեան, Պէյրուք, 1969

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵԱՂԻԿՆԵՐ (քանաստեղծութիւններ), Ռիմա Գառօնէ, Թեհրան, 1969

ՏԱՐԵԳԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԵԲԵՆԱՆ 22 Լ. 00ԳԻ  
ՈՐՏՈՒՈՒԼՄԱՆ 8 ՏՈՒՍԲ  
ՀԱՏԱԳՈՒՅՑՈՒ 2 Լ. 00ԳԻ



G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@